

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԿՅԱՆ

ԵՐԿՈՒ ՌԻՆՏԱՎՈՐ

Վեպ եռամսանյա

(ՄԱՍ Ա, Բ)



Ս. ԷԶՄԻՇՆԻՆ - 2007

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկեմասությամբ՝

**«ՄԵԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ» ԱՆՎԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

ՀՏԴ 24: 891.881-3 Սահակ Վրդ. Մաշայան

ԳՄԴ 86.3 + 84Հ - 4

Ս – 150

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆ

Ս – 150 Երկու ուխտավոր: Վեպ եռամասնյա. /Սահակ Վրդ. Մաշայան.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 186 էջ:

Տասնութերորդ դարի հայ եկեղեցու երկու կարկառուն դեմքերը՝ Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր պատրիարքները, իրենց առասպելական առաքելությանը անմոռանալի հետքեր թողեցին մեր կրոնական և ազգային պատմության վրա: Հրաշագործ Վարդան վարդապետին աշակերտած այս երկու գաղափարակից վանականների փոթորկալից կյանքը մեծ դասեր է պարունակում բոլոր ժամանակների հավատացյալ ուխտավորների համար: Սահակ վարդապետ Մաշայանը, նրանց կյանքի լուսեղեն հետքերին հետևելով, մեզ է մատուցում հետաքրքրական մի պատմավեպ, որ մեր կրոնական գրականության համար նորություն է նկատվում՝ իր միստիկական սխրանքով և երևակայական պատկերազարդումներով: Վեպը գրվել է արևմտահայերեն. արևելահայերենի վերածումը Հրատարակչական բաժնի:

ԳՄԴ 86.3 + 84Հ - 4

ISBN 978-99930-75-61-5 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

© Սահակ վարդապետ Մաշայան, 2007 թ.

Այս վեպը
Զոնում եմ
Մտաբանընտանացուքի
հանգուցյալ Հայոց պարբերաբ
և իմ հոգևոր ծնող
Երասնաշնորհ
Տեր Շնորհք արքեպիսկոպոս Գաղաթայանի
պայծառ և անմար հիշարանին,
որ եղալ հալաբարիմ հեղևուրդը
այս գրքի երկու հերոսներին

ՄԱՍ Ա
ՀՐՈՎ ՄԿՐՏՎԱԾԸ

ԵՐԿՈՒ ԾԱՄՓՈՐԴ

1 706 թվականի Զատիկից անցել էր երկու շաբաթ: Տարոնի զմրուխտ հովիտները բազմատեսակ ծաղիկներ էին ծնում: Արևն արդեն վաղո՛ւց, քրիստոսանման հարություն առած, առատաձեռնորեն հարություն էր բաշխում բոլոր արարածներին: Ամայի տարածուծյան մեջ՝ մի արահետի վրա, կողք կողքի միջին տարիքի երկու մարդ էին քայլում և խոսակցում: Եթե մոտիկից լսեինք նրանց սաձները, ապա կհասկանայինք, որ սաղմոս են փոխասում՝ մրմնջալով.

– «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն»:

– «Յիշեա, Տէր, զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա»:

Նրանք վարդապետներ էին՝ սև սքեմներով, և զնում էին դեպի Ս. Կարապետ վանքը: Վաղ առավոտյան ճամփա էին ելել հայկական մի գյուղից, ուր երկու օր շարունակ հյուրասիրվել էին տեղի քահանայի կողմից: Ավելի քան մեկ տարի է, շրջում էին զանազան վանքեր՝ փնտրելով մի մնայուն վայր՝ հաստատվելու և իրագործելու իրենց ասպարեզի կոչումը: Նրանք սնվել և մեծացել էին Ամրդուլի հոչակավոր վանքում: Իրենց վանահոր՝ Վարդան վարդապետի մահից հետո, նոր վանահոր ընտրության ընթացքում պատահած անհաճո պայքարներից սրտնեղած, իրենց վանքը թողած, հեռացել էին խաղաղության այս որդիները: Նրանք երանելի վանահոր լավագույն աշակերտներն էին, և բնական է, որ նրանցից մեկը պետք է հաջորդեր նրան:

Բայց այնպիսի զրպարտություններ և բախումներ սկսվեցին պառակտված խմբակցությունների միջև, որ այս երկու մտերիմ նվիրյալները քաջ հասկացան, թե ով էլ ընտրվեր, միևնույն է, միաբանության մեջ գոյացած այս վերքերով ու գժտություններով իրենց հարազատ վանքն այլևս երբեք հին օրերի նման աղոթքի տուն չէր լինի: Այդ իսկ պատճառով, չլսելու համար եղբայրների կծու բամբասանքները, և հակառակ դրան, իրենց օրհնյալ վարդապետի հիշատակը և իրենց մանկության ու երիտասարդության քաղցր հուշերը՝ վանքի հետ կապված, միշտ պայծառ ու ջերմ պահելու համար թողեցին ու հեռացան այդ նվիրական վայրից:

– «Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց. եւ ընդ անօրէնս ես ո՛չ մտից»:

– «Ատեցի ես գժողովս չարաց. եւ ընդ ամբարիշտս ես ո՛չ նստայց»:

Անգիր գիտեին բոլոր սաղմոսները, շարականներն ու բազմաթիվ աղոթքներ, որովհետև, համաձայն այդ ժամանակների վանական սովորույթի, այս էր վարդապետից ակնկալված հմտությունը: Երբեմն լռում էին, սակայն այնուհետև կրկին սկսում էին սաղմոս ասել: Նիհարն ու բարձրահասակը, որ Գրիգոր էր կոչվում, մի քանի տարով ավագ էր մյուսից, որի անունը Հովհաննես էր՝ մարմնով տոկուն և զվարթ դեմքով մի անձնավորություն, որ վանք մտած ժամանակ տասներկու տարեկան էր: Իսկ վանքում արդեն չորս Հովհաննեսներ կային, Հովհաննեսը, պաշտելի անուն է հայոց մեջ: Քանի որ նրանց միջից փոքրագույնը և սիրելին էր նա, Վարդան վարդապետի կողմից սկսեց կոչվել «Կոլոտ» մականունով: Հասակ առավ, մեծացավ, վարդապետ դարձավ, սակայն «Կոլոտը» ընդմիշտ մնաց, մի բառ, որն իրականում չէր համապատասխանում միջին հասակով այս անձնավորությանը: Կան անհատներ, որոնց

հետ խոսելիս, նրանց՝ իրենց հասակից ավելի բարձր լինելու տպավորությունն է ունենում մարդը: Այդպես էր նաև մեր Կոլոտը: Ուստի բարդույթ չէր ունենում երբեք այս անունը կրելիս: Եվ ոչ ոք սույն բառը իր բուն իմաստով չէր գործածում, երբ «Կոլոտ» էր կանչում նրան: Նրանց համար աշխույժ, գեղեցիկ, մարդամոտ, անկեղծ, հարազատ, քաղցրախոս և դյուրահաղորդ մեկն էր այս «Կոլոտը»:

– «Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. եւ թէ ելից յանկողինս մահճաց իմոց»:

– «Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց կամ հանգիստ իրանացն իմոց, մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ»:

Գնում էին դրախտային տեսարանների միջով: Արևը շողում էր՝ առանց քրտնեցնելու, հովը փչում էր՝ առանց մրսեցնելու. գարունը վաղուց փռել էր իր ծաղկյալ գորգը դաշտերի վրա, և ծառերը հիշեցնում էին մինչև հորիզոն ծփացող ծաղիկների աչաշլաց մի ծովի: Հիասքանչ կանաչը, որ գարնան, ու նաև կյանքի, վսեմ դրոշակն էր, տիրում էր ամենուրեք:

– Ես կարծում եմ, որ օրը մթնելուց առաջ կարող ենք հասնել վանք: Խավարին չենք մնա, հուսով եմ:

– Ո՛չ, չեմ կարծում, տեր հայրը ասաց, որ հանգիստ քայլելով կարող ենք հասնել երեկոյան: Խավա՛ր, խավա՛ր, խավա՛ր ասացիր:

Կարծես թե մի շատ կարևոր բան հիշելով՝ Կոլոտը հանկարծ կանգնեց, դարձավ դեպի Գրիգոր վարդապետը, թևից բռնելով և երեսին նայելով՝ ասաց.

– Երբ «խավար» ասացիր, երեկ գիշերվա երազս հանկարծ հիշեցի: Քեզ պիտի պատմեի, սակայն մոռացա: Միասին մի մեծ քաղաքի մեջ էինք. շուրջբոլորը եկեղեցիներով լի էր, սակայն բոլորն էլ կիսակառույց և կամ ավերակ վի-

ճակի մեջ էին: Հիշո՞ւմ ես, քեզ հետ վեց տարի առաջ Անի այցելեցինք: Նրան էր նմանվում, սակայն վստահ չեմ:

– Դու էլ ինձ նման Անին կարոտել ես: Եթե առիթ ունենանք, այս աշնանը մի անգամ ևս ուխտի գնանք: Ինչ որ է, չկտրեմ, խնդրեմ, շարունակիր:

– Մի մեծ և հոյակապ տաճարի առջև էինք: Տաճարը տանիք չուներ: Պայծառ ու լուսավոր կեսօր էր: Երանելի Վարդան վարդապետն էլ մեզ հետ էր: Մի մոմ բռնած ձեռքիս` ներս մտա վառելու: Սակայն երբ ոտքս եկեղեցու մուտքից ներս էի դնում, մի թանձր խավար էր դիմավորում ինձ, այնպիսի խավար, ուր շողի ոչ մի նշույլ չկար: Զարմանում եմ. «Ինչպե՞ս կլինի, – ասում եմ ինքս ինձ, – դուրսը կեսօր է, և տաճարը տանիք չունի»: Զգում եմ և լսում, որ տաճարը մարդկանցով լցված է, և խոսում են միմյանց հետ: «Հրահան չունի՞ մեկը», – բղավում են շատերը: «Դու մի վառիչ ունե՞ս», – հարցնում են մյուսները: Ես դուրս եկա, և ահա կեսօր է կրկին, և դու ասում ես ինձ. «Այս եկեղեցին եթե տանիք ունենար, ի՞նչ հոյակապ կլիներ, այդպես չէ՞»: Ես, զարմացած, կրկին` ներս մտա, և ահա կրկին` նույն կտրուկ խավարը: Նորից դուրս եկա` լուսավորություն: Շվարած և հոգնած` մոտեցա Վարդան վարդապետին և պատմեցի ամեն ինչ: Նա ժպտաց և ասաց ինձ. «Գիտեմ, եթե մենք չվառենք, ներսում գտնվողները լույս չեն ունենա»: Եվ այս ասելով` մի հրահան հանեց և վառեց մոմը` պատվիրելով. «Այժմ գնա՛ և լույսդ փոխանցիր նրանց»: Նորից ներս մտա. ամենուր խավար էր: Սակայն այս անգամ ուրախության մեծ աղմուկ բարձրացավ տաճարում: Բոլորը շրջվում են դեպի ինձ` վառելու համար իրենց մոմերը: Մոմերի պլպլացող լույսով լուսավորվեց տաճարը, և, ժողովուրդն իմ ետևից, դեպի խորան ուղղվեցինք: Տեսա, որ ամբողջական էր եկեղեցին` արդեն ամեն

ինչով, և պատրաստ էր՝ Սուրբ Պատարագ մատուցելու, կարծես, անմիջապես: Բայց զարմանահրաշ ուրիշ մի բան պատահեց եկեղեցու մի մասում. ճախակողմյան բաժինը խավար էր կրկին: Ճիշտ մեջտեղից՝ խորանից մինչև դարպաս, կարծես թանձր խավար էր տիրում: Այնտեղ նույնպես մարդիկ կային, նրանց ձայները լսվում էին, բայց չէինք կարողանում անցնել այդ կողմը և կամ մեր լույսը փոխանցել նրանց: Ես երազում հասկացա պատճառը և բարձրաձայն աղաղակեցի. «Լույսը դրսից պետք է գա, գնացե՛ք, Գրիգորը կանչեք, թող նա Վարդան վարդապետից վառի և ներս մտնի»: Եվ դու ներս մտար և ուղղվեցիր ճախակողմից դեպի խորան: Եվ ապա՝ նույն բանը տեղի է ունեցավ նաև այնտեղ, այսինքն՝ մի կատարյալ լուսավորություն: Բոլոր ջահերը, լապտերներն ու կանթեղները վառված՝ մի հոյակապ եկեղեցու վերածվեց նախկին ավերակ տաճարը: Ես մատովս դեպի վեր ցույց տվեցի. «Վերև նայիր, — ասացի քեզ, — տանիքը կերտվել է արդեն և զարդարվել տասներկու առաքյալների ոսկեգօծ նկարներով:

Մի պահ շունչ քաշեց Հովհաննեսը՝ հոգնած արագ պատմելուց, և հարցրեց.

— Ի՞նչ կասես այս երազի մասին:

Գրիգորը ևս ազդված էր երազից, բայց կատակի տվեց: Ճիշտ զգացումները դուրս տվող չէր նա Կոլոտի նման:

— Հովսեփ Գեղեցիկի երազներին է նմանվում: Այսինքն՝ մի թագավոր պիտի լինես մեր գլխին և կամ երկրորդ Լուսավորի՞չը պիտի դառնաս մեր ազգի:

— Մի նախանձիր, քեզ էլ նույն մակարդակի վրա տեսա, ինչպես պատմեցի:

— Շնորհակալ եմ, շատ առատաձեռն ես երազային շնորհաբաշխումներիդ մեջ, երախտապարտ եմ: Մի աղքատ մարդ գիշերը իր երազում տեսնում է սպիտակամորուք մի

ծերունու: Ծերունին ասում է, թե Աստծո կողմից է ուղարկված: Նրա աղոթքների համար իբրև պատասխան նրան շնորհվել է ինը ոսկի: Ինքը պետք է հանձնի քսակը: Մարդը հարց է տալիս. «Ինչո՞ւ, – ասում է, – ինը ոսկի և ոչ՝ տասը, քանի որ պիտի տրվեր, կլոր հաշիվ թող լիներ»: Ծերունին զարմացած ասում է. «Ես ի՞նչ անեմ, այսքանն է որոշված, ա՛ն և գոհացիր»: Մարդը համառ է սակայն: «Ո՛չ, – ասում է, – կա՛մ տասը կանես, կա՛մ չեմ վերցնի»: Ծերունին ստիպում է, բայց մարդը հրաժարվում է և սակարկում: «Առնում ես, չես առնում..»–ի վեճ է սկսվում երկուսի միջև: Այդ վիճաբանությունը ընթացքում մարդն արթնանում է և տեսնում, որ ո՛չ ծերունին կա և ո՛չ էլ դրամը: Աչքերը փակում է և ասում. «Շատ լավ, թող ինը լինի»:

Միասնաբար սկսեցին ծիծաղել: Այնպես լավ էր արձագանքում նրանց քաղցր և լիաթուք ծիծաղը ամայություն մեջ: Եթե մեկը լսեր նրանց մաքուր, կուշտ ու կուռ ծիծաղը, ապա անմիջապես կհասկանար, որ Աստված ուրախություն համար է ստեղծել համայն աշխարհը, և գարնան հիմնական կանչն է այս երջանկությունը՝ ուղղված ծաղիկներին, թռչուններին, մրջյուններին ու միջատներին: Ո՞վ կտեսներ ու կիմանար, թե այս երկու աշխարհուրաց վարդապետները իրենց հոգեհարազատության մեջ, այս մոռացված դրախտում, իրագործելու էին Աստծո կամքը. գոհ լինել ասլեղուց ու ժպտալ անհաշիվ, ինչպես դաշտի ծաղիկները ժպտում են կապույտ երկնակամարի ներքո, մոռացված մարդկանցից՝ միայն Աստծո համար և միայն հավետու Նրան:

– Սոված հավը իրեն ցորենի շտեմարանի մեջ է պատկերացնում:

– Թո՛ղ, կատակը մի կողմ, և ճիշտն ասա. Ի՞նչ ես մտա-

ծուճ երազիս մասին:

– Լավ երազ է, Իհարկե, բայց, ի վերջո, երազ է: Ոչ ոք չի ճանաչում մեզ այնպես, ինչպես հանգուցյալ Վարդան վարդապետը, որ հանրածանոթ հռչակ ուներ: Ի՛նքը միայն մեր ազգի համար կարող էր իրապես մի Լուսավորիչ լինել, սակայն, ցավոք, վաղ մահացավ խեղճը: Իսկ մենք դեռևս չկարողացանք մի վանք գտնել, որպեսզի մեզ ընդունեին ու տեղ տային՝ վերջապես մնայուն բնակություն հաստատելու: Երազներդ ճոխ են, սիրելի եղբայր, բայց իրականությունը՝ ժլատ մեր նկատմամբ, այդպես չէ՞:

– Ձմեռը հեռացավ, գարունը արթնացավ, Քրիստոսը մեր մեջ հայտնվե՛ց, հոռետեսությունը ետ փախավ, իսկ Գրիգոր վարդապետը չիմացավ, տխրե՛ց ու լա՛ց եղաւ, լա՛ց եղավ:

Կրկին կատակներ: Իհարկե, Գրիգորը լացող չէր և ոչ էլ՝ հոռետես: Պատասխանեց Հովհաննեսի ոտանավորին նույն ճարպկությամբ.

– Գրիգոր վարդապետը թևերը լայն բացե՛ց: Մանկան նման իր շուրջը պտտվե՛ց, Աստծուն փառք տվե՛ց, Կոլոտի պարանոցին էլ մի լավ ապտակ զարկե՛ց:

Ջարկեց և փախավ: Կոլոտը նրա ետևից սկսեց վազել: Բայց մյուսի սրունքները ավելի երկար էին, չկարողացավ հասնել նրան: Ետևից բղավեց.

– Այս արագությամբ դու նույնիսկ կեսօրվա ճաշին էլ վանք կհասնես, անկասկած:

Սա պարզապես մի պատրվակ էր՝ ծաղիկների առատ դաշտում ազատ–համարձակ վազելու՝ այրող փափազը հագեցնելու համար մանուկների նման: Որովհետև այդպես էր տնօրինել հզոր գարունը իր թարմացնող էներգիաներով՝ ներթափանցելով բոլոր արարածների և այս երիտասարդ վարդապետների երակների մեջ:

ԹԻԹԵՌՆԻԿԸ Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ

Կեսորվա ճաշի համար կանգ առան մի ծառի տակ: Մի փոքրիկ վտակ էր հոսում դեպի ներքև՝ իրենց ընթանալու ուղղությամբ: Հեռվում՝ ծառերի միջից, երևում էր մի գյուղ, դրանից պիտի անցնեին՝ իրենցից կես ժամվա հեռավորությամբ: Տոպրակներից հանեցին ճոխ ու տելիքներ, որովհետև Զատիկի տոնական մթնոլորտը տակավին շարունակվում էր հայկական գյուղերում, ուտելիքը առատ էր ու ամենուրեք՝ ճոխ: Ճաշից հետո մի քիչ պառկեցին ծառերի տակ. վայելում էին չքնաղ եղանակը: Քաղցր մի քուն եկավ՝ տիրելու նրանց կոպերին, բայց Հովհաննեսը Կոլոտի ուրախ ճիչով ընդհատեց մրավը:

– Նայիր, Գրիգոր, այս թիթեռնիկի գեղեցկությանը, նայի՛ր:

Իրենց կոթնած ծառից ներքև մի խոշոր և չքնաղ գեղեցկությամբ թիթեռ եկավ–թառեց Հովհաննեսի աջ թևի վրա: Սև հագուստի վրա ադամանդի տպավորություն էր թողնում իր ակնառու գույներով՝ կապույտ, դեղին և կանաչ:

– Գիտե՛մ, կրկին պիտի նախանձես, բայց Աստված ինձ ուղարկեց այս գեղեցկուհուն: Սա բարի մի նշան է. հաճելի բաներ պիտի պատահեն այսօր, այո՛, զգում եմ:

Հովհաննեսը իր թևերը չէր շարժում, որպեսզի թիթեռը չթռներ: Սակայն թիթեռն արդեն միտք չունեի ուրիշ տեղ գնալու, անշարժ քնի մեջ էր կարծես: Երբ Հովհաննեսը ձանձրացավ, իր մատով հպվեց նրան, որպեսզի թռչի–գնա: Բայց թիթեռը գետին ընկավ, մի քանի թրթռացումից հետո՝ անկենդան անշարժացավ: Կոլոտը ուշադ-

ըուծյամբ բռնեց նրան և իր ափի մեջ դրեց:

– Խեղճ թիթեռնիկը մեռավ, տեսնում ես, Գրիգոր: Մեռնելու համար եկել էր իմ թևի վրա:

– Է՛հ, Աստված քեզ մոտ է ուղարկել նրան, որպեսզի թաղումը կատարես, ի վերջո՝ քո պաշտոնն է, այդպես չէ՞: Հա՛, հա՛, հա՛:

Հովհաննեսը Աստծո հրահանգը կատարեց. մի փոքրիկ փոս բացեց իր աջ կողմում՝ թաղելու համար ննջեցյալը: Սակայն թաղելուց առաջ, իր ափի մեջ բռնած թիթեռի դիակը վեր բարձրացնելով, համլետյան մի հարցում ուղղեց.

– Արդյո՞ք դրախտի մեջ էլ թիթեռնիկները մեռնում էին: Գուցե մահ գոյուծյուն ուներ նաև Եդեմական պարտեզի՞ մեջ:

Գրիգորը չպատասխանեց, որովհետև գիտեր, որ Կոլոտը իրեն չէր ուղղել այդ հարցումը, պարզապես բարձրաձայն էր մտածում Վարդան վարդապետի այս աշակերտը: Բնուծյան մեջ ամեն ինչ մի հարցում և աստվածաբանական մի խնդիր կարող էր հարուցել իրենց մտքում: Վարդան վարդապետը իր լավագույն դասերը բնուծյան ծոցում էր բացատրում նրանց, և Կոլոտի արթուն միտքը շատ լավ յուրացրել էր այս մեթոդը: Գրիգորը շտկվեց իր պառկած տեղից: Հարցումը գրգռել էր նաև իրեն և առանց մտածելու հայտնեց իր կարծիքը.

– Եթե մահը մարդո՛ւ մեղանչումով աշխարհ մտավ, ապա թիթեռնիկները և առհասարակ կենդանիները չէին մեռնի:

– Իսկ բույսե՞րը, նրա՞նք էլ չէին մեռնի:

Գրիգորի ճակատը կնճռոտվեց, գլուխը խառնվեց: Կոլոտը շարունակեց իր մտածումների շղթան բացատրել.

– Տեր Աստված Ադամին և Եվային ասաց. «Պարտեզի

բոլոր պտուղներից կարող եք ուտել»։ Ի՞նչ կլինեն պտուղներն ուտելու ժամանակ։ Ձեմ կարծում, որ նրանք ողջ մնային։ Հետո նույնպես Աստված ասում է Ադամին. «Բարու և չարի գիտություն ծառից չուտես, որովհետև կերածդ օրը մահով պիտի մեռնես»։ Ասա ինձ, որտեղի՞ց գիտեին, թե ի՞նչ ասել է մահ, և ի՞նչ կանի այն մարդուն։ Ո՞րտեղ էին տեսել մահը, որ այս գաղափարը օտար չէր նրանց, և լավ հասկացան, թէ հրամանը ին՞չ բան է ակնարկում։ Նրանց շուրջը անասուններն անպայման մեռնում էին, և նրանք վկան էին դառնում դրանց վախճանին, ինչպես մենք՝ այս թիթեռնիկի։ Հետո, ապականացու մարմինները միայն ուրիշների մահվան շնորհիվ են կենդանություն ստանում։

– Իսկ առյուծը արդյոք կուտե՞ր գառնուկին եղեմական այգում։

Գրիգորի այս հարցումից այս անգամ Կոլոտի ճակատը պրկվեց։ Մի պահ մտածելուց հետո տվեց իր պատասխանը.

– Այո՛, կուտեր։ Եթե չուտեր, առյուծը առյուծ չէր լինի, այլ մի ուրիշ անասուն։ Նրա ատամները և թաթերը ստեղծված են գառնուկ ուտելու համար։

– Քեզ հետ համամիտ չեմ, սիրելի եղբայր, որովհետև մենք դրախտի մասին ենք խոսում, այսինքն՝ կատարյալ խաղաղության և համերաշխության մի վայր, որտեղ մեզք և անեծք կամ վայրագությունն հազիվ թե գոյություն ունենար։ Քրիստոսի Երկրորդ Գալուստից հետո կրկին պիտի վերահաստատվի նման մի դրություն աշխարհի վրա, ու սրա մասին մարգարեությունը լավ գիտես. «Պիտի չվնասեն իմ սուրբ լեռան վրա, և առյուծը խոտ պիտի ուտի՝ նման ոչխարին»։

– Այո, մարգարեությունը դու բառացի ես մեկնաբանում։ Հավանական է, որ այլաբանական կամ բանաստեղ-

ծական մի արտահայտություն է ասվածը, ինչպես բազմաթիվ պատկերները Հայտնության Գրքի:

Հասկացան, որ վիճաբանությունը դեռ երկար պիտի տևեր՝ նոր հարցումների համար դուռ բանալով: Որոշեցին ճամփա ընկնել՝ և շարունակելով խոսել մահվան և կյանքի մասին, իսկ գարունը գալիս էր՝ հարստացնելով կյանքը հազարավոր մահերի և ծնունդների միջև:



ՈՒՐԻՇ ՄԻ ԹԻԹԵՌՆԻԿ ԵՎՍ

Որքան մոտենում էին գյուղին, այնքան պատկերներն էր հետզհետե ավելի ակնառու էին դառնում. հողեր, աշխատող գյուղացիներ ու այստեղ–այնտեղ արածող արջառներ: Հասկացան, որ քրդական մի գյուղ էր եղել այս մեկը, և ճշտեցին կրկին իրենց ուղղութիւնը: Իրենց ճամփան գյուղի եզերքով էր անցնում, հետևաբար, առանց այնտեղ մտնելու՝ շարունակեցին գնալ:

Հագիւլ անցել էին գյուղի սահմանը, երբ իրենց ետևից լսեցին ձիերի քառատրոփ, սրարչավ մոտենալը: Մի կողմ քաշվեցին այս սրնթաց հեծյալների ճանապարհից: Երեք ձիավոր, սակայն, կանգ առան նրանց առջև: Նրանցից մեկը անապարանքով ցած իջավ ձիուց: Կոշտ դիմագծերով և տխուր դեմքով հսկա մի քուրդ էր նա, աչքերը ուռած և երկար մորուքով, հաստ բեղերով և քրդերին հատուկ գլխարկով ու շորերով: Ակամայից սարսուռը պատեց վարդապետներին: Բայց հանդարտվեցին, երբ մարդը հայերեն բարևեց և աշխատեց ժպտալ: Վարդապետները հասկացան, որ այդ մարդը տառապում էր մի բանի պատճառով: Տարօրինակ չէր, որ այս կողմերի քրդերը հայերեն գիտեին: Շատ հայեր էլ քրդերեն գիտեին, ինչպես նաև Հովհաննեսը և Գրիգորը: Սակայն իրենց քրդերենը ավելի լավ էր, քան այս մարդու հայերենը: Նրանք քրդերենով պատասխանեցին, և մարդը ուրախացավ:

Քուրդը նրանց աղաչում էր, որ տուն դային և աղոթեին իր հիվանդ որդու վրա, որ արդեն մի քանի օր էր, ինչ անչարժ պառկած էր: Ոչ մի բժիշկ և դեղ չէր օգնել, և նրանց

կղերականների բոլոր աղոթքները իզուր էին անցել: Հուսահատ վիճակի մեջ էին: Ամեն մարդ ասում էր «գործ Աստուծո մնաց»: Երբ հեռվից նկատել էին հայ վարդապետներին, հույսի վերջին մի նշույլ էր ծագել իր որդու համար՝ նրանց աղոթքը: Հատկապես խոջաներից մեկը իբր «կախարդություն» էր որակել հիվանդությունը և այն լուծարելը՝ չափազանց դժվար: Այդ տգետ մարդկանց համար կրոնը առհասարակ նախաաշարումներից էր բաղկացած և հիմնված՝ վախի վրա: Նրանք հաճախակի էին լսում հայ վարդապետների կողմից անցյալում և ներկայումս կատարված հրաշքների մասին: Վանքերում, աշխարհից հեռու այս խորհրդավոր մարդիկ երկյուղ և հարգանք էին արթնացրել նրանց մեջ: Հավատում էին նրանց մեծ, կախարդական գորությանը:

Վարդապետները համաձայնեցին նրանց հետ գնալ: Ժամանակ կորցնելու պատճառ չկար: Մյուս երկու քրդերը իրենց ձեռքերը տվեցին վարդապետներին և արագ ուղղվեցին գյուղ: Գյուղի ամենից մեծ և քարեղեն տունն էր նրանց մոտք գործածը: Հասկացան, որ մարդը գյուղապետն էր և շեյխը՝ շրջակա ցեղախմբերի: Ներսից լսվում էր կանանց լաց ու կոծի աղմուկը:

– Ի՞նչու եք լաց լինում, – հարցրեց գյուղապետը՝ ավելի մտահոգված:

– Շնչառությունը հետզհետե նվազում է, շեյխ իմ, – պատասխանեց միջին տարիքի մի կին՝ երեխայի մայրը:

Երեք կին ունեք շեյխ Մահմուդը և ինը զավակ, միայն մեկը՝ արու: Հետևաբար, պարզ էր շեյխի՝ խուճապի և կսկծի մատնվելու հիմնական պատճառը. մեծ ողբերգություն էր տասնչորս տարեկան միակ ժառանգի մահը իր համար:

Տղայի մոտից դուրս հանեցին բոլորին՝ թողնելով միայն

նրա հորն ու մորը, ինչպես Հիսուսն էր արել: Անուշադեմ մի մանուկ՝ նիհարած, գունատ և գրեթե անշունչ պառկած էր: Կանայք լաց լինելու իրավունք ունեին. մանուկը մահամերձ էր, իր կյանքի վերջին վայրկյաններն էր ապրում:

– Երեք օր առաջ մի դող եկավ նրա վրա, սառը քրտինք պատեց և դրանից հետո անգիտակից վիճակում պառկած է այսպես, – շեյխը խոսեց արտասովելով:

Ուրիշ ոչ ոք չկար, հետևաբար հանգիստ լաց էր լինում: Այս խոժոռադեմ մարդու հորենական սիրտը այլևս չէր կարողանում զսպել ցավի պոռթկումը:

– Մի ուրիշ թիթեռնիկ ևս, – ասաց Կոլոտը, – այս գեղեցիկ գարնան օրը պիտի գտնի իր վախճանը, մեր ձեռքերում պիտի պատահի հոգեվարքը և կամ...

Եվ կամ հրաշքների Աստվածը իր բուժարար գորուծյունը պիտի շնորհեր մի անգամ ևս: Շեյխը հավատք ուներ և գիտեր, որ Աստված աղերսողին շնորհ էր բաշխելու առանց կրոնի, ազգի կամ դիրքի խտրականության: Նա հասկանում և զգում էր, որ այս տարօրինակ հագուստով սևազլուխ մենակյացները իրենց զարմանալի նվիրվածությամբ ուրիշ շնորհներ ունեին՝ Աստծո կողմից տրված:

– Ձեզ եմ տալիս հարստությանս կեսը, եթե բժշկեք միակ որդուս, – պաղատագին աղաչեց շեյխը:

– Մենք դրամ չենք վերցնի, որովհետև ինչ որ մենք ունենք, Աստծո կողմից է տրվել մեզ ձրիաբար, ուստի մեր աղոթքը գին չունի: Այն, ինչ որ պիտի տանք, Աստծուն և նրա Մեսիային է պատկանում, մե՛րը չէ:

– Մեզ համար մաքուր խմելու ջուր բերեք, օջախից՝ մի փոքր շիկածուխ և մի փոքր սեղան, – պատվիրեց Գրիգոր վարդապետը:

Այնուհետև իր տոպրակից ծալված մի փաթեթ հանեց, գետեղեց փոքրիկ սեղանի վրա ու բացեց: Մեջը ձեռաց

խաչ, Ավետարան և մի փոքրիկ ջրաման կար: Ձեռաց խաչը և ջրամանը Վարդան վարդապետն էր նրան հանձնել մեռնելուց առաջ, իսկ իր սրբատուփը՝ Հովհաննեսին: Հովհաննես վարդապետն էլ իր տոպրակը բաց արեց, որի մեջ կային Նարեկի աղոթագիրքը, մի սրբատուփ և խնկաման: Նրանք քաջ գիտեին, թե ինչ պետք է անեին այսպիսի պարագաներում: Գրիգորը ուշադրությամբ զննեց անկողինը և սենյակը: Սենյակի բոլոր մասերում զետեղված էին ամեն տեսակ նախապաշարումի և կախարդության բազմապիսի ուլունքներ, գրեր, կապույտ աչքեր, հատկապես անկողինը լցված էր դրանցով:

– Սրանցից որևէ օգուտ քաղեցի՞ք, – հարցրեց Գրիգորը շեյխ Մահմուդին:

– Ո՛չ, ո՛չ մի օգուտ: Բայց՝ մի փոքրիկ հույսի նշույլ, գիտե՛ք:

– Երբ ձեր հույսը այսպիսի բաների վրա եք դրել, ըստ մեր հավատքի, Աստծո շնորհից կբարկացնեք: Այժմ մենք կկանչենք Մեսիայի շնորհը, որը կարող է նույնիսկ հարուժյուն շնորհել մեռյալներին: Նա՛ պետք է շնորհ անի քո որդու համար, հակառակ, որ դուք այլ դավանանքի եք պատկանում: Որովհետև մեր Տերը չափազանց գթասիրտ է և ողորմած բոլորի հանդեպ և ասում է. «Ինձ մոտ եկողին ես ետ չեմ ուղարկի, ես եմ հարուժյունն ու կյանքը»: Ուրեմն պետք է որ այս բոլոր սնոտի առարկաներից իսպառ մաքրեք ձեր տունը և ձեր միակ հույսը նրա վրա դնեք: Հավատացողի համար ամեն ինչ հնարավոր է, և այս բանը անելով՝ պիտի փաստեք ձեր հավատքը:

Այս խոսքերը չավարտված՝ հեծկլտացող մայրն արդեն իսկ հապճեպորեն հավաքում էր բոլոր հուռուժները: Երբ այդ ամենը հավաքեց իր փեշի մեջ, բերեց վարդապետների մոտ:

– Այս ամենը տնից դուրս հանեք և խոստացեք, եթե ձեր երեխան բուժվի, այդ բոլորը այրել:

– Խոստանում եմ և երդվում, որ կայրեմ այդ ամենը: Միայն թե երեխաս առողջանա:

Խոունկ վառեցին, փոքրիկ ամանի մեջ ջուր լցրեցին: Գրիգորը խաչը վերցրեց, իսկ Կոլոտը Ավետարանը բացեց և կարդալ սկսեց բժշկության մի հատված: Այր ու կին ծնրազիր աղոթում էին լալագին: Ջուրն օրհնեցին և սրսկեցին պատերի ու անկողնու վրա: Հովհաննես վարդապետը թրջեց մանկան ճակատը: Կուրծքը բացեց և ս. Նշխար պարունակող մասնատուփը դրեց հիվանդի սրտի վրա: Նարեկը վերցրեց և սկսեց բարձրաձայն ընթերցել և այնուհետև գիրքը հիվանդի գլխի տակ զետեղեց: Գրիգոր վարդապետը «Փարատեա՛ զցաւս» աղոթքը արտասանեց և խաչակնքեց մանկան ճակատը, բերանը և սիրտը: Այնուհետև երկու վարդապետները ծնրազրեցին անկողնի երկու կողմերում և բարձրաձայն արտասանեցին Հիսուս Քրիստոսի անունը հիսուն անգամ՝ «Տէր, Ողորմեա»–ի հետ միասին: Կոլոտը արտասվում էր և աղոթում:

– Ո՛վ Տեր, թիթեռնիկը թող չմեռնի այս անգամ: Մի պոռտ ուրախություն առաքիր քո Արքայությունից: Գարունը թող գարուն լինի այս խեղճ ընտանիքի համար: Երբ կյանք ես տալիս ծաղիկներին, թող որ այս ծաղիկն էլ մի քիչ ևս ապրի: Ո՛վ Տեր մեր Հիսուս Քրիստոս, քո սուրբ անունը կանչեցինք, ցույց տուր Քո անվան զորությունը այս օտար մարդկանց: Թող տեսնեն, որ Դո՛ւ ես միակ կենդանի և կենդնություն տվող Աստվածը: Ո՛վ Եղիայի Աստված, կրակով ևս պատասխանիր մեր աղոթքին, կյանքի մի բոց առաքիր այս մանկան սրտին, թող կայծը վառի իր աչքերի մեջ կրկին, շունչը ե՛տ դարձրու նրան:

Հարուժյան մի շարական երգեցին և «Հայր մեր»–ով ա-

վարտեցին իրենց աղոթքը: Մանուկը հանկարծ շունչ քաշեց՝ լսելի բոլոր ներկաներին: Բայց հետզհետե կրկին նվաղեց շունչը: Բերանը բացված էր: Մնացած օրհնված ջրից մի շիթ կաթեցրին նրա բերանի մեջ: Արարողությունն ավարտելուց հետո հավաքեցին ու ծալեցին սրբազան պարագաները և կրկին զետեղեցին իրենց տոպրակներում:

Հիվանդի մոտ միայն մայրը մնաց, մյուսները զնացին այլ սենյակ, որտեղ պտուղներով սեղան էր դրված: Զոպացուցիչ թան հրամցրին վարդապետներին: Լուռ էին բոլորը: Մարդիկ իրենց անելիքը արել և ասելիքը ասել էին արդեն: Այժմ Աստված պետք է կատարեր իր անելիքը: Անատուրի բոլոր մարդիկ քաջ գիտեին, ո՛ր կրոնի էլ պատականեին, ինչպես Աստծո կամքին հանձնվել լույսյան, ամենից տառապալի և ցավագին պարագաներում անգամ: Լուսթյունը նշանակում էր՝ «Եղիցի կամք քո»: Բոլորին հասկանալի էր այս լուսթյան լեզուն:

Սակայն մի սուր ճիչ ընդհատեց պրկված լուսթյունը: Սարսափեցին բոլորը և գամված մնացին՝ երկյուղով պատած: Շեյխի աչքերում նշմարելի էր վախի զգացումը: Մեծ աղաղակով հիվանդասենյակից դուրս եկավ մայրը: Բղավում էր խենթի նման, բայց դեմքը ուրախ էր:

– Աչքերը բացե՛ց, աչքերը բացե՛ց, «Մայրիկ, ջուր տուր» ասաց:

Սմբած շեյխը կարծես ժայթքեց իր նստած տեղից: Սեղանը տապալվեց, թանը թափվեց: Ներս խուժեց հիվանդասենյակ և նա էլ սկսեց բղավել: Բոլորը շտապեցին մանկանը տեսնել: Բայց անհնար էր տեսնել, քանի որ շեյխը իր խոշոր մարմնով այնպե՛ս էր փաթաթվել որդուն, որ երեխան անհետացել էր նրա գրկում: Մայրը անընդհատ հարվածում էր Մահմուդին, որպեսզի նա բաց թողնի երեխային:

– Մի՛ սեղմիր այդպես, կվնասես, կողքի քաշվիր:

Երբ Մահմուդը թողեց երեխային, այս անգամ արդեն ինքը՝ մայրը փաթաթվեց նրան: Այդ պահին շեյխը դուրս եկավ պատշգամբ, ձեռքի երկու հրացաններով միմյանց ետևից կրակեց օղի մեջ, այնուհետև հանեց ատրճանակը և նույնպես կրակահերթ տվեց: Ծառաները վազեցին՝ տեսնելու, թե ինչ պատահեց:

– Շուտ լուր տարածե՛ք ամենքին և ամեն տեղ: Ջեմալս առողջացավ, Ջեմալս բուժվեց: Թող յուրաքանչյուր ոք դադարեցնի իր գործը, սեղաններ պատրաստվեն, ոչխարներ մորթվեն: Այսօր տոն է, որովհետև որդիս մահվանից ետ վերադարձավ: Ուտենք, խմենք և զվարճանանք:

Վարդապետները միմյանց նայեցին ժպտալով և հիշեցին «Անառակ որդու» առակը, որտեղ հայրը տուն վերադարձող կորուսյալ որդու մասին ասում էր. «Ուտենք և ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորսված էր և գտնվեց»: Նրանք իրենց գործը լիուլի կատարել էին: Աննկատելի տանից դուրս եկան և արագ քայլերով հեռացան: Ուրախության անակնկալ հարվածի թմրությունից փոքր ինչ սթափվելուց հետո, Մահմուդը ամենուր տան մեջ սկսեց փնտրել վարդապետներին, բայց չգտավ: Հարցրեց շատերին, բայց նրանց պատասխանն էր՝ գնացին: Այդ պահին արագ կերպով ցատկեց իր ձիու վրա և վարգով հասավ վարդապետներին: Զիուց ցած իջավ և դիմեց նրանց.

– Ո՞ւր եք փախչում այսպես՝ առանց լուր տալու:

– Մենք դեռևս ճանապարհ ունենք գնալիք, մթնելուց առաջ մենք պետք է Սուրբ Կարապետ վանքն հասնենք:

– Ոչ մի տեղ չեք կարող գնալ, – ուրախ վրա բերեց Շեյխը և իր թևերի մեջ առավ երկուսին միասին ու գրկեց սրտագին, – դուք այսօր իմ սիրելի գերիներն եք: Ես ձեզ

այնտեղ կհասցնեմ ձիերով, հոգ մի արեք:

Վարդապետները քաջ գիտեին, որ իրենք սիրո գերիներ են: Այսպիսին էին Անատոլուի օրենքները: Մինչև շատ լավ չհարգվեն, փրկություն չկար այլևս իրենց համար: Տեսան, որ շեյխի երեսն էլ փոխվել էր, փայլում էր ուրախության լույսով: Քրիստոս ողորմացել էր այս մարդուն և օրհնել մի նոր կյանքով:

– Տեսածս այս հրաշքի վրա ես կրոնափոխ կլինեի, բայց չեմ կարող, ներեցե՛ք ինձ: Բայց պիտի աղոթեմ Հիսուս Քրիստոսին մինչև կյանքիս վերջը, որովհետև իմ աչքերով տեսա նրա գործությունը: Իմ կյանքում երբե՛ք չեմ տեսել, որ մի աղոթք այսպիսի պատասխան գտնի: Իսկ գալով ձեզ՝ ոսկիների մեջ պիտի խեղդեմ, ու եթե ամուսնանաք, աղջիկներս կտամ ձեզ:

Վարդապետները ծիծաղեցին:

– Մենք աղքատության և կուսակրոնության ուխտ ենք արել, ու ինչպես քիչ առաջ ասացինք՝ չենք կարող քեզնից փող վերցնել այս հրաշքի համար: Եթե վերցնենք, ապա հիվանդությունը կրկին կվերադառնա երեխային և կամ մեզ կփոխանցվի: Մեզ տրվելիքը դու աղքատներին տուր:

Սեղանի պատվո հյուրերն էին երկու վարդապետները՝ շեյխի աջ և ձախ կողմերին բազմած: Ջեմալն էլ ներս մտավ գիշերանոցով: Տեղ բացեցին նրա համար գետնի սեղանի վրա: Հացի մի պատառ կտրեց և այն պահին, երբ ցանկանում էր դնել բերանը, Գրիգոր վարդապետը սաստեց.

– Ո՛չ մի բան չուտես, վնասակար է այսօր:

– Ինչո՞ւ, առողջ է տղան և անոթի, ամեն ինչ կարող է ուտել, – ասացին սեղանի շուրջ նստածները:

– Ո՛չ այսօր, – պատասխանեց վարդապետը, – օրերով ոչինչ չի կերել ու այժմ եթե ծանրամարտ բաներ ուտի, կվնասի ստամոքսը և կհիվանդանա կրկին: Թող միայն ա-

պուր խմի այսօր, թան և պտղահյութեր, այն էլ՝ կամաց-կամաց, ումպ առ ումպ:

– Վարդապետի՛ն լսիր, տղա՛ս, – ասաց շեյխը, – նրա բոլոր ասածները ճշմարի՛տ են:

Ուրախ-զվարթ խոսակցությունների ընթացքում սեղանակիցներից մեկը դարձավ դեպի Ջեմալը և հարցրեց.

– Է՛, Ջեմալ, մյուս աշխարհ գնացիր և ետ եկար, ի՞նչ տեսար այնտեղ, հուրիներ տեսա՞ր:

– Ոչինչ չեմ հիշում, – պատասխանեց Ջեմալը, – միայն թե ճերմակազգեստ մեկը արթնացրեց ինձ: Ճերմակ մորուք ուներ, բայց շատ ծեր էլ չէր: Այս վարդապետների նման էր հագած՝ նույն գլխարկով, բայց՝ ճերմակ: Իմ կողքը հրելով՝ արթնացրեց ինձ «գյավուրների կուռք»-ով՝ բռնած իր ձեռքում (խաչին իսլամներն այդպես են անվանում):

Կողքին նստած մարդը սաստեց մանկանն այդ բառի համար՝ ամաչելով վարդապետներից: Բայց տղան ուրիշ բառ չգիտեր խաչի համար, և սեղան նստողները ևս առիթներում այդ արհամարհական բառերով էին խոսում խաչի մասին:

– Որեւէ բա՞ն ասաց այդ մարդը, – հարցրեց հայրը:

– Ինձ մի գավաթ ջուր տվեց, ես էլ խմեցի: Հարցրեցի, թե ի՞նչ էր անունը: Ժպտաց և ասաց անունը... Է՛, հիշում էի, ի՞նչ էր, ի՞նչ էր: Հա՛, հիշեցի՛: Մի հայ ջրաղացպան կար, նրա անունն էր ասածը:

– Արթին վարպե՞տ, – հարցրեց շեյխը:

– Չէ, ես մանուկ ժամանակ՝ գետի մեջ խեղդվողը:

– Վարդա՛ն, – ասացին սեղանի շուրջ գտնվողներից մի քանիսը միաբերան:

– Այո՛, – գոռաց Ջեմալը, – Վարդանն ասաց միայն մեկ բառ:

Վարդապետների գրպաները իրենց ձեռքից ցած ընկան,

սառեցին, քար կտրեցին հանկարծ, միմյանց նայեցին շջմած: Սեղանակիցները նկատեցին այդ և հարց տվեցին.

Ո՞վ է Վարդանը:

– Մեր հանգուցյալ ուսուցիչը, – նույն պահին ասացին երկու վարդապետները, – մի սուրբ ու հրաշագործ վարդապետ էր:

– Էվլիան է եղել, – ասացին սեղանակիցները. նրանք իրենց սրբերին այդպես էին կոչում:

– Այն խաչը, որ գործածեցինք, նրա խաչն էր, և օրհնված ջուրը նրա ջրամանից տվեցինք Ջեմալի բերանը:

Մի երկյուղ պատեց բոլորին: Մի սուրբ բան չըջում էր իրենց շուրջը, և անդենականից մեկը այցելել և հավել էր իրենցից մեկին: Իրենք ականատես էին եղել այն բազմաթիվ հրաշքներից մեկին, որոնց մասին գրույցները լսում էին հաճախ, բայց երբեք չէին տեսել իրենց աչքերով:

Ուրախացան, կերան, խմեցին և պարեցին քրդերը՝ այր ու կին միասնաբար, որոնք Ալավի աղանդին էին պատկանում և ավելի մոտ էին համարվում քրիստոնյաներին և ավելի լայնախոհ: Երբ մուլթն ընկավ, շեյխ Մահմուդը իր տված խոսքը հիշեցրեց նրանց: Ձիերով առաջնորդեցին վարդապետներին, ջահերի և լապտերների ուղեկցությամբ: Ով որ ձի ուներ, մասնակցեց թափորին: Ճանապարհն անգիր գիտեին արդեն: Ոգելից խմիչքի պատճառած ուրախ տրամադրությամբ հաճախ կրակում էին օդի մեջ: Մշո Սուլթան Սուրբ Կարապետը հառնեց նրանց առջև: Լուսնի ճառագայթները արծաթյա երևույթ էին հաղորդել նրա խորհրդավոր պարիսպներին, պատերին, կամարներին և գմբեթին: Վարդապետները խաչակնքեցին երեսները և փառք տվեցին Աստծուն՝ այս անակնկալ և անմոռանալի օրվա համար:

ՎԱՆՔԻ ԾԱՆԱՊԱՐՀԸ

Վանքի դռները վաղուց փակված էին: Մեծ դարպասը ուժգին բախեցին: Քիչ անց կողքի՝ փոքր, երկաթյա դռան վրայի ճաղավոր պատուհանը բացվեց ճռռոցով: Պահակ միաբանը հարցրեց, թե եկողներն ովքեր են:

– Մենք Ամրդուլի միաբաններ ենք: Ես՝ Գրիգոր վաղապես Շիրվանցի, և եղբայրս՝ Հովհաննես Կոլոտ վարդապետ Բաղիչեցի, երանյալ Վարդան վարդապետի աշակերտներն ենք: Ձեր վանքն այցելել էինք ցանկանում, ուխտի եկանք:

– Մի քիչ ուշ է՞: Ովքե՞ր են այս գինյալ մարդիկ:

– Բարեկամ քրդեր են, իրենց գյուղում հյուրասիրվեցինք, մեզ ընկերակցեցին:

– Այսինքն, ասել կուզի, որ երեսուն քրդեր մինչև վանք ձեզ բարի ճանապարհորդություն մաղթելու համա՞ր են եկել: Շատ հավատալի չի թվում:

– Պատմությունը երկար է, բայց ճիշտ այդպես է պարագան, վախենալիք ոչինչ չկա:

– Ձեզ մի հարցում անեմ, – ներսից ասաց դեմքը անտեսանելի միաբանը, – քանի որ դուք էլ վանական եք, իմ տեղը եթե լինեիք, ի՞նչ կանեիք, դուռը կբացեի՞ք:

Մի պահ երկու վարդապետները միմյանց նայեցին, ապա՝ իրենց շուրջը և հանկարծ նկատեցին իրենց հրամցրած տեսարանի տարօրինակությունը: Կեսգիշերին գինյալ քրդերը իրենց առջև են առել երկու վարդապետի, թերևս զենքի սպառնալիքով, և ամենից հարուստ հայ վանքի դռներն են ցանկանում բաց անել խորամանկորեն: Հայր այդքան ապո՞ւշ է: Սկսեցին ծիծաղել և ներսի պահակներին ասացին միաբերան.

– Զէի՛նք բացի, երբե՛ք, հազար անգամ՝ ոչ:

– Լա՛վ, հավատացի, որ դուք հայ վարդապետներ եք, քանի որ սրանք էլ ձեր բարեկամներն են, կարող եք գիշերել նրանց մոտ, վաղ առավոտյան կհյուրընկալենք ձեզ մեծ սիրով: Այժմ՝ բարի գիշեր, Աստված օգնական:

– Ի՞նչ եղավ, ինչո՞ւ դուռը բաց չեն անում ձեր առջև,

– հարցրեց հարբած գյուղապետը:

– Վախեցան բացելու, իրավունք ունեն, շատ ուշ մնացինք: Վաղը ցերեկով պիտի ընդունեն մեզ, լույս աչքով:

– Ի՛նչ լավ լուր է սա: Մի գիշեր ևս պիտի վայելենք ձեր ներկայությունը: Եկե՛ք՝ գնա՛նք:

Առավոտյան ուշ արթնացան: Ամեն մարդ դեռ քնած էր, բացի կանանցից, որոնք մաքրություն և ճաշի պատրաստություն էին տեսնում: Սոֆիե խանումը, որ Զեմալի մայրն էր, երգելով աշխատում էր և հրամաններ տալիս կանանց և աղջիկներին: Երբ տեսավ վարդապետներին, ցատկոտելով վագեց նրանց մոտ և փաթաթվեց նրանց: Գիտեր, որ արտոնված չէր այս արարքը, եթե այր մարդ լիներ նրանց շուրջը, բայց տղամարդիկ մեջտեղ չկային, և իրենց համար այս հայրերն այլևս հարազատներ էին դարձել, ընտանիքի մեկ անդամը: Մյուս կանայք ևս եկան և անմիջապես շրջապատեցին նրանց և հավում էին վարդապետների հագուստներին և հետո իրենց երեսները քսում էին նրանց ձեռքերին: Փոքրիկ աղջիկներ եկան—փարվեցին նրանց ոտքերին: Սիրո և երախտագիտության օղակով շրջապատված վարդապետներն էլ լավ էին զգում իրենց: Այնուհետև սեղան հրավիրվեցին, և մի ամբողջ բանակ ծառայում էր նրանց շուրջը:

– Սուլթան լինելը, անշուշտ, այսպես պետք է լինի, – ասաց Կոլոտը:

– «Ով որ ինձ ծառայի, իմ Հայրն էլ նրան կպատվի», –

Հիսուսի այս խոսքերով պատասխանեց Գրիգորը:

Աղոթեցին, սակայն չէին ուտում:

– Ինչո՞ւ չեք ուտում, – հարցրեց խանումը:

Կոլոտը պատասխանեց.

– Որովհետև դուք նույնպես պետք է նստեք և մեզ հետ ուտեք: Անկարելի է այսպես՝ տասը կին մեր գլխավերևում սպասեն և մեզ դիտեն: Մեր հավատքն ասում է, որ նույն սեղանի շուրջ մարդիկ եղբայր և քույր կդառնան, եկեք–նստեք, խնդրեմ:

– Մեռնեմ ձեր հավատքին, – ասաց Սոֆիե խանումը և նստեց նրանց կողքին ու հրամայեց, որ բոլորն էլ նստեն: Մի ուրախ ու գվարթ նախաճաշ էր: Կանայք նրանց քրդերենի իմացուլթյան վրա հիացան: Վարդան վարդապետը ձեռնարկել էր Ավետարանը քրդերենի թարգմանել, բայց գործը անավարտ էր մնացել իր մահով: Իրենք էլ աշխատակցել էին՝ մշակված մի քրդերեն մեջտեղ հանելու գործին: Նախաճաշից հետո պետք էր գնալ: Կանայք տխրեցին:

– Շեյխը մեզ վրա կբարկանա, եթե լսի, որ, առանց իրեն լուր տալու, գնացել եք: Գոնե սպասեք՝ արթնացնեմ նրան:

– Հարկավոր չէ, քույր: Շատ հոգնած է խեղճը, օրերով չի քնել և երեկ գիշեր էլ՝ առավոտյան դեմ էր, որ պառկեց: Նա արդեն գիտի, որ մենք վաղ առավոտյան պետք է բաժանվեինք: Վանքը շատ հեռու չէ, այցելուլթյան կգանք ձեզ:

– Ինչ կլինի, գնալուց առաջ մեզ օրհնեցեք և՛ ա՛յն խաչով, որ հրաշագո՛րծ է:

Բոլոր կանայք ծնրադրեցին: Գրիգոր վարդապետը հանեց իր խաչը տոպրակից և մի «Պահպանիչ» կարդաց ու օրհնեց բոլորին և տունը: Սոֆիե խանումն արդեն երկու խոշոր տոպրակ՝ ուտելիքով լիքը, պատրաստել էր նրանց համար:

– Չենք կարող տանել սրանք, մեր տոպրակներն արդեն բավականին ծանր են:

– Ո՞վ ասաց, որ դուք պետք է կրեք այս ամենը և քայլելով գնաք: Եթե շեյխը լսի, մեզ կսպանի:

Սոֆիե խանուսը ծառաներին անմիջապես պատվիրեց, որ ձիերը բերեն, և մի քանի սպասավորների ուղեկցությամբ ճանապարհ դրեց՝ համբուրելով նրանցից յուրաքանչյուրի աջը:

Լույսով այլ էր Սուրբ Կարապետ վանքը: Աշխույժ էր՝ ուխտավորների բազմությունը և միաբաններով: Այս հսկա վանքն ուներ շուրջ երկու հարյուր միաբան, որոնցից իննսուները վեղարավոր հայրեր էին: Մի փոքրիկ բերդ էր հիշեցնում այս վաղեմի հաստատությունը՝ իր բազմաթիվ շենքերով, կամար կամուրջներով, մեծ եկեղեցիով, բարձր պարիսպներով և աշտարակներով: Նրանց մուտքը աննշմարելի էր եղել ուխտավորների բազմաթիվ խմբերի մեջ: Հյուրընկալ մի սարկավազ ողջունեց նրանց և ստուգեց նրանց ինքնությունը, նպատակները և մնալու ժամանակաչափը:

– Մենք ուխտի ենք եկել: Տասնհինգ օր մնալ և մատենադարանից օգտվել ենք ցանկանում: Կարելի՞ է, արդյոք, վանահորը տեսնել:

– Այսօր՝ չեմ կարծում: Եկեք՝ ձեզ մի սենյակ առաջնորդեմ, որ մի քիչ հանգստանաք և ձեր տոպրակները ցած դնեք: Վանահայրը ձեզ տեսնելուց հետո ձեր ապրելու տեղերի բուն կարգադրությունը կկատարենք:

Անմիջապես եկեղեցի մտան, աղոթեցին և փառք տվեցին Աստծուն՝ նրա բարեհաճ առաջնորդության համար: Շրջեցին Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված հնամենի վանքում, եղան գերեզմանոցում, որտեղ իրենց անուններով ծանոթ ինչ–ինչ սրբեր էին հանգչում: Մտան մատենադարան և հիացան ձեռագրերի ճոխության վրա: Կեսօրին

մասնակցեցին ճաշու ժամերգությանը, որ Հայ Եկեղեցու յոթ ժամերգություններից մեկն էր: Այս վանքերի մեջ սովորություն կար՝ օրը յոթ անգամ ժամերգություն կատարել: Չուզեցին միաբանության ճաշարանը մտնել՝ առանց վանահայր Կարապետ եպիսկոպոսի հետ տեսնվելու: Վերադարձան սենյակ և փառավորապես ճաշեցին Սոֆիե խանումի պատրաստած ուտելիքներով: Պառկեցին՝ քիչ հանգստանալու, բայց շուտով խորը քուն մտան, որ տևեց մի քանի ժամ:

Քնից արթնացան երեկոյան անակնկալ աղմուկից: Դրսում ինչ-որ բան էր կատարվում: Իրենց սենյակը վանքի հրապարակին նայող մի շենքի երկրորդ հարկում էր գտնվում: Ցած իջան և տեսան, որ հրապարակը լցված էր հարյուրավոր ոչխարներով և բղավող-կանչող հովիվներով: Բոլորը հավաքվել էին հրապարակի մոտ և կամ պատուհաններից դիտում էին այս տարօրինակ տեսարանը: Ծանոթ ձայն լսելով՝ նրանք շրջվեցին դեպի ձախ: Ահա՛, շեյխ Մահմուդը և Ջեմալը իրենց էին բարևում: Հայր և որդի բարձրացան նրանց մոտ և ջերմորեն ողջագուրվեցին: Վանահայրը նույնպես եկել էր՝ տեսնելու և տեղեկանալու, թե ինչ է պատահել: Երբ տեսավ շեյխին, մոտեցավ և ողջունեց՝ ասելով.

– Այս ի՞նչ վիճակ է, շեյխ Մահմուդ, հովիվները ճանապարհը չփոթե՞լ են, և այս հոտը ի՞նչ գործ ունի վանքիս մեջ:

– Մատաղ անելու եմ եկել:

– Ի՞նչ, այսինքն՝ այս բոլո՞րը:

– Այո՛, լուր չունե՞ս պատահածից: Այս վարդապետները չպատմեցի՞նք քեզ: Իմ միակ որդին՝ Ջեմալը, մահացու հիվանդությամբ էր տառապում: Այս վարդապետները, – իր ձեռքերը երկուսի ուսերին դնելով՝ ասաց նա – այս եր-

կուսը ադոթեցին, և որդիս հրաշքով փրկվեց մահվան ճիւղաններից: Ուխտ էի արել դեռ նրանցից առաջ, որ եթե որդիս փրկվի, նրա տարիքի ամեն մի տարվա համար տասը ոչխար մատաղ անեմ: Ջեմալս տասնչորս տարեկան է: Ահա՛ հարյուր քառասուն ոչխարներ ձեզ: Այս երկու եզն էլ վարդապետներիս համար է: Նրանք ոչ մի բան չընդունեցին ինձանից՝ որպես նվեր: Նրանց անուկով մորթեք և աղքատներին բաժանեք:

Ծեր վանականը զարմանքով և խորը հայացքով դիտեց այս երկու օտար վարդապետներին, մոտեցավ նրանց և ողջունեց: Երկուսն էլ խորին հարգանքով համբուրեցին նրա աջը:

– Աստված օգնական, Սրբազան Հայր, մենք Ամրդուլի միաբաններից ենք: Ես Գրիգոր վարդապետ Շիրվանցին եմ, իսկ իմ այս եղբայրը՝ Հովհաննես Կոլոտ վարդապետ Բաղիշեցին է, երանյալ Վարդան վարդապետի աշակերտներն ենք: Ուխտի եկանք:

– Ձեզ հետ ծանոթացել էինք արդեն, – ասաց վանահայրը՝ զարմանքի մատնելով նրանց, – երեկ գիշեր չե՞ք հիշում:

– Ուրեմն դո՞ւք էիք մեզ հետ խոսողը: Մենք պահապան միաբանն էինք կարծում:

– Այնքա՛ն աղմուկ հանեցիք, որ ողջ վանքը ոտքի կանգնեց, և ինձ էլ լուր տվեցին, բնականաբար:

Վանահայրը միաբաններից մեկին հրամայեց տեղավորել նվերները: Իսկ շեյխին և վարդապետներին հրավիրեց իր սենյակը՝ հյուրասիրության: Շեյխ Մահմուդը օտար դեմք չեր վանքի համար: Նրանցից էին գնում տեսակ–տեսակ ուտեստեղեն և, եթե հարկավոր լիներ, գործավորներ էր հայթայթում վանքի շինարարական աշխատանքների համար:

Երբ չեյի Մահմուդը մեկնեց, ավելի հանգիստ և մտերմիկ խոսակցություն ծավալվեց նրանց մեջ:

– Ամրդուլից ի՞նչ նորություններ ունեք, – հարցրեց Կարապետ վանահայրը, – մենք լսեցինք, որ Եղիա Բաղիչեցի վարդապետը ընտրվել է Վարդանի տեղը և Սուրբ Էջմիածին է մեկնել՝ ձեռնադրվելու եպիսկոպոս:

– Կնշանակի, որ, ի վերջո, կյանքի երազանքին տիրացավ, – դեմքը թթվացնելով՝ արտահայտվեց Կոլոտը, – մենք, ավելի քան մեկ տարի, որևէ կապ չունենք Ամրդուլի վանքի հետ: Մեծ գժտություններ և զրպարտություններ եղան հատկապես մեր հասցեին ուղղված, որ լավագույն և հաջողագույն աշակերտներս ենք համարվում հանգուցյալ Վարդան վարդապետի, և Գրիգոր վարդապետը առաջին թեկնածուն էր ընտրության: Եղիա վարդապետի քստմնելի մեքենայությունները զգվանքի հասցրին մեզ, և մենք կամավոր դուրս եկանք ընտրապայքարից և հեռացանք համալսարանից: Մի քանի վանքեր այցելեցինք մեր ճանապարհին՝ Ապահունիք, Վաղարշակերտ, Վիշապաձոր և Հոռոմոսի վանքերը, մի քանի ամիսներ անցկացրինք և դասավանդեցինք որոշ նյութեր: Այժմ մնայուն տեղ և որևէ միաբանություն չունենք: Ամրդուլ այլևս չենք կարող վերադառնալ, որովհետև Հայր Եղիան մեր ոխերիմ հակառակորդն է, որն ամեն ինչ արեց, որպեսզի հեռացնի մեզ Ամրդուլից: Եթե արտոնեք, մի քանի ամիս ձեր վանքի մթնոլորտը ևս չնչել ենք ցանկանում:

Միաբանական ներքին պառակտումները և գժտությունները օտար չէին այս փորձառու վանահայր սրբազանին: Լավ էր հասկանում այս երկու ուշիմ վարդապետներին, որոնցից շատ լավ տպավորություն էր ստացել և ջերմ համակրանքի զգացում էր տածում իր սրտում նրանց նկատմամբ: Ապագա էին խոստանում, և իր հարկի ներքո

միշտ տեղ կար այսպիսիների համար:

– Ձեր տունն է Սուրբ Կարապետը, ձեր ժամանակը օգտագործեցեք և ճանաչեք մեր վանքը և միաբանությունը: Թող նրանք էլ ձեզ ճանաչեն: Մի որոշ ժամանակ հետո ձեզ կներկայացնեմ միաբանական ժողովի նկատառմանը, և ձեր կարգավիճակը հայտնի կդառնա, կհստականա:



ՀՐԱՇՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Այդ գիշերը ողջ միաբանությունը մնաց ճաշարանում, որովհետև մեծ ցանկություն ուներ՝ լսելու հրաշագործ վարդապետներին: Գրիգոր վարդապետը իրենց ներկայացրեց և ծանոթացրեց միաբաններին և խոսեց Ամրդուլի վանքի և Վարդան վարդապետի մասին, բայց նպակահարմար չգտավ խոսել իրենց միջև ծագած խնդիրների մասին: Երբ հերթը հասավ կատարված հրաշքին, Գրիգոր վարդապետը խոսքը փոխանցեց Հովհաննես Կոլոտին, որովհետև ուզում էր, որ ունկնդիրները լավ տպավորություն ստանային, քանի որ վերջինիս լեզուն չափազանց գունագեղ էր: Կոլոտ վարդապետն իսկապես այնպե՛ս շքեղորեն ու դրամատիկ ներկայացրեց իրողությունը, որ ունկնդիրներից շատերը լաց եղան և փառք տվեցին Աստծուն՝ Առաքելական դարի այս հրաշքի համար: Երբ նա իր խոսքն ավարտեց, խորհրդավոր լռություն տիրեց ողջ սրահով մեկ: Ունկնդիրները զգացին, որ իրենց հոգին նույնպես գոհունակ է այդ գիշեր: Լռությունը խզվեց Հայր Թովմասի հարցադրումով, որն ուղղված էր Կարապետ սրբազանին:

– Աբբահայր, ինչպիսի՞ն է մեռյալների վիճակը մահից հետո: Իսկապե՞ս Վարդան վարդապետի հոգին էր հայտնվել: Բոլոր մեռյալները այս աշխարհի հետ կապ ունե՞ն, թե՞ միայն այդ բանը սրբերին է վերապահված: Մեռյալների հոգիները անգիտակից քնա՞ծ են, թե՞ արթուն, ինչպես երազային վիճակում գտնվողը:

– Համբերի՛ր, համբերի՛ր, Թովմաս վարդապետ: Մի շնչով ամբողջ մեկ տարվա դասընթացի հարցումները ներ-

կայացրիր: Այսօր, այս գիշեր, իհարկե, նպատակահարմար չեմ գտնում պատասխանելու: Միայն մեկ պատասխան կտամ քեզ: Ընդհանրապես աստվածաբանները միայն մեկ պատասխանի ետևից են ընկնում՝ մոռանալով երկրի և երկնքի անհամար հարստությունները: Բողոքականներն ասում են, որ միայն երկու վիճակ գոյություն ունի՝ դրախտ կամ դժոխք: Սակայն կաթուղիք ավելացնում է նաև քավարանը: Այսպիսով, այն վերածվում է երեք վիճակի: Իսկ մենք ասում ենք. «Չգիտենք, քանի որ սուրբ գրությունների մեջ բավարար չափով հայտնություն չկա այդ մասին, որպեսզի բոլոր ննջեցյալների համար մի ընդհանուր վարդապետություն զարգացնենք»: Երբ հարցումներդ էիր ուղղում, մի պահ Վարդան վարդապետի հետ զրույցս հիշեցի: Ես նույն հարցերն էի տվել նրան, իսկ ինքը՝ այնպիսի՝ համեմատություններ արեց, որ դրանից հետո այլևս նման հարցումներ անելու ախորժակ չունեցա:

Կարապետ սրբազանը դադար տվեց խոսքին ու օշարակ լցրեց իր համար: Կամաց–կամաց ըմպեց բաժակի պարունակությունը այնպես, որ ուղղակի համբերությունից հանեց ներկա վարդապետներին, որոնք, իրենց շունչը պահած, սպասում էին Վարդան վարդապետի տված պատասխանին, որ լուծելու էր հետմահու բոլոր հարցումները՝ նման Ալեքսանդր Մակեդոնացու սրին, որ մի հարվածով կտրել, դեն էր նետել Անկյուրիոնի անքակտելի հանգույցը: Բայց վանահայրը, չգիտես ինչու, չէր աճապարում: Այս անգամ էլ իր կողքին գտնվող վարդապետներին օշարակ լցրեց: Ի վերջո, ներկա վարդապետներից մեկն ընդմիջեց.

– Ի՞նչ է, այսպես ձգձգելով՝ տանջելուց հաճո՞ւյք ես ստանում, սրբազան: Մի՛ պայթեցրու մեզ. ի՛նչ ասաց Վարդան վարդապետը:

– Վարդան վարդապետի երկու լավագույն աշակերտները մեզ մոտ են: Թող որ նրանցից լսենք, թե իրենց վարդապետը ի՞նչ էր սովորեցնում այսպիսի խնդիրների շուրջ:

Բարի սրբազանը դիտումնավոր կերպով նորեկների վարկը ցանկանում էր բարձրացնել իր միաբանությունից աչքին: Գրիգոր վարդապետը սկսեց բացատրել.

– Հանգուցյալը այսպիսի համեմատություն էր անում. չգիտեմ, թե ա՞յդ է արդյոք սրբազան հոր ակնարկը: Ասենք, որ մյուս աշխարհում հոգևոր արարածներ կան և տեսնում են, որ մարդկանց հոգիները կորչում են հանկարծ և մյուս աշխարհ գնում: Այս պարագայում՝ մեր աշխարհն է, իհարկե, այս «մյուսը»: Եվ դրանից հետո երբե՛ք ու երբե՛ք նրանք լուր չեն ստանում կորուսյալ հոգիներից, և մեր աշխարհը անթափանցելի է դառնում այս արարածների համար: Միայն թե անհստակ որոշ բաներ լսել են մի շարք հրեշտակներից, թէ ոմանք երջանիկ են դառնում այնտեղ, իսկ ոմանք էլ՝ տառապում: Սա սխալ չէ: Սակայն այս արարածները, հենվելով այս ընդհանրական բացատրությունից վրա, այսպես ասած, անվիճելի վարդապետություններ են հորինում, համաձայն որի՝ կորուսյալ հոգիները աշխարհ կոչված մի տեղ են գնում՝ երկու հստակ բաժանումներով. ոմանք ծովի մեջ են բնակվում, ոմանք էլ՝ անապատի, ոմանք՝ բլեռներում, ոմանք էլ հասարակածային գոտում, ոմանք բարի են լինում, ոմանք էլ՝ չար, ոմանք միշտ երջանկություն մեջ են, ոմանք էլ՝ տառապանքի, ոմանք քաջառողջ են, իսկ ոմանք էլ՝ մշտապես հիվանդ վիճակում, ոմանք՝ միշտ հարուստ և կամ՝ բացարձակ աղքատ: Հարցադրումն այս է: Որքանո՞վ ճիշտ պիտի լիներ իրենց այս տեսությունը մեր աշխարհի և նրա բնակիչների վերաբերյալ:

– Ո՛չ մի առումով էլ ճիշտ չպետք է լինի, երբ որ նման

կացութիւնը բաժանող երկու հոգի անգամ չեք կարող գտնել աշխարհիս վրա, ո՞ւր մնաց հնարավոր լինի յուրաքանչյուր բարդութիւն բաժանել երկուսի, – պատասխանեց Թովմաս վարդապետը:

– Ուրեմն մենք իրավունք ունե՞նք երկիրքները և այնտեղ գնացած հոգիների վիճակը միայն երկուությամբ բացատրելու և գերակշռութիւնը գիշելու միայն սևի և սպիտակի: Որքա՞ն ճշմարտացի կլիներ ծիածանը պատկերել միայն մոխրագույնի տոներով: Սրբերի հայտնութիւնները մեզ սովորեցնում են, որ չկա մեկ դժոխք, այլ կան դժոխքներ, չկա ոչ միայն մեկ դրախտ, այլ կան դրախտներ, բանտեր, սպասման կայաններ, անիմանալի և անբացատրելի հոգեվիճակներ: «Մարդկանց համար մեկ անգամ մեռնել և հետո դատվել սահմանված է», – ասում է Պողոս առաքյալը: Ո՞վ կարող է ասել, որ այդ դատաստանի արդյունքը միայն երկու տեսակ պետք է լինի, ու Տիրոջ ձեռքից խել անհուն կարելիութիւնների իրավունքը: Ուրեմն՝ ավելորդ է և վնասաբեր սուրբ գրութեանց ընդհանուր հայտնութիւններից մանրամասնյալ և կամ ստույգ պատկերացումների հանգելը: Վարդան վարդապետն ասում էր մեզ. «Որքան սաղմը իր մոր արգանդում կարող է երևակայել այս աշխարհը, նույնքան էլ մարմնի մեջ թաղված մարդը հնարավորութիւն ունի երևակայել երկնքի խնդիրները: Լավ է առանց նախապաշարումների և նախօրոք կազմված հղացքներից գերծ մեռնել, քան թե պայմանավորված մտածումներով մտնել անդենական աշխարհ: Աստված մեծ շնորհ է անում մեզ՝ ցույց չտալով մյուս աշխարհը, ինչպես մայրերն են իրենց զավակների աչքերը փակում, երբ չար բաներ են պատահում իրենց առջև, որպեսզի նրանք այդ բանից չազդվեն և չվախենան»: Աստծո կամքն այն է, որ մենք միմիայն այս աշխարհի վրա կենտրոնանանք և մեծա-

նանք Սուրբ Հոգու շնորհների մեջ և մերժենք մյուս աշխարհի վերաբերյալ տնօրինությունները պատկերազարդել, այլ հավատքով վստահել իր նախախնամությանը: Ահա այս էր հանգուցյալ վարդապետի սովորեցրածը:

Երբ Գրիգոր վարդապետը խոսում էր, բոլոր ներկաները հիանում էին նրա բացատրությունների այս ոճի, բերված օրինակների և համեմատությունների վրա: Այս շատ կարճ բացատրության մեջ շատերը գտան տարիներ շարունակ իրենց մտատանջող հարցումներից դուրս գալու տրամաբանական ճանապարհը և աստվածաբանական հասուն մի մեթոդ, որ մերժում է ստույգ ու վերջնական պատասխաններ գտնելու և հաղորդելու այն նյութերի մասին, որն Աստված թանձր մշուշով ծածկել է մեր ըմբռնողությունից այս աշխարհային կյանքում:

– Ուրեմն, ես իմ հարցումների պատասխանը այսպես կարող եմ հասկանալ, – ասաց հայր Թովմասը: Ըստ ձեր բացատրության՝ հնարավոր է, որ ոմանք անգիտակից քուն մտնեն հեմոմահու, իսկ ոմանք էլ արթուն լինեն և ոմանք՝ երազային վիճակում: Ոմանց հոգիները հրեշտակները տանեն դրախտ, իսկ ոմանց՝ երկինք, իսկ ոմանք էլ հարուստ յուն իսկ առած լինեն, ինչպես Հիսուսի խաչելության պահին: Մի շարք մարդիկ կրակների մեջ այրվելով են բուժվում, իսկ ոմանք էլ՝ մեղավորները, զնգանների մեջ են վճարում իրենց պարտքը հակառակորդին և դուրս են գալիս՝ «վճարելով վերջին լուծան»: Որոշ չար մարդիկ թերևս ոչնչանում են ամբողջովին, իսկ ոմանք սատանայի կողմից տանջվում, մյուսներն էլ՝ հրեշտակների կողմից բանտարկվում: Ոմանք այնպե՛ս են նվիրվում սատանային, որ դեի են վերածվում նրանց հոգիները և շրջում այս աշխարհի վրա՝ մաս կազմելով չարի բանակին, և ոմանք էլ այնքա՛ն են նվիրվում Քրիստոսին, որ վերածվում են հրեշտակի, Վար-

դան վարդապետի նման, և շտապում են՝ մարդկանց օգնելու: Նրանք վերածվում են սպասավոր հոգիների՝ Հաղթական Եկեղեցու: Ոմանք քնում են օդի, ջրի և հողի մեջ, ինչպես Հայտնության գիրքն է ասում, ու պիտի արթնանան նրանք՝ Վերջին Դատաստանին, իսկ ոմանք արդեն իսկ դատված են և Աստծո Լույսի խորանի մեջ հանգստանում են կատարյալ գիտակցությամբ՝ ըստ նույն Գրքի: Ոմանց հոգիները արդեն իսկ հասել են կատարելության, իսկ ոմանք, ինչպես մանուկների պարագային, շարունակում են հասունանալ: Որոշ մարդիկ քառասուն օր շրջում են այս աշխարհի վրա, իսկ ուրշիշները՝ քառասուն տարի:

Թո՛վմաս վարդապետը խորը շունչ քաշեց և դիմեց Գրիգոր վարդապետին.

– Ի՞նչ ես ասում, ճիշտ հասկացե՞լ եմ ձեր վարդապետի ուսուցումը:

– Դրանից ավելի լավը չէր լինի: Միայն դեռևս մեկ նրբություն կա, հայր սուրբ: Այս բոլորից հետո էլ պետք է կասկածենք և վերջնական վճիռ չկայացնենք: Մենք, ինչպես մեր եկեղեցին է սովորեցնում մեզ, խոնարհաբար աղոթենք ննջեցյալների հոգիների համար և վստահենք Նրա ողորմածությունը:

Այնուհետև Գրիգոր վարդապետը դարձավ դեպի սրբազանը և ասաց.

– Չգիտեի, որ ճանաչում եք մեր վարդապետին անձամբ: Որտեղի՞ց է գալիս ձեր ծանոթությունը, կարո՞ղ եք պատմել:

– Հետո՛ կպատմեմ ձեզ:

– Մենք էլ ենք ցանկանում լսել, աբբահայր, – սրղողած վրա բերեցին միաբանները:

– Քնելու ժա՛մն է արդեն, մե՛ր օրենքը չխախտենք:

– Մեր հիմնական օրենքը քնի դեմ պայքարելը չէ՞,

սրբազան, – ասաց երեց հայր սուրբերից մեկը: – Երկար տարիներից ի վեր այսպիսի հոգևոր զրույց չէինք ունեցել: Ով քունը նախընտրում է, թող գնա քնելու: Ես՝ անձամբ, Վարդան վարդապետի մասին լսել եմ ուզում:

Միաբանների հանած աղմուկը կարծես մի տեսակ քվեարկություն լիներ: Պիտի մնային՝ Վարդան վարդապետի մասին ավելին լսելու համար:



ՀՈՒՇԵՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

– Երբ ես ձեր տարիքին էի, – սկսեց խոսել վանահայրը, – մի քանի հայ գյուղացիներ եկան Տարոնի հեռավոր ավաններից: Նրանք եկել էին խնդրելու, որ իրենց գյուղը այցելեինք, որովհետև մի դերվիշ էր եկել և գյուղացիների գլուխներում խառնաշփոթ ստեղծել, այնքան, որ ոմանք լրջորեն մտմտուքի մեջ էին՝ կրոնափոխ լինել և իսլամանալ: Գյուղը քահանա չուներ, և նա էլ հրաշքներ էր ցուցադրում. իր մարմնի մեջ ասեղներ, շամփուրներ և դանակներ էր խրում՝ առանց ցավի և արյունելու: Վանահայրը շատ հուզվեց և երկու միաբաններ ուղարկեց գյուղացիների հետ միասին:

Ուրեմն, ես և հանգուցյալ Սարգիս վարդապետը վեր կացանք գնացինք և երկու օր հետո մեր ճանապարհին մի գյուղում հարսանիքի խրախճանքի հանդիպեցինք: Մեզ էլ հրավիրեցին: Պատմում էին, որ գյուղի մեջ երեք օր առաջ հարսնացուն ծանր հիվանդացել էր, նույնիսկ՝ հույսը կտրելու աստիճան: Գյուղացիներից մեկը լեռների վրա մի ճգնավորի էր տեսել: Երբ փեսացուն լսում է այս մասին, հավաքում է գյուղի բոլոր տղամարդկանց, դուրս գալիս՝ փնտրելու ճգնավորին՝ հավատալով նրա աղոթքի գորուծյանը: Մի գիշեր դաշտում են անցկացնում: Հաջորդ օրը, արդեն հուսահատ, տեսնում են, որ ճգնավորը դեպի իրենց է գալիս, և դեռ առանց իրենց կողմից որևէ խոսք ասելու՝ դիմում է նրանց. «Եկե՛ք՝ գնանք, աճապարե՛ք»: Գնալու ընթացքում ճգնավորը միշտ նրանց առջևից է քայլում, իսկ նրանք, նույնիսկ ամենից երիտասարդը, դժվարանում են

Հասնել նրան: Երբ հասնում են գյուղ, հարսը արդեն մե-
ռած է լինում մի օր առաջ, և լաց ու կոծը բռնել էր ողջ
տունը: Ճգնավորը հանում է իր խաչը և աղոթքով ոտքի
հանում մեռյալին:

Մեզ հրավիրողները մեզ այս պատմությունը պատմե-
ցին: Ճգնավորի անունը Վարդան վարդապետ էր: Ահա
այնտե՛ղ ծանոթացանք նրա հետ: Մեծ ուրախություն
սկսվեց, և Վարդան վարդապետը նստել էր պատվավոր
տեղում: Մեզ համար էլ տեղ բացեցին նրա կողքին: Մեզա-
նից նա մի փոքր տարեց էր: Սակայն մեր այս ճգնավորի
վարվելակերպը ամենեին համատեղելի չէր նրա անհատա-
կանություններին: Ինչ որ դնում էին նրա առջև,
անմիջապես ուտում էր: Մի ումպով դատարկում էր բաժա-
կը: Խոսում և կատակում էր: Կատակներից մեկը, որ պատ-
մեց, հիշում եմ դեռ. «Ադամը Եվային հարցնում է. «Ինձ
սիրո՞ւմ ես, հոգիս»: Եվան պատասխանում է. «Քեզանից
բացի ուրիշ մեկը կա՞ որ»:

Անշուշտ, մենք քաջ գիտեինք, որ այս վարվելակերպը
կարող է դիմակ լինել՝ վարդապետի կողմից միտումնավոր
գործված, որպեսզի իր հանդեպ եղած հիացումը պաշտա-
մունքի չվերածվի, և ինքն էլ հպարտության չմատնվի: Երբ
ես այսպես էի մտածում, նա կարծես թե կռահեց մտածում-
ներս, դարձավ դեպի ինձ ու հարցրեց.

– Կարապե՛տ եղբայր, երբ Հիսուսը, մեղավորների հետ
ընկերացած, ուտում, խմում և գվարճանում էր, արդյոք
հաճո՞ւյք էր ստանում թե՞ տանջվելով էր մասնակցում
նրանց սեղաններին: Օրինակ՝ Կանայի հարսանիքի ուրա-
խությունը, ոտքերը մի կերպ քարշ տալո՞ւմ, գնաց և տառա-
պանքո՞ւմ դիտեց նրանց պարերն ու լսեց նրանց երգերը,
թե՞ այդ պահին նրանց էր ախորժում:

Իմ իմացած միակ պատասխանը տվեցի և ասացի, որ նա,

իհարկե, հաճույք չէր ստանում, բայց դա առիթ էր՝ այլոց հետ հանդիպելու և նրանց ավետարանելու: Նայեց աչքերիս խորքը և հարց տվեց:

– Ուրեմն, դու նույնպե՞ս այժմ հաճույք չես ստանում այստեղ գտնվելու համար և միայն ուրիշներին գոհացում տալու համար նստեցիր սեղան:

Ես վախեցա սուտ խոսելու համար այս՝ ամեն ինչ իմացող խորհրդավոր մարդու առջև և ասացի, որ «հաճույք եմ ստանում, իհարկե, բայց ինձ սովորեցրածի համաձայն՝ պետք չէ, որ հաճույք առնեմ և խուսափեմ այսպիսի աշխարհիկ ժամանցներից»:

Իսկ նա չպատասխանեց: Ու երբ գյուղացիներից ոմանք երգել ու պարել սկսեցին, հրաշագործը ծափ զարկեց և երգեց նրանց հետ: Երբ կրկին հանդարտվեց մթնոլորտը, մի գավաթ գինի ըմպելուց հետո, դատարկ գավաթը ցույց տվեց ինձ ու ասաց.

– Եթե Հիսուսը գինին խմելու ժամանակ հաճույք չէր ստանում, բայց հաճույք ստացածի նման էր ձևացնում, ու եթե երգերին ծափ տված ժամանակ տանջվում էր, բայց ուրախացողի կերպարանք էր ընդունում, մի ստախոս չէ՞ր լինի նա, սիրելի հայր սուրբ ջան: Իմ պաշտած Տերը, որ ճշմարտությունն է, կեղծիք խաղալու կարիք չուներ: Ուրախ էր երևում, որովհետև ինքն էլ ուրախ էր: Տխուր եղած ժամանակ էլ չէր թաքցնում և ասում էր. «Հոգիս մեռնելու աստիճան տրտմած է»: Եթե մեղավորների հետ սեղան նստող մի «ուտող–խմող մարդ» էր՝ նրանց փրկելու համար, ապա առիթը բաց չէր թողնի՝ չափից ավելի ուրախանալու այդ վայրկյանին:

Այս ասելով՝ խաչած հավի մի ոտք վերցրեց և սկսեց կրծել: Մեր առջև դրված հավի կեսից ավելին նա արդեն կուլ էր տվել: Մեր Սարգիս եղբայրն էլ, չկարողանալով

զսպել իրեն, ապշած հարցրեց.

– Վարդապետ, ո՞ւր են գնում այդ ուտելիքները նիհար մարմնիդ մեջ, մինչև հիմա հինգ հոգու փոխարեն ճաշ կերար և դադարեցնելու էլ միտք չունես:

– Երազ ուտելով ո՞վ է գիրացել, – ասելով՝ ևս երեք քուֆթա միմյանց ետևից նետեց բերանը: Իր այս ցույց տվածը մի ուրախ հրաշք էր: Սարգիսն առարկեց.

– Բայց կերած հավերդ և խմած գինիներդ երազ չեն:

– Իրա՞վ: Եթե այդպես է, ապա այժմ ո՞ւր են դրանք, – ասաց՝ քուֆթաներից ազատված ձեռքերը ցույց տալով: – Տիեզերքը Աստծո երազն է. եթե արթնանում ես երազներից և նրա հետ տեսնել ես սկսում նրա երազը, քեզ էլ իրավունք է տալիս մասնակցելու այդ խաղին՝ ստեղծագործելու և քանդելու:

Վարդան հրաշագործը մեր աչքի առջև շարունակեց ճաշերի հետ խաղալը մինչև այն պահը, երբ գյուղացիներն այլևս ճաշ չդրեցին նրա առջև՝ զգուշանալով, որ հարսանիքի բոլոր ճաշերը կուլ կտա այս մարդը:

– Այլևս մեկ շաբաթ չես ճաշի, հայր սուրբ, – ասաց Սարգիս վարդապետը:

– Ի՞նչ տարբերություն կա քառասուն օր որևէ բան չուտելու և քառասուն օր անդադար ուտելու միջև:

Այդ ի՞նչ հարցում էր: Սարգսի հետ միմյանց նայեցինք ժպտալով:

– Սևի և սպիտակի, լույսի և խավարի, հյուսիսի և հարավի տարբերություն կա, հայր սուրբ, – պատասխանեցի ես:

– Քեզ համար հստակ է ասածդ, իսկ Աստծո՞ համար:

– Ո՛չ մի տարբերություն, – պատասխանեցի, – ամեն ինչ նույն կարելիության, հեռավորության և դյուրության սահմանների մեջ է Ամենակարողի համար:

– Ուրեմն այս ամենը ամենակարող լինելու մեջ է: Եթե որևէ մեկը միանում է Աստծո հետ, ամեն ինչ իր շրթունքների նման հեռու է մնում իրենից, որ այլևս կարելի է այսպես կոչել իր կարգին. «Եղիցի լոյս... և եղև»: Նույն բանն է այսպիսի մեկի համար՝ «Ոչինչ չեմ ուտի և կամ միշտ պիտի ուտեմ» ասելը: Մեր Տերը անապատում փաստեց, որ մարդկությունը կարող է զարգարվել այս աստվածային հանգամանքով:

– Չափից ավելի չէ՞, վարդապետ, ամենակարող դառնալու հանգամանքը մեզ՝ մահկանացու մարդու որդիների համար:

– Իրավացի ես՝ գրեթե անկարելի: Որովհետև այդ անձը մինչև ամենակարող դառնալը պետք է, որ կարողանա ամենաոչինչ դառնալ: Միայն այսպիսի ամանների մեջ կարելի է լցնել ամենակարության կենաց ջուրը: Մեր Տերը մատնանշում է այս իդեալը՝ շեշտելով. «Կատարյալ եղեք, ինչպես ձեր Հայրը կատարյալ է»: Ուրեմն, Աստված ցանկանում է, որ ոչ միայն ընտրյալ մի քանի հոգիներ, այլ նաև համայն մարդկությունը լրացնի այդ չափանիշը՝ Աստվածանալու:

–Որքա՞ն հեռու են մեզանից ասածներդ, հայր սուրբ, երևակայելն իսկ՝ դժվար:

– Այո՛, ո՞վ կարող է երևակայել, որ Նեղոս գետի մեջ նետված անճար մանուկը մի օր Կարմիր ծովը պիտի ճեղքեր և փարավոնին ծունկի բերեր: Եղիայի մայրը կարո՞ղ էր երևակայել, երբ մաքրում, փոխում էր իր մանկան տակաշորը, որ իր որդին մի օր երկինք պիտի համբառնար առանց մեռնելու: Ո՞ւմ մտքով կանցներ, որ Հեսսեի փոքրագույն որդին՝ դաշտերի սիրունիկ հովիվը, Իսրայելի հզորագույն թագավորը պիտի դառնա: Բեթղեհեմի մանուկը ինչպե՞ս աշխարհի Փրկիչը դարձավ: Իզուր չէ, որ մեր ե-

կեղեցին մանուկ Հիսուսին միշտ Մարիամի հետ միասին իր Ավագ Խորանի վրա է բարձրացնում, որպեսզի բոլոր մարդիկ միշտ հիշեն՝ հսկա կաղնին պարունակվում է փոքր հունդի մեջ և Աստված՝ մանկան մեջ: Սիրելի եղբայրներ, Աստծո արվեստն է և նրա ամենից հաճելի զբաղմունքը՝ փոքրերը մեծացնել և հողից աստվածներ պատրաստել: Խնդրե՛ք՝ հող կարողանալ դառնալն է նրա ձեռքի մեջ:

– Հայր սուրբ ջան, ինչ որ մենք գրքերից ենք ջանում սովորել, պարզ է, որ դու արդեն հասլ ես դրան ու խոսում ես փորձառությամբ: Կարո՞ղ ենք խնդրել քեզանից, եթե, իհարկե, արժանի ես համարում մեզ սովորեցնել, թե ինչպես դառնալ այդպիսի անձ, որ նկարագրեցիր: Ի՞նչ անենք, ինչպե՞ս անենք, որ մենք էլ հասնենք դրան: Մի քանի կիրառելի գաղտնիքներ ասա մեզ, խնդրում ենք:

– Գաղտնիք չկա, սիրելիներ՛ք, գաղտնիք չկա: Ճանապարհը բաց է և տեսանելի ամենքին: Ճանապարհը Քրիստոսն է, անկարելի է վրիպել այս ճանապարհը:

– Որևէ նոր բան չկա ասածիդ մեջ: Պարզ է, որ պատմել չես ցանկանում մեզ արքայության գաղտնիքները: Թերևս հասկանալի է, որ մենք դեռ հասու չենք դրան:

– Հավատա, եղբա՛յր, ամենևին գաղտնիք չկա, որ ձեզանից թաքցնեմ:

– Իսկ ինչո՞ւ մեզ մոտ չի հաջողվում քո ասածները, ինչո՞ւ Քրիստոսի թթխմորը չի տարածվում մեր էություն մեջ:

– Որովհետև դու՛ք չեք ցանկանում: Դուք ոչի՛նչ դառնալ չեք փափագում: Դուք հող դառնալու, կավի վերածվելու պատրաստակամությունը չունե՛ք: Իսկ հավատարիմ Տերը խոստանում է բոլորին. «Ահա՛, դու ան առջև եմ կանգնում և բախում. եթե որևէ մեկը բացի այն, ես ներս պիտի մտնեմ»: Կարո՞ղ եք երևակայել, երբ նա մտնում է մահկա-

նացու մարդու մեջ և բնակվում այնտեղ, ի՛նչ հեղափոխություն, ի՛նչ փառք կստանա մարդկային բնությունը հանկարծ:

– Մենք էլ աշխարհն ուրացանք: Վանքի մեջ ենք: Օրը յոթ անգամ աղոթում ենք: Տարվա կեսը ծոմապահությունք ենք անցկացնում, մեր շուրթերը փակել են սաղմոսները, և ծնրադրելուց փտել են մեր ծնկները: Մենք նույնպես զոհել ենք մեր կյանքը և բացել մեր սիրտը, որպեսզի Քրիստոսը ներս մտնի: Բայց կրկին ինչ—որ բան պակասում է: Ասա՛ մեզ, մի՛ քաշվիր, ասա՛ մեր սխալը և մեր երեսին խփիր:

Խորը շունչ քաշեց Վարդան վարդապետը և գլուխը դրականորեն շարժեց.

– Շա՛տ լավ, ասե՛մ ձեզ, թե ինչ է պակասում ձեր զոհաբերություն մեջ: Հին Ուխտի մեջ քահանան մատուցված զոհերը անցկացնում էր զանազան փուլերից: Նախ զոհը կապվում էր, կտրվում, զենվում, կտորների էր բաժանվում, արյունը խորանի վրա էր սրակվում: Բայց, այսքանից հետո, զոհը տակավին կատարյալ ընդունելի վիճակում հասած չէր նկատվում: Այդպես էլ, ահա, մեր շատ միաբաններ վանքերում այս փուլերով են անցնում, և շատ կարևոր են այդ բոլորը և հույժ կարևոր Աստծո համար, ուստի պետք է կատարվեն այդ ամենը առանց անտեսելու: Աղոթք, ծոմ, պահք, հսկումներ, ճգնություններ, ցավեր, կամավոր աղքատություն, պանդխտություն ու հիվանդություններ: Բոլոր այս արարքները, խորհրդանշաբար մեր անձերը Տիրոջը զոհելու համար, կապել, մորթել, զենել, մորթազերծել, փարատել և այլն է նշանակում: Սակայն մի բան տակավին վերջնականապես կիրառվելու էր տվյալ զոհի վրա, այդպես չէ՞:

– Այո՛, – ասաց Սարգիս եղբայրը, – պետք է այրվեր խորանի կրակի վրա, մինչև մոխիր դառնար:

– Մարդու կամքն է «քահանան», այլաբանորեն, որ պետք է իր մարմինը և միտքը կապի, մորթի, զենի, բաժանի և դնի խորանի վրա՝ այրվելու: Սակայն Աստծո երկնային կրակն է, որ պետք է կատարի վերջնական գործողությունը, ոչ թե մարդու կամքը: Եղիա մարգարեի՝ զոհի վրա իջած կրակի նման մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, առաքում է Սուրբ Հոգու կրակը, և մենք այդ կրակի վրա ծնվում ենք վերստին: Մեր վանքերում ջրից և հոգուց վերածնունդն են ուսուցանում, բայց չեն հետապնդում կրակի մկրտությունը: Ես էլ այս բանը վանքում չսովորեցի, այլ երեսուն տարի ադամորդու երես չտեսած մի ճգնավոր առաջնորդեց ինձ այս մկրտությունը, երբ ես էլ ճգնելու համար լեռների վրա էի պտտվում:

Մեծ ուրախություն պատեց մեր սրտերը: Ի վերջո, մենք էլ այդ կրակի մկրտությունը պիտի ունենայինք և նրանց նմանվեինք:

– Մեզ էլ դու՛ առաջնորդիր, հայր սուրբ, և մկրտի՛ր կրակով:

Մանկան նման քահ–քահ ծիծաղեց հայր սուրբը:

– Այսպես խինդ պատճառելու ի՞նչ առիթ տվեցի քեզ, հայր սուրբ ջան:

– Որովհետև այսքանից հետո դեռ չեք հասկացել ասածներս: Այդ անդունդի մեջ միայն դուք կարող եք նետվել, և միայն կրակը կարող է ձեզ կանչել ու այրել: Չե՞ք կարդացել. «Նրանք պիտի ծնվեն ո՛չ արյունից և ո՛չ էլ մարդու կամքից, այլ՝ Աստծուց»: Ես անկարող եմ ծնել ձեզ: Դուք եք այն քահանան, որ իր զոհը խորանի վրա պիտի դնի և պիտի սպասի, որ կրակը վերջնականապես կատարի իր գործը:

– Բայց այդ ճգնավորը ի՞նչ սովորեցրեց քեզ, ինչպե՞ս առաջնորդեց կրակի մկրտության մեջ:

– Նա դիմացս դուրս եկավ իրավամբ, Աստված հանեց, երբ ես արդեն իմ քահանայի գործը կատարել էի իմ ես–ի վրա: Առանց իմանալու՝ պատրաստ եմ եղել այդ կիզումին: Նա կայծ եղավ միայն: Եթե դեռ փայտը թաց է, կայծը չի կարող բռնկվել: Երբ պատրաստ լինեք, Աստված պիտի ուղարկի այդ կայծը, մի՛ անհանգստացեք:

Ներկաները շատ գոհ չմնացին այս անորոշությունից:

– Ձե՞ս կարող ձեռքերդ դնել մեր գլխին և փոխանցել այն, ինչպես առաքյալներն էին անում, և մարդիկ լցվում էին Սուրբ Հոգով:

– Ձեռքերս դնելը դյուրին է, սակայն կրակն ինքն է ընտրում և որոշում, թե ում վրա պիտի ցատկի, ոչ թե ձեռքը դնողը: Տարբեր բան է Սուրբ Հոգուց շնորհ ստանալը և տարբեր՝ կրակի մկրտությունը: Շնորհները գալիս և գնում են, ավելանում կամ պակասում, իսկ կրակի մկրտությունը ջրով մկրտության նման հիմնական փոփոխություն և մնայուն նկարագիր է թողնում ընդունողի վրա: Կրակով այրված ոչ մի բան հնի նման չի մնում այլևս: Երբ կրակը իր բոցերի մեջ է առնում անձին, նա նույնպես կրակի է վերածվում և մարմնեղեն հրեշտակի է նմանվում:

Մատով ցույց տվեց կաթսաները, որոնց մեջ ճաշեր էին եփում:

– Այդ ամանները ինքնին սառն են, սակայն երբ կրակի վրա են դրվում, իրենք են կրակի վերածվում ներսի ճաշերի համար, և դրսից էլ անկարելի է դառնում ձեռքով դիպչել դրանց: Կրակի մկրտությունից հետո մարդկային հոգին այնպե՛ս է փոխվում, որ անկարելի է նկարագրել: Հիսուս այսպիսիների համար էր ասել, թե նրանք, ովքեր հավատում են Իրեն, Իրենից ավելի մեծ գործեր պիտի կատարեն:

– Քեզ հետ պատահե՞ց այդ մկրտությունը, – հարցրեցի:

– Այո՛, – ասաց, – բայց սրան ես չէ, այլ ուրիշները պետք է վկայեն՝ տեսելով իմ գործերը: Քանի որ լեռան վրա հիմնված քաղաքը չի ծածկվում, և բոցի լույսը վկայում է, թե մոմը վառվում է:

Լուեց Վարդան վարդապետը և սեղանից վեր կացավ: Կարծեցինք՝ լվացարան գնաց այսքան ուտելուց հետո, բայց անհետացավ, և չկարողացանք գտնել նրան ոչ մի տեղ:

– Չենք կարողանում գտնել նրան, – ասացին գյուղացիները, – եթե ինքը չի ցանկանում գտնվել:

Իրավունք ունեին:

Աբբահայրը ավարտեց իր խոսքը: Բավականին հոգնած էր և հուզված: Տեղից բարձրացավ: Տարածամ էր արդեն:

– Աղոթենք և պառկենք քնելու, – ասաց:

Սակայն միաբանները իրենց տեղերից չչարժվեցին և նրա երեսին նայեցին ըմբոստուլթյամբ:

– Ի՞նչ եղավ նորից, – հարցրեց:

– Որևէ բան չմոռացա՞ր, արբահայր, – ծիծաղեց նրա ձախակողմում նստած տարեց մի միաբան:

– Ի՞նչը մոռացա:

– Կիսավարտ թողեցիր պատմությունը: Ի՞նչ պատահեց ձեր առաքելությանը: Գնացի՞ք այդ գյուղը և հանդիպեցի՞ք այդ գերվիշին:

Կարապետ սրբազանը հիշեց: Բայց հայտնեց իր հոգնածություն մասին: Միաբաններին համոզեց՝ մեկնել իրենց սենյակները և մի քիչ քնել՝ խոստանալով առավոտյան նախաճաշից հետո շարունակել իր պատմությունը: Բոլոր ներկաները աղոթեցին այդ գիշեր կրակի մկրտության համար և խնդրեցին երանելի Վարդան վարդապետի բարեխոսությունը:

ԵՂԻԱՅԻ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Առավոտյան ամեն ոք մի տեսակ աճապարանքով էր ուտում իր նախաճաշը՝ պահ առաջ լսելու համար Կարապետ աբբահորը, որ թարմացած՝ ավելի ցանկություն ուներ խոսելու՝ նկատելով իր միաբանների հետաքրքրությունը այս նյութի շուրջ:

– Հարսանիքի խրախճանքին Վարդան վարդապետը հարցրել էր մեզ՝ այնտեղ գտնվելու պատճառը, բավականին շահագրգռված էր դերվիչի հարցով, և մենք էլ նրան հրավիրեցինք՝ մեզ հետ գալու: Որոշակի բան չասաց գալու և կամ չգալու վերաբերյալ: Մենք, Սարգիս եղբոր և գյուղացիների հետ, երկու օր հետո հասանք այս լեռների վրա ծվարած գյուղը, որ բաղկացած էր ութսուն տնից: Համայնքը երեք լեզուների խառնուրդ մի բարբառ էր օգտագործում՝ քրդերեն և թրքերենով խառնաշփոթ մի հայերեն: Արդեն քառասուն տարի առաջ մեռել էր շրջակա գյուղերի այցելու քահանան, և հինգ տարի առաջ մի վանական էր այցելել այնտեղ՝ մկրտելով և ամուսնացնելով շատերին և նրանց հետ անցկացրել երկու շաբաթ: Պարզվեց, որ տեղի բնակիչներին ավելի մոտ են եզդիները և իսլամները: Ե՛վ նրանք, և՛ նրանց կղերականները հաճախ են այցելում և քարոզում մեզ՝ հայերիս: Իր կրոնին գրեթե բոլորովին անտեղյակ այս ժողովուրդը միայն բնազդաբար էր կռռել հայությունը և քրիստոնեությունը: Սակայն կրոնական անհստակությունը պատճառ էր, որ ազատ լինել օտար կրոնների ազդեցությունը (կախարդությունը և նախապաշարումը) նրանց վրա:

Մեզ հյուրասիրեցին գյուղապետի տանը, որ ընդարձակ

և ծառախիտ մի գեղեցիկ պարտեզ ունենալ: Սեզ լեռների տեսարանը իրոք, հոյակապ էր: Առիթից օգտվելով՝ երեսնաներին մկրտեցինք, ամուսնացածներին պսակեցինք և ամեն երեկո քարոզեցինք, երբ ժողովուրդն ազատ էր իր աշխատանքից: Տներն այցելեցինք, խոսեցինք ծերերի և մանուկների հետ, տեղյակ եղանք նրանց խնդիրներին, նրանց առանձնությունների դժվարությունները զգացինք և սրտածմլիկ պատմություններ լսեցինք՝ ողբերգական, օտարների կողմից կատարած. աղջիկների առևանգում, հրոսակախմբերի դարանակալում շրջակայքում, կրոնական հալածանքներ, հազար ու մի տեսակ ճնշումներ նրանց վրա: Իրենց արտադրանքը վաճառելու համար բազմաթիվ խնդիրներ էին ունենում:

Նրանց այցելելու դ բոլոր այլազգի կղերականները և կամ, այսպես կոչված, բարեկամաբար վերաբերվող մարդիկ կրոնափոխություն էին առաջարկում նրանց՝ որպես միջոց ու ելք այս անտանելի, անհանդուրժելի իրավիճակից դուրս գալու համար: Բուն հարցը ընկերային էր և տնտեսական, և դերվիչը պարզապես մի փոքր թեթևացնում էր նրանց կյանքի այս դառն ընթացքը և հանգստացնում էր նրանց խիղճը՝ կրոնափոխության գործունեությունն արդարացնող բարոյական մի հենարան առաջարկելով: Արդեն մի քանի ընտանիք հասել էին կրոնափոխության եզերքին և լրջորեն վիճում էին մեզ հետ: Զարմանքով անդրադարձանք, որ այս մարդիկ քրիստոնեությունը ոչ թե իրենց եկեղեցուց, այլ սկզբում իսլամներից էին սովորել, անշուշտ՝ աղավաղված ձևով: Նրանց գլուխներում խառնաշփոթ էր՝ «Սուրբ Երրորդություն», «Աստծո որդի», «Հայր Աստված», «Թլփատություն», «Չորս Ավետարաններ» և այլ գաղափարներ: Իսկ մենք ամենևին այսպիսի իրավիճակների համար պատրաստ չէինք, եթե ճշմարտությունը կուզեք

իմանալ: Մեր դասական և գրաբար գիտելիքներն ամենևին անհնար էր հասցնել նրանց իմացություններին և կարողություններին, և մենք անվարժ էինք՝ ավելի պարզ և համոզիչ խոսելու: Այս փորձությունն ինձ սովորեցրեց, թե ինչո՞ւ միսիոներներն այնքան դյուրությամբ են գրավում մեր ժողովրդին, և նրանք մասսաներով հետևում էին օտարների այս մոլորություններին: Եվ փոխեցի իմ աստվածաբանության մոտեցումը հիմնովին: Մեր շատ խրթին ու տպավորիչ գիտությունները վանական ժամանցներ են լուկ, անօգտակար՝ հավատք արծարծելու մեջ, և շատ հեռու՝ մեր ծարավի ու քաղցած ժողովրդի հոգևոր կարիքները հոգալու համար:

Մի քիչ մտահոգված՝ սպասում էինք դերվիշի հետ հանդիպման պահին և աղթում էինք, որ Աստված առաջնորդեր և իմաստություն հաղորդեր մեզ՝ փրկելու այս անհովիվ ժողովրդին գիշատիչ թռչունների ճիրաններից: Մեր ժամանման չորրորդ օրը, երեկոյան, անակնկալ դերվիշը գյուղ մտավ՝ արժանանալով մեծ պատիվների, մեզանից ավելի: Գյուղացիները նրան ընդունում էին որպես Աստծո մարդ, որ հպվում էր անդենական աշխարհին և իրենց էր բերում գերբնականի փաստեր:

Դերվիշը ողջունեց մեզ՝ ստուգապես նվաստացնող մի հայացքով: Այնքա՛ն վստահ էր իր ուժի և գորության վրա, որ հոխորտանքով էր քայլում և երկյուղ առաջացնում բոլորի մոտ: Նա գիշերեց մի գյուղացու տանը: Նա գիտեր, թե մենք ինչի համար էինք այնտեղ գտնվում: Գյուղացիներն էլ գիտեին: Ոչ ոք աշխատանքի չգնաց առավոտյան: Գյուղապետի ընդարձակ պարտեզում հավաքվել էին շուրջ երեք հարյուրին մոտ մարդիկ՝ ժամանած նաև շրջակա գյուղերից: Պարզ էր, որ դերվիշը իր հաղթանակը ցուցադրելու համար հրավիրել էր նաև այլազգիների: Գյուղացի-

ները շարվեցին մեր շուրջը՝ ոմանք ոտքի կանգնած, ոմանք խոտերի վրա նստած: Գյուղապետը՝ Կիրակոս աղան, նստել էր մի սեղանի մոտ: Կանչեց մեզ, որ նստենք իր կողքին: Ուրեմն ես և Սարգիս վարդապետը մեկ կողմում, իսկ դերվիշը, որի անունը Ալի էքրեմ էր, մյուս կողմը: Նստեցինք Կիրակոս աղայի կողքին: Գյուղապետը մեզ դիմեց բարձրաձայն քրդերենով, որպեսզի դերվիշն էլ հասկանա:

– Մեր գլուխը խառնված է կրոնական որոշ նյութերով: Մենք քրիստոնյա ենք: Սակայն այս դերվիշը ասում է, որ մեր հավատքը հնացած է, մեր Սուրբ Գիրքը պիտանի չէ այլևս, և իրենք ունեն վերջին մարգարեն և Ղուրանը: Մենք մեր հավատքը լավ չենք գիտակցում, բայց ցանկանում ենք մնալ մեր հայրերի հավատքին, եթե նա է ճշմարիտ հավատքը: Ուրեմն մենք ցանկանում ենք լսել ձեզ և կողմնորոշվել. կա՛մ փարատել մեր կասկածները և շարունակել մնալ մեր հայրական դավանանքի մեջ և կա՛մ նախընտրել իսլամությունը:

Շատ հստակ էր ներկա կացությունը. կա՛մ պետք է համոզեինք այս ժողովրդին՝ քրիստոնյա մնալ, կա՛մ պիտի ձախողեինք, և այս խեղճ ժողովուրդը հավատափոխ պիտի լիներ և ընկներ այլ կրոնների գիրկը: Մենք մի միջոցով պատրաստվել էինք այս մենամարտին, և ես սկսեցի պատմել Քրիստոսի մեծությունն, նրա առավելությունները մի մարգարեի նկատմամբ և մի օրինակ էլ ներկայացրեցի:

– Երկու բարեկամ, մեկը՝ քրիստոնյա, մյուսը՝ իսլամ, գնում են նույն քաղաքը: Իսլամը միշտ գովաբանում է իր կրոնը, իր մարգարեին, իր գիրքը և այլն: Քրիստոնյան պարզապես լսում է միայն: Մի պահ ճանապարհը բաժանվում է երկու ուղղությունների, և նրանք չեն կողմնորոշվում, թե իրենց գնալիք ճանապարհը որն է: Խաչմերուկում

մի դամբարան կար, և դիմացից մի մարդ էր գալիս: Քրիստոնյան անմիջապես դառնում է դեպի գերեզմանը և բարձրաձայն հարցնում. «Ո՛վ գերեզմանի մեջ ննջող բարի մարդ, ասա մեզ, ո՞ր ճանապարհը մեզ կտանի մեր գնալիք տեղը»: Իսլամը զարմանում է և ծիծաղում. «Ա՛յ մարդ, – ասում է քմծիծաղով, – կենդանի մարդը այնտեղ է կանգնած, նրան չես հարցնում և այս մեռածի՞ն ես հարցնում: Մեռածը, Աստված գիտի՝ ուր է»: Քրիստոնյան շրջվում է դեպի իսլամը և ասում. «Տե՛ս, դու ասում ես, որ ձեր մարգարեն է փրկիչը: Բայց նա մեռած է, գերեզմանը հայտնի է, ուր ոսկորներն են հանգչում: Բայց Քրիստոսը, նույնիսկ ձեր հավատքն էլ է խոստովանում, ողջ է և երկինք համբարձված: Դու ասում ես, որ մեր ճշմարտության ճանապարհը, Աստծո տանելիք ուղին մեռյալին հարցնենք: Իսկ մենք ասում ենք. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»»: Միայն ինքն է Տերը և ճշմարիտ Փրկիչը»:

Այս օրինակը ըմբռնումով ընկալվեց գյուղացիների կողմից: Հերթը դերվիշինն էր: Ոտքի կանգնեց ինքնավստահ և դիմեց ժողովրդին.

– Ես, գիտե՛ք, շատ խոսել չեմ սիրում: Միայն մեկ հարց ունեմ ձեզ ուղղված: Աստված ինքը կենդանի է և ամեն տեղ ու նաև այստեղ է, անշուշտ: Ես առանձին եմ այստեղ և ներկայացնում եմ իմ հավատքը: Եթե որևէ մեկը հետևում է ճշմարիտ հավատքին, Աստված նրա հետ կլինի, այդպես չէ՞, ասացե՛ք, այդպես չէ՞:

Ժողովրդին ստիպել տալով իր ասածները՝ շարունակեց.

– Դուք գիտեք, որ ես հրաշքներ եմ գործում հաճախ. բազմաթիվ անգամներ ձեր աչքի առջև կատարեցի անհնարին գործեր. կարիճներ խայթեցին ինձ, ոչինչ չպատահեց, կրակը իմ բերանի մեջ դրեցի, չայրեց, կոտրված ապակիներ կուլ տվեցի, չվնասեցին: Դանակներով ծակեցի մարմինս

առանց ցավի և արյունի: Արեցի^օ, թե^օ չարեցի, ասե՛ք:

Ժողովուրդը միաբերան հաստատեց նրա ասածները: Այնուհետև դերվիշը, մատով արհամարհական ցույց տալով դարձավ դեպի մեզ և մի տեսակ շեշտով գոռաց.

– Թող ա՛յս մարդիկ էլ մի քանի բաներ ցույց տան մեզ, որ հավատանք, թե Աստված նրանց հետ է, քանի որ նրանք կենդանիի հետևորդներ են, այլ ոչ թե ինձ նման՝ մեռնողի:

Մեր ակնկալած վերջին մարտահրավերն էր սա: Նա մեզ անակնկալի բերեց, և մենք չգիտեինք, թե ինչպես պատասխանենք: Մենք միայն բանավեճի համար էինք պատրաստվել և անկարող էինք բավարարել նրա և ժողովրդի այս պահանջը:

– Հրաշագործութունը Աստծո տված շնորհն է, և ամենքին տրված չէ: Մենք նույնպես ճշմարիտ հրաշագործ անհատներ ունենք մեր հավատքի մեջ և ոչ թե այսպես ակնկալուկներով մարդկանց խաբող կախարդներ, – պատասխանեց Սարգիս եղբայրը, – քո հրաշք կոչվածները շուկաների մեջ գնչուներն էլ են անուժ և դրամ հավաքում: Կարո՞ղ ես մի կույրի աչքերը բացել և կամ մի մեռյալի հարուժյուն տալ:

– Բայց հայր սուրբ, – հարցրեց մեկը ժողովրդի միջից, – այլ անհնարին բաները ինչպե՞ս նա կարող է անել, երբ Աստծո զորությունն իր հետ չէ:

Ժողովրդին բացատրեցինք, որ այսպիսի ուժերը սատանայի և դևերի ազդեցությամբ են կատարվում, և դրանցից շատերը աչքակապուկ կախարդանքներ են լուկ: Սակայն ժողովրդի միտքը բավականին խառնաշփոթ էր, և նա հակառակվում էր մեր բոլոր տրամաբանական բացատրություններին: Կարծես Եղիմաս կախարդը մեր առջևն էր և Աստծո ճշմարտությունները ցրում էր, խափանում, և մենք էլ Պողոս առաքյալը չէինք՝ այս մարդուն Աստվածային մի

պատուհաս հասցնելու:

Դերվիշը լուեցրեց աղմուկը իր ձեռքի մի շարժումով:

– Մարգիկ շատ խոսեցին, այժմ թող Աստված խոսի:

Տոպրակը բացեց և սեղանին շարել սկսեց իր իրերը. գրեր և թալիսմաններ կային տեսակ–տեսակ: Խոշոր ասեղներ էին շարված՝ զանազան չափերի: Տարբեր բաներ ասաց արաբներեն, մումուաց և տարօրինակ ձայներ հանեց, մի քանի գրերի վրա ձեռքը պտտեցրեց և երեսին քսեց և հետո կավե փակ մի աման բացեց՝ ցույց տալով բոլոր ներկաներին: Մի շատ խոշոր կարիճ դուրս եկավ և սկսեց քայլել ձախ թևի վրա: Բռնեց աջ ձեռքով, և այս միջոցին կարիճը մի քանի անգամ խայթեց նրան:

Մեկնեց ինձ և ասաց.

– Կարող ե՞ս վերցնել սա:

Ես ետ քաշվեցի սարսափած:

– Ուրիշ որևէ մեկը կա՞ փորձել ցանկացող:

Ժողովրդին մոտեցրեց: Մարգիկ ետ ընկրկեցին: Կարիճը կրկին ամանի մեջ դրեց և մի ուրիշ ամանից կոտրված ապակու կտորտանքներ հանեց և ափի մեջ լցրեց: Մոտեցավ Սարգիս եղբորը, նրա ձեռքը բռնեց և ափի մեջ դրեց ապակիները.

– Կարո՞ղ ես կուլ տալ սրանք, – հարցրեց:

Սարգիսը բացասաբար գլուխը շարժեց: Նա կրկին Սարգսի ձեռքից վերցրեց ու դրանք լցրեց իր բերանի մեջ, հետո բերանը բանալով՝ ցույց տվեց բոլորին կուլ տվեց և վրայից մի գավաթ ջուր խմեց: Զարմանքի և զարհուրանքի ձայներ բարձրացան, ոմանք, հմայված իրենց տեսածներից, սկսեցին աղոթել, և ոմանք ծոնկի իջան այս՝ «Աստծո մարդու» առջև:

Մարդը Եղիայի նման մարտահրավերի էր կոչում մեզ՝ Քրիստոսի և մեր հավատքի նկատմամբ՝ անամոթաբար և

արհամարհանքով: Իսկ մենք որևէ պատասխան չունենինք: Այս խեղճ ժողովուրդը սայթաքում—հեռանում էր մեր ձեռքերից: Կյանքիս ամենասրտագին ազդեցություններս էի անում և ասում ինքս ինձ. «Ինչ լավ կլինեն, եթե այժմ այստեղ լինենք Վարդան վարդապետը»: Իրապես, միայն այդպիսի մի սուրբը կարող էր կացուցեցնել փոխել և ետ բերել այս ժողովուրդին: Իրականում դերվիշը պատրաստվում էր իր վերջին հարվածը տալու և ասեղները խոթելու իր մեր մարմնի մեջ: Հանկարծ մի խուլ խլրտում ընկավ ժողովուրդի մեջ: Ոմն մեկը ճանապարհ բացելու և առաջ գալու համար գյուղացիներին մի կողմ էր հրում: Հրաչք... Վարդան վարդապետն էր եկողը: Եթե մեռած հայրս տեսնեի, երևի այնքան չուրախանայի, որքան այդ պահին: Մեզ առաջնորդող գյուղացիները, որ նույնպես ճանաչում էին Վարդան վարդապետին, բղավեցին.

— Ահա հրաչագործը, նա էր, որ մեռած հարսին ոտքի հանեց: Այդ մասին ասում էինք ձեզ, բայց դուք չէիք հավատում:

Իսկապես, գյուղացիները չէին հավատացել մեր պատմածներին Վարդան վարդապետի մասին և կարծում էին, թե սուտ հորինվածք է դա՝ իրենց համոզելու համար, և այդ վկաներին էլ իբր կաշառել էինք՝ սուտ խոսելու համար:

Վարդան վարդապետը մոտեցավ սեղանին, իր տոպրակը դրեց ցած և նստեց դերվիշի ազատ աթոռին: Դերվիշը նայեց Վարդան վարդապետի երեսին և ասաց.

— Դու ո՞վ ես:

— Դու չես ճանաչում, բայց քո մեջ բույն դրած սատանաները շատ լավ ճանաչում են ինձ, թե ով եմ ես՝ Քրիստոսի ծառան:

Երբ դերվիշը Քրիստոսի անունը լսեց Վարդան վարդա-

պետի բերանից, ուժգին ցնցվեց. քիթը, բերանը և երեսը սկսեցին անկանոն շարժվել:

– Հանդարտվի՛ր, – ասաց Վարդան վարդապետը նրան, – և շարունակիր անել այն, ինչ որ անում էիր:

Դերվիշը հապշտապ վրա բերեց.

– Ես այլևս կատարեցի անելիքս, այլևս ոչինչ չունեմ անելու: Ողջ ժողովուրդը վկա է, իրենց աչքերով տեսան: Ցույց տվեցի նրանց Աստծո մեծագործությունները:

– Ո՛չ, ո՛չ, – ասացի ես, – վարդապետի դալու ընթացքում այդ ասեղներով մի բան էիր ցանկանում անել, շարունակիր՝ տեսնենք:

Դերվիշը ցանկանում էր թողնել–հեռանալ, բայց ժողովուրդը պնդեց, որ նա շարունակի իր ցուցադրությունը:

– Քի՛չ մնաց հասնելիս նպատակիդ, ետ մի՛ դարձիր, – ասաց Վարդան վարդապետը, – մեղք չէ՞ այսքան չարչարանքը ջուրն ընկնի: Եթե այդ ասեղները կարողանաս քո մարմնի մեջ խրել, ես սույն իսկ պահից քո աշակերտը կդառնամ այսքան մարդկանց առջև:

Լուրջ խլրտում առաջացավ ժողովրդի մեջ: Մարտահրավերը կատարյալ էր: Դերվիշն այլևս խուսափելու տեղ չուներ: Մենք զարմացանք Վարդան վարդապետի համարձակություն վրա և հայերենով ասացինք.

– Հայր Սուրբ, դերվիշը մի քանի անգամ ցուցադրաբար կատարեց իր գործը, եթե կրկին կատարի, ի՞նչ ենք անելու մենք:

Իսկ նա նայեց իր չարածճի ժպիտով և ասաց.

– Մենք էլ իր աշակերտները կլինենք:

Դերվիշը հանեց իր շապիկը և մնաց կիսամերկ: Շոյեց իր փորը: Մենք հասկացանք, որ նա իր փորի մեջ պիտի խրեր ասեղները: Վերցրեց ամենահաստ ասեղը, իր տուրակի թղթերից մեկի մեջ փաթաթեց, այլ բաներ ևս հանեց,

մումուսալով թքեց դրանց վրա և մոլեգնաբար սկսեց գլուխը շարժել և արաբներեն լեզվով մի քանի բաներ ասաց: Վարդան վարդապետն էլ իր տոպրակից զգուշորեն հանեց իր խաչը, որ անձամբ ինքն էր պատրաստել՝ ամբողջ մեկ տարի աղոթելով դրա վրա, խաչակնքեց և ասաց.

– Հեռացե՛ք նրանից Քրիստոսի՛ անունով:

Աչքերի բիբերը կորցրած՝ դերվիշը հափշտակուլթյամբ շարունակեց իր աղոթքները արաբներենով: Մենք միայն «ալլահ» բառն էինք հասկանում: Նա բարձրացրեց հաստ ասեղը, ցույց տվեց ժողովրդին և այն պահին, երբ ասեղը պետք է խրեր, Վարդան վարդապետը գոռաց.

– Մի քիչ համբերիր:

Դերվիշը շրջվեց և ասաց.

– Ի՞նչ եղավ, հավատքի՞ եկար, չար գյավուր:

– Քեզ վերջին անգամ՝ եմ առիթ տալիս, թո՛ղ և հեռացի՛ր այստեղից քո ստերով միասին, – ու դառնալով դեպի ժողովուրդը՝ սաստեց, – ինչպիսի՞ մարդիկ եք դուք, որ չեք հասկանում, թե այս մարդը սատանայի ծառա է, և իր կատարածները դեռի ուժով է կատարում: Ես խաչի նշանով կապեցի բոլորին: Հիմա միայնակ է, և դեերը չեն կարող օգնել նրան: Եթե այս ասեղները խրի իր մարմնի մեջ, արյունլվիկ պիտի լինի և շատ ցավ քաշի:

– Բայց նա՛ էլ Աստծո անունն է տալիս և նրան աղոթում, ինչպե՞ս կարող է դե լինել իր մեջ, – հարցրեց Կիրակոս աղան:

– Դուք հասկացա՞ք, թե ինչ է աղոթում: Ես արաբներեն գիտեմ: Ասածները աղոթք չէին, այլ կախարդական աղերսանքներ, Աստված անիծող և դեերի անուններով կանչող: Այս մարդը դերվի՛շ էլ չէ, ես դերվիշներին լավ եմ ճանաչում, նրանք այսպիսի վհուկուլթյուններով գործ չեն կատարում: Այս դիվահարը անգամ մուսուլման չէ, այլ նրանց

չար աղանդներից մեկին է ծառայում: Քրիստոսին թողնել և սատայանայի՞ն եք ցանկանում հետևել:

– Ո՛վ է սատանայի ծառան և ո՛վ Աստծո, այժմ հայտնի կդառնա, – բղավեց վհուկը և զայրացած՝ ձախ ձեռքով իր փորը բռնեց, իսկ աջով շամփուրի նման ասեղը բռնած, անհասկանալի բառեր մրմնջաց և ամբողջ ուժով փորը խրեց այն: Հորդառատ արյուն դուրս ժայթքեց, սաստիկ ուժգնությամբ մղոններով լավելիք ճիչեր արձակեց, ահավոր ցավից գետին գլորվեց, և բերանից անասելի հայհոյանքներ թափվեցին: Մյուս գյուղերից եկած մի քանի մարդիկ նրան օգնության հասան, ասեղը դուրս հանեցին և անմիջապես հեռացան գյուղից:

Այդ օրը մեծ փրկություն եղավ գյուղի համար, և մենք ապրեցինք մեր կյանքի ամենից փառավոր օրը, որն եթե յուրաքանչյուր ոք իր ողջ կյանքի ընթացքում մեկ անգամ այդպիսի պահ ապրի, աշխարհի ամենաբախտավոր մարդը կհամարի իրեն: Գյուղացիները երկյուղով լցվեցին: Նրանք խուռներամ գալիս էին՝ համբուրելու Վարդան վարդապետի ձեռքը, բայց վարդապետը թույլ չէր տալիս: Այնուհետև իր շուրջը հավաքեց ժողովրդին և նրանց այնպիսի՝ մի քարոզ խոսեց, որ բոլորիս աչքերից արցունք հոսեց: Ողջ գյուղը ծունկի իջավ և ապաշխարեց իր մեղքերն ու փառք տվեց Աստծուն, որ հավատուրացության մեղքից ազատեց իրենց:

Երբ Կարապետ սրբազանը ավարտեց իր խոսքը, քրտինքի շիթեր էին կուտակվել նրա ճակատին: Պատմելու ընթացքում կարծես կրկին ապրում էր այդ պահերը: Նախորդ գիշեր մի շարք միաբաններ ցանկություն հայտնեցին տեսնել Վարդան վարդապետի հրաշագործ խաչը: Գրիգոր վարդապետը բացեց իր պայուսակը և սրբազան առարկաները գետեղեց սեղանի վրա: Հանեց խաչը և ցույց տվեց

բողորին: Ամեն ոք յուրովի ցանկանում էր անձամբ տեսնել խաչը: Ձեռքից ձեռք փոխանցվեց: Բոլորը երկյուղածութ-յամբ համբուրում էին այն: Շատերը նույնիսկ արտասովում էին: Խաչը կրկին վերադարձավ Գրիգոր վարդապետի մոտ: Ապա միաբաններից մեկը հարցրեց.

– Որևէ սրբից մաս կա՞ մեջը:

– Այո՛, Անանուն սրբի մի նշխար:

– Այսպիսի բան երբե՛ք չենք լսել: Եթե սուրբ է, ապա մի անուն պիտի ունենա, իսկ անանուն է, ապա ինչպե՞ս է գիտակցվում, որ մասունքը մի սրբի է պատկանում:

– Այս խաչը երանելի վարդապետը մի տեսիլքի շնորհիվ է պատրաստել: Իր ձեռքերով փայտից և արծաթից է պատրաստել, մուրճի յուրաքանչյուր հարված ուղեկցվել է աղոթքով, հսկումով և ծոմապահությամբ, Աստծո լույսը իջել է այս խաչի վրա և սրբի արցունքներով կերպավորվել: Նրա վրա փորագրված գրերը և կերպարները ի՞նչ իմաստ ունեին, միայն ինքը գիտեր, մեզ էլ չասաց:

– Ով էր Անանուն սուրբը, հաճեցեք պատմել, – հարցրեց թովմաս հայր սուրբը:

Գրիգոր վարդապետը աչքով արեց Կոլոտ վարդապետին, որ նա պատմի:



ԼԵՌՆԵՐԻ ՍԻՐԱՀԱՐԸ

– Արդեն Կարապետ սրբազանը երեկ գիշեր ակնարկեց նրան. մեր վարդապետի հոգևոր կյանքի վրա հեղաշրջում գործող մի ճգնավոր էր նա, որին երեսուն տարեկան հասակում հանդիպել էր լեռների վրա: Վարդապետը իր հոգևոր փորձառություններով բավականին առաջադիմել էր Ամրդուլիի վանքում, և նրա հոգևոր ծնողը այլևս անկարող էր հաղորդել նրան նոր գիտելիքներ հոգևոր հարցերի շուրջը: Այդ ատճառով արտոնեցին նրան՝ զնալու և առանձին ճգնելու լեռներում, որտեղ որոշ ժամանակ անցկացնելով՝ մենակեցության փորձառություն ձեռք կբերեր: Նրա խոստովանահայրը պայման դրեց, որ թափառումները քառասուն օրը չանցնեն, իսկ նա էլ բավարար չափով պահպանեց այդ պայմանը:

Ամրդուլիի մեր վանքից երեք օրվա հեռավորության վրա անտառախիտ և ժայռածածկ մի վայր էր ընտրել՝ ճգնելու և խորհրդածելու: Բազմաթիվ քարայրներից մեկը իբրև կացարան էր ընտրել իր համար: Ճգնում էր, աղոթում և մտածում: Նա զբաղվում էր միայն մեկ հարցով՝ մինչև գոհացուցիչ և կիրառելի պատասխան գտնելը: Այլևս ուրիշ հարցերով չէր զբաղվում: Մեկ հարցի շուրջը մտմտալով՝ քառասուն օր անցկացրեց: Այդ առանձնացումի ընթացքում նրան մտահոգող հարցն էր. «Ինչո՞ւ հավատացյալները հավատ չեն ընծայում իրենց հավատալիքներին»: Քառասուն օր այս հարցի շուրջ մտածեց, աղոթեց և Ավետարան կարդաց: Աստծուն հարց տվեց, իրեն հարց տվեց, սակայն իրեն գոհացնող պատասխանը չկարողացավ գտնել:

Բոլոր պատասխանները գալիս և հանգում էին մարդկային ես—ի չկամուցյան վրա: Բայց ինչո՞ւ հավատացյալը ավելիին չէր ցանկանում հասնել: Մի թագավոր եթե տա՛սը հազարանոց բանակ ունի, ցանկանում է, որ հարյո՛ւր հազարանոց ունենա, տա՛սը չէ, այլ հարյո՛ւր քաղաք, տա՛սը կին չէ, այլ հարյո՛ւր կին՝ իր կանանոցի մեջ, հարյո՛ւր պալատ, քան տասը: Այդպես էլ վաճառականը տասի փոխարեն հարյո՛ւր տոկոս շահ ձեռք բերելու է փափագում, իսկ վարդապետը հարյո՛ւր գիրք կարդալ է նախընտրում, քան տասը: Նյութական և շոշափելի այս բաներում կիրառված սույն սկզբունքը ինչո՞ւ չի կիրառվում նաև հոգևոր ասպարեզում, որի պատճառով էլ հավատացյալները հաճախ ասում են. «Մինչև այստեղ բավական է, ավելին՝ Սուրբ Հոգի, Քրիստոս, գիտություն, չեմ ուզում»: Ավելին ցանկացողներն էլ անկեղծ չեն իրենց փափագներում, եթե ոչ՝ պիտի ստանային:

Ահա այս մտորումներով երեսունյոթ օր անցկացնելուց հետո, պատրաստվում էր վանք վերադառնալ: Իր հարցումի պատասխանը դեռ չգտած և տրտմած՝ իր վերջին աղոթքն էր կատարում Աստծուն, շնորհակալություն հայտնում և նրա պահպանությունը աղերսում վերադարձի ճանապարհի համար: Երբ աղոթում էր, ծունկի իջած, ներքևում՝ գետի ափին, հիսուն մետր հեռու, նշմարում է մի մարդու, որ քայլում էր դեպի գետակը: Մազերը մինչև մեջքը և մորուքը մինչև գոտկատեղը երկարած մի ծեր մարդ էր տեսածը, որ երեսը խաչակնքելուց հետո, գետի վրայով քայլելով՝ անցնում էր մյուս ափը և ապա անհետացավ ծառերի հետևում: Վարդապետը, ցնցված, վեր է թռչում: Հրա՞չք էր իր տեսածը, թե՞ հեռվից երևաց իրեն այդպես: Վազքով ցած է իջնում և հասնում գետի ափը, որտեղից իրեն այդպես երևաց ծերունին: Զարմանքով տեսնում է, որ

գետափը երեք մետրանոց մի ցցված ժայռ է, որտեղից գետը իջնել անհնարին է, իսկ մյուս ափն էլ տասը մետր հեռու է և ջրի հոսանքն էլ՝ ահավոր: Ուրեմն ծերունին ոչ թե ջրի, այլ օդի միջով է քայլելով անցել մյուս ափ: Անմիջապես ծունկի է իջնում այնտեղ իր տեսած այս հրաշքի վրա ապշած:

Ուշադիր զննում է տեղանքը, նշանաքարեր տնկում, որոշ ծառերի վրա նշաններ գծում, որպեսզի հետագայում այս վայրը հեշտովթյամբ կրկին գտնի: Դիմացն անցնելու տեղ է փնտրում: Մեկ ժամ դեպի ներքև քայլելուց հետո, վերջապես, հարմար տեղ է գտնում մյուս ափը անցնելու համար. կարծես մի տեսակ բնական կամուրջ էր այն, որտեղ գետը հանկարծ կորչում էր ժայռերի մեջ և կրկին հայտնվում ներքևում՝ հարյուր մետր հեռավորություն վրա: Սակայն հասկանում է, որ վանք վերադառնալ պիտի ուշանա և թերևս երբեք չտեսնի ծերունուն, եթե փնտրելու դուրս գա: Վերադառնում է վանք:

Նրա մտքից երբե՛ք չէր հեռանում այդ տեսիլք—հրաշքը, երբեմն ծերունին հայտնվում էր իր երազում: Այսքանից հետո, սակայն, իր քառասնօրյա հարցումի պատասխանը անորոշ էր: Երբեմն— երբեմն հարց էր տալիս ինքն իրեն. «Ինչո՞ւ մենք էլ այս ծերունու նման չենք, ինչո՞ւ մենք էլ նրա տիրապետածի հուսից չենք գնում, ինչո՞ւ մեր հավատքը միշտ կես ճանապարհին ենք թողնում, անավարտ, և զբաղվում այլ գործերով ու կորցնում մեր թափը և տեսանելի հորիզոնը»: Ի վերջո, իր մտածումները ներկայացնում է խոստովանահորը՝ վանահայր Հակոբ Սրբազանին:

— Չունեմ որևէ պատասխան տալու քեզ, որդի՛ս: Դու ինձանից ավելի լավ ես ուսումնասիրել այս խնդիրը, և ես անձամբ շատ բաներ սովորեցի քեզանից, որովհետև քո

տրամաբանությամբ ինչ պատասխան էլ տամ քեզ, միևնույն է, ինձ պիտի ասես. «Այդ չէ հարցումիս պատասխանը, քանի որ եթե այդպե՛ս լիներ, ապա դու կիրառած կլինեիր այդ և ջրի վրայով քայլողը դո՛ւ կլինեիր»: Ո՛չ, ես մի պա՛րզ վանական եմ, հավատքով եմ քայլում Քրիստոսի ճամփան: Ցանկացած պահերիս եղե՛լ են ավելին, անշուշտ, բայց այժմ, քեզ հետ այս նյութի շուրջ խոսելուց հետո, բացահայտ նկատում եմ, որ դու աչքերս բացեցիր, որ ես իմ ուզած տեղում եմ՝ իմ հոգևոր կյանքում՝ ո՛չ ցած և ո՛չ վերև, ճիշտ իմ վճռած տեղում: Թերևս դու կգտնես դրա պատասխանը և կսովորեցնես մեզ մեր կապվածոթյան պատճառը: Եվ կամ՝ արդեն իսկ շատ պարզ է պատասխանը՝ մեր գիտակցության մեջ թաքնված, իսկ մենք, ցավոք սրտի, չենք տեսնում պարզապես:

– Սրբազան Հայր, եթե արտոնես, ես կրկին կվերադառնամ լեռները՝ փնտրելու և գտնելու համար այդ սուրբ անձնավորությանը: Նա՛ միայն կարող է դրա պատասխանը ունենալ:

– Ինչպե՞ս կարող եմ արտոնել, որդիս, աշուն է արդեն, գիշերները սկսել են ցրտել, մի քանի օրից հավանաբար ձյուն կիջնի լեռների վրա: Ամռանն անգամ խիստ վտանգավոր են այդ ամայությունները, իսկ ձմռանը՝ ստույգ մահ: Ձյունը հալվելուց հետո կգնաս:

– Ա՛յժմ եմ ուզում գնալ, սրբազան Հայր: Կա՛մ ես կմեռցնեմ այս հարցումը, կա՛մ այն՝ ինձ: Պետք է որ գնամ:

– Չե՛մ կարող թույլ տալ, ես քո հա՛յրն եմ և հաշի՛վ պիտի տամ Աստծուն քեզ համար: Զավակների բնավորությունն է՝ տաքարյունությամբ որոշումներ կայացնել և վտանգել իրենց կյանքը: Եվ հայրերի պարտականությունն է՝ զսպել նրանց ցանկությունը: Այս սպիտակ մազերը քանի՛—քանի քեզ նման վանականներ է տեսել, որոնք զնացին

և այլևս չվերադարձան լեռներից: Լեռների հետ խաղ չեն անի:

– Գիտես, երբե՛ք զանց չեմ առել քո հրամանները. Քրիստոսի նման ողջ կյանքում հլու–հնազանդ եղա քեզ, իսկ հիմա Անառակ որդու նման եմ վարվում և ասում եմ. «Հայր, տո՛ւր քո օրհնություն բաժինը և ուղարկիր ինձ լեռները, որովհետև սիրտս այնտեղ եմ թողել»:

Արտասովել սկսեց ծեր վանականը:

Որքան ցանկանում ես զնալ, որքան նեղություն է տալիս այս վանքը քեզ, նույնքան էլ անկատար ենք մենք, և դու գոհ չես քո հոր ազարակից:

– Անառակ որդու չար որդը մտել է մեջս, սրբազան հայր, պետք է զնամ և տեսնեմ այն եթերային քաղաքները, որոնք լեռների վրա են, ձների մեջ թաքնված հրեշտակների պալատները պետք է որ գտնեմ, անդունդներից պետք է դիտեմ կյանքը և մահը: Որդը մտել է մեջս, այստեղ էլ պիտի մեռնեմ, այնտեղ էլ: Բա՛ց թող ինձ, բա՛ց թող, որ զնամ՝ իմ արկածախնդրությունն ապրելու:

– Միայն մեկ պայմանով կարող եմ արտոնել: Անառակ որդին վերադարձավ: Երբ գտնես պատախանները և հասնես այդ գիտությունն ու կատարելությունը, այնտեղ չպետք է մնաս և ետ պիտի վերադառնաս քո հայրենական տուն. այստեղ պետք է բաժանես լեռների գանձերը եղբայրներիդ հետ: Մենակյաց կյանքով չպետք է ապրես այդ սրբի նման, և Աստծո Արքայություն գաղտնիքները չպետք է կորչեն քեզ հետ միասին ձյունների մեջ:

Հայր և որդի գրկախառնվեցին, արտասովեցին: Եվ վարդան վարդապետը ստացավ իր օրհնության բաժինը, կարծես կրակի վերածեց այն, որպեսզի վատնի ցուրտ լեռների վրա հրեշտակների հետ միասին եղած ժամանակ:

Կոլոտը մի քիչ ջուր խնդրեց: Քար լուռություն էր տի-

րում: Ասեղ գցելի՜ր՝ ձայն կլսվեր: Այդպես ուշադրութեամբ
ունկնդրում էին նրան: Իրենք էլ կարծես հանկարծ կարո-
տեցին լեռները: Կոլոտը շարունակեց «պտտեցնել» նրանց
լեռների վրա իր պատումներով, անդունդների եզրին,
աստղերի մոտ: Նրա խոսքերում զգում էին ամպերի խոնա-
վությունը իրենց երեսին և վեր կենալ ու գնալ էին ուզում
Վարդան վարդապետի հետ միասին, համարձակ մազլցել
ձյունապատ գագաթները՝ իրենց կուրծքը դեմ տված վայ-
րազ հողմերին:



ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ

Երեք օր հետո Վարդան վարդապետը հասավ այն տեղը, որտեղ տեսել էր ծերունուն, անցավ գետի մյուս ափը, որտեղ ծառերի ետևում անհետացել էր ճգնափորը: Ինքն էլ մտավ ծառերի մեջ, քայլեց, բայց տեսավ, որ հանդիպակաց զառիվերն ընդհատվում էր ցից–ցից ժայռերով: Այնտեղից այն կողմ անցնել այլևս անհնար էր: «Եթե այս ճգնափորը օդի միջից քայլել գիտե, ապա Աստված գիտե, թե ուր է թռել»,– մտածում է նա և մի քիչ տխրում: Մի շերտ ևս լեռնակույտի վրա բարձրանալու համար ամբողջ երեք օր թափառում է: Ի վերջո, մագլցելով, հաջողում է ճանապարհ գտնել: Սակայն ավելին բարձրանալ արդեն սաստիկ դժվարանում էր, ու ձյունն էլ սկսել էր թեթևակի տեղալ: Եթե ձյունն առատանար, իր գտնված տեղից այլևս անհնար պիտի լիներ ցած իջնել, քաջ հասկանում էր այդ: Ո՛չ հագուստները, ո՛չ ուտելիքը բավարար չէին՝ այս լեռների վրա ձմեռն անցկացնելու: Հարկավոր էր մի որոշում կայացնել, բայց՝ ի՞նչ: Կարող էր վանք վերադառնալ՝ առանց ժամանակ կորցնելու: Եթե նույն պահին գնար, ապա կարող էր տեղ հասնել, կա՛մ էլ դեպի առաջ շարժվեր, գուցե գտներ ծերունուն, որն իրեն կօգներ անպայման ողջ մնալու այս անհյուսիսային անապատում: Բայց գոյուլթյուն ուներ նաև մի այլ դառը իրողուլթյուն. ծերունուն չգտնելու դեպքում՝ արգելափակվել այս լեռների մեջ, անծայրածիր ձնեբլուր և քաղցից ու ցրտից դատապարտվել մահվան և կամ գիշատիչ գազաններին կեր դառնալ: Վարդան վարդապետը քաջ գիտակցեց, որ կյանքի գնով պետք է որոշում կայացներ:

Դիտեց անդունդներից, վերհիշեց իր անցած կյանքը, մանկությունը, երիտասարդությունը: Մի՛ վճռի էր հանգել՝ ի վերջո միայն ապրելու համար չէր ցանկանում ապրել այս աշխարհում: Ծնրադրեց սե՛գ լեռների դիմաց, գորշ ամպերին հակառակ, աչքերը փնտրեցին Աստծուն և գտան ամեն տեղ: Զարմանք կտրեց. ծնրադրելու ընթացքում բոլոր օտարությունները չքացան շրջապատի նկատմամբ: Ամեն բան հարազատ դարձավ: Իր սեփական ձեռքերն ու ոտքերը լինեին կարծես: Անդունդը կարծես իր սիրտը լիներ, հովիտները՝ իր ափերը, ծառերը իր մազերն էին՝ հովից տատանվող, անառիկ ժայռերը՝ իր ոսկորները սառած: Մահը մտածեց, մի արև ծագեց ամպերի ետևից, մահը արև ծնեց, ժպտաց: Մեռնելն էլ արևալույս թվաց նրան, ապրելու պես: Մի տեսիլք բացվեց իր աչքերի առջև: Տեսավ Քրիստոսին՝ ամպերի վրա նստած, իրեն էր մեկնում երկու ձեռքերը: Աջ ափի մեջ կյանք կար, ձախի մեջ՝ մահ: Երկուսն էլ, որպես անիմանալի գեղեցկություններ, ճառագում էին: Երբե՛ք այսպես չէր պատկերացրել մահը, այսպես գրավիչ, այսքան պողպատ: Ընտրանքը դժվարին չէր, երկուսն էլ հարստացնող ընտրանքներ էին. մեկը՝ ոսկի, մյուսը՝ ադամանդ: Հասկացավ, որ Աստծուն փնտրելու համար լեռների վրա կորած խենթերի համար տարբերություն չկար մեռնելու կամ ապրելու միջև, քանի որ երկուսն էլ նույն ակունքից բխող նվերներն էին Քրիստոսի՝ կյանքի և մահվան իշխանի: Տեսիլքն ասում էր.

– Ընտրի՛ր՝ ո՞ր մեկը:

Առանց վարանելու սրտի խորքից պատասխան տվեց Վարդանը.

– Դո՛ւ ընտրիր, Ո՛վ Տեր, քեզ համար ընտրիր, քանի որ ես քո մարմինն եմ:

Ժպտաց Քրիստոսը և մատնանշեց մի տեղ: Վարդանը

գլուխը թեքեց դեպի աջ, նայեց այդ կողմը: Տեսավ, որ լեռների գագաթներն է ցույց տալիս Տերը: Հասկացավ, որ մատը խոսում է իր հետ և ասում. «Մահը կամ կյանքը թող ինձ, դու դեպի գագաթը մագլցիր, կորցնելիք ոչինչ չկա, մի՛ վախենա»:

Ոտքի կանգնեց Վարդան վարդապետը: Չէր վախենում այլևս: Թեքվեց դեպի աջ: Այլևս ծերունուն չէր փնտրում: Արդեն ոչինչ չէր փնտրում այլևս: Պարզապես մագլցում էր, մագլցում էր՝ հասնելու սիրուն, մագլցում էր՝ իրենից առաջ մագլցող բոլոր խենթերի նման: Հանգույցը քանդվեց մտքի պարանի, և բոլոր հարցումները ցած գլորվեցին ուլունքների նման, կորան ճանապարհի վրա: Չտխրեց Վարդանը նրանց կորստի համար, թեթևացած առաջ շարժվեց, ժամերով, մինչև գիշեր, մինչև գլուխը աստղերին հպվեց: Լեռը ժլատ էր ջերմությամբ, սակայն առատաձեռն էր իր քարայրներով: Իր կացինով կտորեց քարայրի մուտքին բուսած փշերը, կրակ վառեց, տաքացավ ու վերջին հացը կերավ Քրիստոսի հետ միասին: Քնեց անմահների անանուրջ քնով և մանուկների պարզ ու ջի՛նջ ժպիտով՝ խաղաղ:

Առավոտյան արթնացավ արևի հետ միասին, որը ուղիղ իր վրա էր արձակում իր շողերը. «Ի՛նչ գեղեցիկ է, աչքերիցս է համբուրում ինձ Քրիստոսը»: Քարայրը ցուրտ չէր: Մի քիչ ևս զբաղվեց արևի ճառագայթներով: Հանկարծ արևն անհետացավ, ներսը մթնեց, և լցվեց մի գազանի սպառնալից մռնչյունը: Մի գորշ արջ էր կանգնած քարայրի մուտքին և պատրաստվում էր ներս մտնել: Վարդանը ամենևին չվախեցավ: Ինքն էլ զարմացավ չվախենալու համար: Արջը, քարայրի մուտքի մոտ կանգնած, նրան էր դիտում:

– Բարի եկար, Արջ եղբայր, – ասաց Վարդանը, –

Քրիստոսն է ուղարկել քեզ այս կողմերը, այդպես չէ՞:

– Այո՛, – ասաց արջը, – Քրիստոսն է ուղարկել:

Այս անգամ իրապես զարմացավ Վարդանը. այս արջը խոսում էր և այն էլ՝ հայերեն: Արջի ետևից մի մարդ հայտնվեց՝ երկար, սպիտակ մազերով և մորուքով մի ծերունի՝ ցուպը ձեռքին:

– Լսեցի՛՜ ձայնդ, ի՛նձ էիր կանչում: Ինձ շատ անհանգստացրիր քո կանչով, – ասաց ծերունին, – լեռների գագաթին անգամ հանգիստ չունեմ այլևս: Ի՞նչ ես բղավում այսպես աղմկալից: Ամբողջ երեք օր ձայնդ էի լսում:

Վարդանն անմիջապես ծունկի իջավ:

– Ներեցե՛ք ինձ, – ասաց, – մի հարցում ունեի ինձ տանջող, այդ հարցով եկա:

– Ո՞րն է այդ հարցումը:

– Այլևս կարևոր չէ:

– Շատ լավ, ամենից լավ հարցումներն արդեն ոչ կարևորներն են: Կարևոր հարցումների պատճառով ներքևում մարդիկ միմյանց կոկորդն են կտրում:

Վարդանը նկատեց, որ ծերունին ոտաբոբիկ էր և հագլիվ թե որևէ կարված հագուստ կար նրա վրա:

– Չե՞ք մրսում այսպես, – ասաց չվարած:

– Ինչո՞ւ մրսեմ, – ասաց ծերունին, – ես եմ ցուրտը:

Այս ասելուց հետո անմիջապես ներսը ցրտեց, սառույցի վերածվեց քարայրը: Դողալ սկսեց Վարդանը: Ծերունին առաջին անգամ ժպտաց:

– Ինչո՞ւ մրսեմ, – ասաց կրկին, – ես եմ ջերմությունը:

Այս ասելուց անմիջապես հետո ներսը տաքացավ, մի ջերմոցի վերածվեց քարայրը: Սկսեց քրտնել Վարդանը: Արջից չէր վախեցել, բայց այս մարդու առջև երկյուղածությամբ լցվեց: Անգամ քաջություն չունեցավ՝ ոտքի կանգնելու:

– Դու ոտքեր չունե՞ս, թե՞ իմ արջից առաջ մի ուրիշ արջ կերավ դրանք:

Վարդանն ուրախացավ: Մարդը օժտված էր նաև հումորի ջիղով: Ոտքի կանգնեց անմիջապես և ցանկացավ համբուրել նրա ձեռքը: Բայց մարդը իր ցուպով Վարդանի գլխին հարվածեց: Գետին տապալվեց խեղճ վարդապետը, որ ջանում էր հասկանալ, թե ինչ է պատահել: Մի կողմից գլուխն էր բռնել, մյուս կողմից՝ ջանում էր ոտքի կանգնել: Բայց վստահ չէր՝ կկարողանա՞ արդյոք: Այս սուրբը զորավոր ծեծող է նաև:

– Այս լեռան վրա ձեռք համբուրելն արգելված է, – կրկին ժպտաց ծերունին, – կա միայն ձեռք երկարել և բռնել եղբայրաբար, հավասարը հավասարի հետ:

Այս ասելով՝ ձեռքը մեկնեց Վարդանին, սա էլ ոտքի կանգնեց՝ կրկին զարմացած: «Այս մարդու հետ ամեն ընդունակ զարմանքով պիտի անցկացնեմ, հայտնի է», – մտածեց Վարդանը:

– Բայց ես ո՞վ եմ, որ ձեր հավասարը լինեմ, ես չափս գիտեմ:

– Քրիստոսի անձի մեջ մենք բոլորս էլ ճյուղեր ենք, ի՛ր ճյուղերը, հասկացա՞ր:

– Ես գիտեի արդեն, ես վարդապետ եմ: Հովհաննու Ավետարանի տասնհինգերորդ գլխում Տեր Հիսուսն ասում է, որ...

– Լռի՛ր, – սաստեց ծերունին, – եթե այդքան լավ գիտեիր, ապա կփորձեիր կիրառել ներքևում, – ծերունին ձեռքով դուրս գալու նշան արեց, – մենք ամենքս հավասար ենք այս լեռան վրա: Շատ ուշադիր պետք է լինես: Եթե որևէ կերպով սկսես մեծ կամ փոքր զգալու քեզ, լեռը պատժելու և վնասելու է քեզ, հասկացա՞ր:

– Այո՛, հասկացա, – ասաց վարդապետը, բայց ամենևին

չհասկացալ:

Ձյուն էր իջել գիշերը, և սրբություն էին հագել լեռների կատարներն ամբողջ: Արջը դրսում սպասում էր:

– Արջ եղբայրը, ինչպես դու էլ այդպես կոչեցիր նրան առաջին անգամ տեսած ժամանակ, ինքն էլ շատ գոհ մնաց և ախորժեց քեզանից, մի շատ լավ բնավորություն ունի իր եղբայրների նկատմամբ և շատ հավատարիմ է իր ընկերներին: Բայց ասացի քեզ, որ նա էլ հավասար է մեզ: Եթե զգա, որ իրեն վերից ես նայում, նա էլ քեզ անմիջապես կհասկացնի, որ ինքը քեզանից ավելի երկարահասակ է:

Արջը երկու ոտքերի վրա բարձրացավ: Իսկապես ահարկու էր:

– Ո՛չ, ո՛չ, Արջ եղբայրը ինձ հավասար է և միշտ այդպես պիտի մնա, – գոռաց Վարդանը:

– Ոչ միայն Արջ եղբայրը, այլ նաև քույր ծառերը, ծաղիկները, մայր ձյունը և ժայռերը հավասար են, նույն Քրիստոսի մարմինը, հասկացա՞ր:

– Բայց Եկեղեցին չէ՞ Քրիստոսի բուն մարմինը, – առարկեց Վարդանը՝ ըստ ուղղափառ վարդապետության:

– Լուի՛ր, – կրկին սաստեց Վարդանին, – դու ի՞նչ ես հասկանում Եկեղեցուց:

– Ես վարդապետ եմ, գիտեմ և սովորեցնում եմ այս ամենը, – մի քիչ սրդողած՝ պատասխանեց Վարդանը:

– Քո իմացած եկեղեցին մի քիչ մոմի լույս, մի քիչ խոռնկի հոտ է, պճնված եկեղեցականների և դատարկազլուխ բազմությունների ժամանցի մի հավաքույթ լոկ, ձեռակերտ փոքրիկ տների մեջ կատարվող վտիտ արարողություններ՝ առանց որոտի ու կայծակի: Եթե ձեզ ունը աստղեր չեն քամված, թռչուններ չեն ճուղողում նրա կամարների ներքո, ամպերը չեն թրջում մեր մազերը և մեր ոտքերի տակ փռված գորգերը ձյուն չեն, իսկ սյուները՝

կաղնիներ, ուրեմն ո՞ւմ է պետք այդպիսի մի եկեղեցի: Քրիստոսը կպարփակվի՞ քո այդ եկեղեցի կոչվածիդ մեջ: Մարդկա՛նց համար անգամ նեղ է այն: Պա՛հ առաջ այնտեղից փախչել են ցանկանում՝ իրենց մոմը վառելուց հետո: Միայն մի փշրանք է քո եկեղեցի կարծածդ ճշմարիտ Եկեղեցու համեմատ, որ է՝ տիեզերական մարմինը Քրիստոսի:

– Լավ է, որ անմատչելի այս բարձունքի վրա եք խոսում այսպես: Եթե մարդիկ լսեին Ձեր այս խոսքերը Եկեղեցու վերաբերյալ, կխաչեին ուղղակի:

– Ինչո՞ւ ես «ձեզ» ասում ինձ: Քանի՞ հոգու հետ ես խոսում: Ես առանձին եմ: Ինձ «դու» պիտի կոչես այլևս, որովհետև ավելի ճշմարիտ է, – հետո գլուխը շարժեց և շարունակեց: – Որտեղ էլ լինես, ինչ անուն էլ ունենաս, եթե այնտեղ Արջ եղբայրը եղբայր չէ մեզ համար, հիմնավոր մի սխալ կա, շատ մեծ սխալ:

Վարդան վարդապետը սկսեց անհանգստանալ արջի ներկայությունից: Ծերունին անընդհատ սաստում էր նրան, իսկ Արջ եղբոր մասին միշտ խորին հարգանքով էր խոսում:

– Որովհետև, – ասաց ծերունին՝ նայելով Վարդանին և նրա մտածումները ճշգրտությամբ կարդալով, – քո միտքը սխալներով լեցուն է: Քո գիտեցածները ձյան վրա սև ածուխների նման են: Բայց նայիր Արջ եղբոր աչքերին, կհասկանաս, որ այնտեղ ճշմարտությունը շեղելու ոչ մի ստվեր գոյություն չունի:

Վարդանը լռեց: Վախենում էր այլևս հարց տալ: Ձյունների վրա քայլող այս մարդը չէր պատկանում իրեն ծանոթ մարդկանց որևէ դասակարգի. մեկ անգամ գտնվելիք մի ադամանդ՝ կայսրերի թագերի վրա գետեղելու արժանի: Երբե՛ք չէր ճանաչել սրա նման մեկին, մանկան և ծերունու անբացատրելի տարօրինակ մի խառնուրդ էր: Մի պահի՛

Հազարավոր տարիներ բոլորած մի ծերունի վեհաշուք, իսկ մյուսին՝ նորածին մի երեխա, միամիտ ու սիրունիկ: Հասկանում էր վարդապետը, որ անկարելի էր գտնել աշխարհի վրա այսպիսի մեկին, և եթե ինքը չհայտնվեր մարդկանց, ապա ոչ ոք չէր կարող տեսնել և կամ իմանալ այսպիսի մի էության գոյություն մասին: Տարօրինակ կերպով իր մոտ ոչ մի հարցում չէր առաջանում մտքում, կարծես թե բոլոր հարցումները կորցրել են իրենց արժեքը, և այժմ պարզապես մի առասպելականի հետ լինելը և շրջելը այլևս բավարար էր իրեն: Երբ լռությունը ցանկացավ խզել, Վարդան վարդապետը բոլորովին անմեղ և շատ ծանոթ մի հարցում ուղղեց ծերունուն.

– Ձեր անունը, ներողություն, քո անունն ինչպե՞ս է:

– Անունի ի՞նչ պետք կա լեռների վրա: «Դու և ես» բավարար չե՞ն, որ մենք հասկանանք միմյանց:

– Բայց ամեն մարդ ունենում է իր անունը, այդպես չէ՞:

– Այդպես է թե ոչ, չգիտեմ:

Ծերունին երբեք իր անունը չհայտնեց Վարդանին, և Վարդանն էլ այլևս չհամարձակվեց պնդել՝ իմանալու համար:

– Ես ես եմ, գիտես այս մասին, իսկ մի անուն միմիայն ստվեր է գցում այս պայծառ գիտակցության վրա և ետ քաշում ինձ Աստծո սրտից դեպի մարդկանց աշխարհը: Աստծո պատկերը կրող մի արարածի մարդկային անուն հարմարեցնելը նրան մի անասունի, մի ծաղկի, լեռների, հովիտների և աստղերի անուններ տալ է նշանակում և Արջ եղբոր մորթին չհավանելու և նրան մարդկային մի հագուստ տալ է նշանակում: Ես ինչե՛ր չքաջեցի իմ անունից փրկվելու համար, գիտե՞ս, և այժմ դու ցանկանում ես ետ հագցնել իմ քուրճերը: Իմ գինին այլևս հնարավոր չէ հին տիկի մեջ պահել: Մինչև Քրիստոսից չլսեմ իմ նոր անու-

նը, ես զուրկ եմ բոլոր անուններից: Մոր որովայնում գտնվող երեխայի նման ես այժմ միայն կոչվում եմ իմ մոր անունով. լեռների զավակն եմ ես: Այն ամենը, ինչ տեսնում եմ լեռների վրա, իմ անունն է: Եվ Աստծո զավակն եմ ես, ինչ որ գիտես Աստծո մասին, իմ անունն է: Ես ես եմ, հասկացա՞ր, ուրեմն ինչո՞ւ իջնեմ այս բարձունքներից ցած:

Հասկանալ էր ջանում վարդապետը այս՝ հերետիկոսություն հիշեցնող արտահայտությունները: Եթե ներքևում որևէ մեկն ասեր այս խոսքերը, կժպտար և կհեռանար նրանից՝ համարելով նրան որպես մի «համաստվածական», հերետիկոսությունից ազդված անիրապաշտ մի խեղճ արարած, որն իրեն Աստված է ձևացնում: Սակայն այս մարդը ինչ որ ասում էր, կարող էր մնալ ետևում: Սխալի կամ ստի, հպարտություն կամ խենթություն ստվեր չկար նրա բյուրեղյա խոսքերում: Այս հոգևոր հսկայի մոտ պետք էր, որ ի՛նքը ճիշտ հասկանար Սրբի ասածները, ու եթե անհրաժեշտ էր, հեղաշրջման ենթարկեր իր մտածելակերպը հոգևոր իրողություններ քննարկելու ընթացքում: Իր կյանքի մեծագույն ուսուցիչն էր իր զիմացը հառնած այս մարդը, լավ գիտեր:

– Ի՛նչ հաջող կերպով երեկ գիշեր հաղթեցիր երկգլխանի վիշապին: Դիտեցի քեզ և հիշեցի իմ կռիվները նրա դեմ:

Առաջին անգամ սուրբը իր ձեռքը դրեց Վարդանի ուսին: Վարդանը հասկացավ, որ նա խոսում է երեկվա ճակատագրական որոշման մասին, սակայն չհասկացավ, թե «երկգլխանի վիշապը» ի՞նչն էր: Իր բանավոր հարցումն այլևս ավելորդ էր: Ծերունին այնքա՛ն լավ կարգում էր իր միտքը, որ կարծես մի հայելու զիմաց կանգնած՝ իր մտքի բոլոր ծալքերն ու երանգները արտապատկերվում էին նրա

մտքի վրա:

– Երկգլխանի վիշապը տնկվում է բոլոր ուխտավորների առջև և արգելում նրանց, որպեսզի նրանք որոշակի սահմաններից ավելի առաջ չընթանան և չհասնեն կատարելության այս աշխարհի վրա:

– Ճիշտ այս էր իմ հարցումը, նրա պատասխանը ջանացի գտնել ամբողջ քառասուն օր և չկարողացա: Ի՞նչն է արգելողը, որ հավատացյալները չեն ձգտում դառնալ այն, ինչ որ գիտեն, թե պետք է լինեն: Շուկա են մտնում, լավ գիտեն, թե ինչ պետք է գնել, ապրանքն այնտեղ է, և դրամ էլ ունեն, բայց թափառում են աննպատակ և հազար ու մեկ պատրվակներով ջանում են համոզել իրենց, թե ինչո՞ւ գնում չեն կատարում:

– Արտի մեջ թաղված գանձին տիրանալու համար ամեն ինչ վաճառել է պետք:

– Այո՛, բայց չենք ծախում:

– Ըստ իս, գանձը չեն տեսել տակավին, այդ է պատճառը: Չգիտեն, նվազագույն գաղափար անգամ չունեն նրանք, թէ այս երկու խենթերը ի՞նչ գործ ունեն այս կատարների վրա: Նրանք չեն գտել տակավին գանձը, որպեսզի հաճեն ծախել ամեն ինչ՝ նրան տիրանալու համար:

– Բայց, – առարկեց Վարդանը, – գանձը Ավետարանում է գրված, և բոլոր գիտակից քրիստոնյաները որևէ կերպով գտել են այն և տիրացել նրան, այդպես չէ՞:

Իր տված հարցման հետ միաժամանակ կասկած մտավ Վարդանի սիրտը. արդյո՞ք գանձը, նույնիսկ ինքը, գտել էր, վստահ էր:

– Նրանց գտած գանձը քարտեզի վրա գծագրված մի գրուկոն է միայն, մի նշան՝ վառ գույներով արտահայտված: Նախ ուրախանում են մանուկների նման՝ այսպիսի մի գանձ գտնելու համար, բայց այնուհետև իրենց կյանքի

մյուս գանձերը հավասարազոր են դարձնում քարտեզի վրա արձանագրված գանձին, որը լույս մի անուն է: Իսկ երբ դուրս են գալիս փնտրելու, երկգլխանի վիշապը ետ է դարձնում նրանց իրենց ճանապարհից, ու նրանք իրենց ողջ կյանքը անցկացնում են՝ քարտեզը ուսումնասիրելով, անգիր սովորելով և երևակայելով, թե անպայման մի գորավոր ուժ պիտի գտնեն՝ մինչև վերջ գնալու համար՝ Նիկոդեմոսի նման: Պետք է Աստծո կողմից ծնվել, նրա աշխարհի, հրեշտակների, երկնքի գորության և փառքի ոլորտների մեջ թափանցել: Անգամ Հոգու թևերի տակ շրջել մի անգամ մինչև երրորդ երկինք: Այս փորձությունից հետո միայն նրանք կհասկանան, որ իրենց ունեցածը աղբի է նման: Մկրտությունը միայն առաջին կամուրջն անցնելն է՝ այդ գանձը գտնելու համար, և երկգլխանի վիշապը անցնողի հոտն առնում է անմիջապես, շտապում կանխել նրա անցումը: Եվ քանի հոգի կարող է մեռցնել վիշապը Սուրբ Գևորգ Զորավարի նման և անցնել առաջ: Եվ դու երեկ կտրեցի՛ր երկու գլուխները անզգամի:

Մանկան աչքերի նման ժպտալով՝ այս անգամ իր թևը դրեց Վարդանի ուսերին, մտերիմ ընկերոջ նման: Առաջին անգամը լինելով՝ Վարդանն իրեն լավ զգաց, և Արջ եղբոր նկատմամբ թվացյալ նվաստացման բարդույթն անհետացավ իր միջից:



ԿՅԱՆՔԻՑ ԿՅԱՆՔ

Վարդանն անհամբերությամբ սպասում էր լսել վիշապի երկու գլուխների պատմութիւնը: Իր իմացած վիշապը մի գլուխ ունեցող սատանան էր կամ յոթ գլուխներով նկարագրված վիշապը՝ իբրև խորհրդանիշ յոթ մահացու մեղքերի: Սակայն նրանց ճանապարհը հետզհետե խոչընդոտելով էր անցնում, նեղանում ու ավելի վտանգավոր դառնում: Ի վերջո հասան այծերի այնպիսի՝ արահետի, որտեղից Արջ եղբայրը դժվարանում էր քայլել:

– Դու մի՛ արի, սիրելի եղբայր, – ասաց Արջին ծերունին, – ազատ զգա՝ ցանկացածդ անելու:

Եթե Վարդանին մնար, ապա ինքն էլ կնախընտրեր Արջ եղբոր հետ միասին մնալ ներքևում, քան այս անդունդի եզրերով մագլցել դեպի վեր: Վարդանը երբե՛ք չէր տեսել այսպիսի ահարկու անդունդներ: Կարծես դրանք դժոխքների եզրեր լինեին: Ո՛չ էլ երբեք աշխարհը դիտել էր այսպիսի բարձունքներից: Քանի դեռ նա չէր սովորել թռչել այս սրբի նման, անզգուշ որևէ մի քայլ՝ իր վերջնական կործանումն ակնհայտ էր: Այդ բանը քաջ հասկանում էր նա: Սակայն անակնկալորեն մի վստահութիւն հաղորդվեց նրան՝ գիտակցելով, որ իր անանուն ընկերը, որը քիչ առաջ թևը դրեց իր ուսերին, ամենևին թույլ չի տա իրեն մահվան դատապարտվել: Ո՛չ, նա մեռնելու համար չէր հասել այս բարձունքներին, այլ ապրելու և նոր կյանք վայելելու: Այժմ ավելի լավ էր հասկանում ծերունուն: Այս դժվարամատչելի ճանապարհների վրա լեռը ծնունդ էր պարգևում իրեն: Ինքը բնության երկունքն էր, որ ծնունդ

տալ էր ջանում իր սաղմին՝ մարդու որդու մեջ, հրելով նրան դեպի կատարները, դեպի աստղերը և դեպի հրեշտակների երկիրը: Լեռը նեցուկ էր կանգնում իրեն: Զգում էր Վարդանը դա: Ժայռերը փակում էին իր ոտքերը: Վարդանը զգում էր դա: Հովը փաթաթվել էր իր մարմնին և չէր թողնում, որ ընկնի: Վարդանը զգում էր դա: Ներքևից և վերևից ողջ բնությունն աղաղակում էր միասնաբար:

– Դու՛, ո՛վ մարդու որդի, դո՛ւ՛ մեր զավակը, մագլցի՛ր աստղերից այն կողմ և համբուրի՛ր ոտքերը մեր Արարչի՛ մեր իսկ շրթունքներով:

Եվ Վարդան վարդապետը, ողջ բնության շրթունքը դարձած, համբուրելու էր գալիս ոտքերը Քրիստոսի՛ իր պաշտելի: Վախը հաճույքի էր վերածվել: Այս ընթացքում եթե նույնիսկ ինքնիրեն նետելու լիներ անդունդը, քաջ գիտեր, որ ոչ մի բան չի վնասի իրեն, և հրեշտակները իրենց ձեռքերի վրա կկրեն իրեն, որպեսզի չվնասվի: Անունն այլևս Վարդան չէր, իհարկե: Նա լեռների որդին էր, ձորերի, անդունդների, անտառների, ծաղիկների ու միջատների որդին էր, մարդու որդին էր, միկրոկոսմոս, փոքր մի տիեզերք, ողջ տիեզերքի նվերը՝ իր Արարչին նվիրված: Վարդանն իր մարմնի մորթով սահմանված մտածող մի անասուն էր լուկ, իսկ այս մագլցող մարդու որդու սահմանը Աստված էր միայն: Եվ զգում էր, որ ինչ–որ բան իր միջից դուրս էր գալիս՝ գերազանցելով տիեզերքի սահմանները, և մոտք էր գործում Աստվածությունից ներս՝ դառնալու մի Աստվածորդի: Հափշտակված էր Վարդանը բոլորի համար անկարելի և ասպասելի վայրով: Տարիներից ի վեր իր միաբանական խցիկի մեջ չէր ունեցել այսպիսի մի հափշտակութուն, որն անկասկած, անկարելի էր փոխել որևէ այլ բանի հետ: Ա՞յս էր գանձը արդյոք: Հանկարծ անդրադարձավ, որ իր թևից քաշում էր ծերունին՝ վերադարձնե-

լով նրան միաստիկ փորձառությունից կրկին դեպի իր զգայարանները. ճանապարհն ավարտվել էր, բնականաբար: Ընդարձակ մի ճեղքված էր բացվել նրանց առջև: Մի քիչ ցած մի մեծ քարայրի լայն մուտքն էր երևում: Սակայն հինգ մետր բաց տարածություն կար նրանց և քարայրի միջև:

– Պետք է ցատկենք այս անդունդի վրայով, – ասաց ծերունին, – բայց կարող ենք վերադառնալ, թե կցանկանաս:

– Ցանկանում եմ զնալ քեզ հետ քո անցնելիք բոլոր ճանապարհներով: Ցանկանում եմ լինել քեզ հետ, որտեղ էլ լինես: Քեզ հետ միասին կնետվեմ դժոխքների կրակների մեջ նույնիսկ, եթե դիմացը Քրիստոսի գանձը գտնել կարողանամ: Մարդկային հնարավորություններից ելնելով՝ անհնար է ցատկել այս անդունդի վրայով և անցնել դիմացը: Բայց այլևս մենք մա՞րդ ենք արդյոք:

Խաչակնքեցին երեսները, և ծերունին բռնեց Վարդանի ձեռքից.

– Հիսուս Քրիստոսի անունից. մեկ, երկու, երեք...:

Ցատկեցին—անցան անդունդի վրայով: Վարդանը մինչև ոսկրածուծը զգաց, որ երկու հոգի չէին այլևս, երրորդ մեկը ևս կար իրենց հետ, հովից պատրաստված՝ թևերը իրենց մեջքին փաթաթած, երջանիկ մի հոգի ընկերացող: Երեքով միախառնվեցին անդնդի վրա: Պար սիրող մի հով էր այս մեկը, որ մի քանի անգամ պտտեցրեց նրանց օդի մեջ՝ տերևների նման և զգուշորեն դրեց նրանց դիմացը գտնվող քարայրի մուտքի մոտ:

– Ես այս ճեղքի անունը «հավատի անդունդ» եմ կոչում: Շատ տեղին է, չէ՞:

– Իսկ այս քարայրի անո՞ւնը:

– Արգանդի քարայր:

Ներս մտան: մուլթ էր: Վարդանը ոչինչ չէր տեսնում:

Ծերունիին բռնեց նրա թևից, և քայլեցին:

– Ոչ ոք առանձին, ինքն իրենով, առանց մոր չի կարող ծնվել ու առանց նրա օգնություն, և բոլոր արգանդները մոլթ են, սակայն երբ ծնվելու պահը հասնի, բոլոր առողջ ծնունդները շատ կարճ են տևում ու դյուրին, մահվան նման կտրուկ ու հոյակապ:

Հանկարծ աչաշլաց մի լույսով բացվեց քարայրի մյուս ելքը: Վարդանը չկարողացավ նայել՝ ճիշտ դիմացից եկող արևի ճառագայթների պատճառով: Անմիջապես ձեռքերով աչքերը փակեց:

– Ոչ ոք չի կարող երևակայել, թե ծնունդով ինչպիսի աշխարհների առջև պիտի բացվեն իր կույր աչքերը և ինչերի պիտի հանդիպեն այնտեղ: Ծնունդի մյուս անունը «անակնկալ» է, պետք է որ գիտենաս, հազար ու մի անակնկալ:

Երբ դուրս եկան քարայրից, Վարդանը տեսավ իր կյանքի գեղեցկագույն տեսարանը և մեծագույն բնական հրաշալիքը: Կանաչ մի աշխարհ էր բացվել իր առջև՝ սաղարթախիտ ծառերով և անհամար չքնաղ ծաղիկներով: Առատաբուխ միջավայրի բոլոր բարիքները ի մի էին հավաքվել. կապույտ մի լճակ աչքի նման զետեղված էր ճիշտ նույն կենտրոնում: Տաք ջրեր էին ժայթքում ամենուրեք և ջերմային ազդեցություն գործում ողջ շրջապատի վրա՝ մեղմելով լեռնային կլիման և հասարակածային շունչ հաղորդում նրան: Վարդանն սկսեց արտասովել այս տեսարանի ազդեցությունից ու, քահ–քահ ծիծաղելով, հիացական հոգով ծունկի իջավ և համբուրեց Քրիստոսի ոտքերը: Արդեն գիտակցում էր, որ հողը հող չէր, այլ՝ մարմինը Քրիստոսի:

– Եվ բոլոր ծնունդները արտասուքով էին սկսվում՝ առաջնորդելու համար մեզ դեպի առավել գեղեցիկ խնդություններ:

Այս ծերունու նման Վարդանն էլ մի մանուկ էր դարձել Աստծո Արքայության մեջ: Մտավ տաք ջրերի մեջ ու դուրս եկավ, ծաղիկներ հոտոտեց, ծառերի վրա մագլցեց, պտուղներ ճաշակեց և այնուհետև խոնջացած մարմինը հանգչեցրեց ոսկե ավազների գրկում: Խուզարկու աչքերը փնտրեցին ծերունուն, ու տեսավ, որ նա մի բարձր ժայռի կատարից գլխիվայր սուզվում է լճի մեջ՝ ցնծության մի ճիչ արձակելով: Լողալով եկավ Վարդանի մոտ և ինքն էլ երջանիկ՝ փովեց տաքուկ ավազների վրա:

– Ամենից մեծ մեղքը, որ կրոնավորները գործում են մարդկության հանդեպ, ո՞րն ես կարծում:

– Տխուր և ռիսկալ աստված հրամցնելն է մարդկությանը. հաճույքի թշնամի, լաց ու կոծ սիրող, գորշ գույներ հագած, դժվարահաճ ու դժգոհ՝ ամեն ինչից, միայն ապաշխարանքի սիրահար, – պատասխանեց Վարդանը: Եվ զարմացավ, թէ որքա՛ն երկար ժամանակ էր ինքը հավատացել այդպիսի աստծո և ծառայել նրան անմոռունչ ու նվիրյալ: Զարմացավ, թե ինչո՞ւ վաղօրոք չէր նշմարել, թե այսպիսի բնությունն ստեղծող Աստված, պետք է որ, պար սիրեր, երգ սիրեր և խրախճանք կազմակերպեր իր և իր զավակների համար յուրաքանչյուր օր:

Վարդանը հասակացավ, որ այս աստվածը կիսամոլթ վանքերի և տխուր վանականների հորինումն էր: Գրքեր էին կարդում, իսկ բնությունը՝ ո՛չ: Այնքա՛ն էին զբաղված մեղքի և սրբության մտորումներով, որ մոռանում էին, անտեսում Եդեմի Աստծուն, որ հայտարարել էր. «Ամե՛ն ինչ բարի է, ամե՛ն ինչ՝ բարի»:

– Ի՞նչն է պակասում քո դրախտում, սիրելի եղբայր, գիտե՞ս, – հարցրեց Վարդանը ծերունուն, որի շուրթերին մի չարաճճի ժպիտ էր նկատվում:

– Ի՞նչ, – հարցրեց ծերունին՝ աչքերը խոփռած:

– Երկու գեղեցիկ Եվա, – պատասխանեց Վարդանը քմծիծաղով:

Ծերունին իր պառկած տեղից վեր ցատկեց, քահ–քահ սկսեց ծիծաղել և հրճվագին ծնկներին հարվածել:

– Տեղի՛ն ու շատ լա՛վ կատակ էր:

Վարդանը նույնպես սկսեց ծիծաղել՝ գոհ իր սրամիտ կատակից: Այս ծերունին, որ ցուրտ էր և նաև ջերմություն, ինչպես նախկին քարայրում, այժմ արդեն խինդ էր դարձել իր ողջ էությամբ: Ոչ ոքի դեռևս չէր տեսել Վարդանը այսպես խնդագին: Անուշ մի հով բարձրացավ, ու ծառերը ծափ դարկեցին, բոլոր թռչունները միաբերան սկսեցին երգել, և լիճը հաճելիորեն ալեկոծվեց: Ողջ բնությունը խինդի մեջ էր ծերունու հետ միասին: Կրկին մի երկյուղ անցավ Վարդանի մարմնով:

– Երկար ժամանակ էր, ինչ այսպես չէի ծիծաղել, – ասաց ծերունին, – այնքա՛ն ուրախ եմ, որ մաքրվում ես հետզհետե և անկեղծություն ձեռք բերում: Առանց դրա անհնար է տեսնել ճշմարտության Տիրոջը, – Անանունը դեռ շարունակում էր ծիծաղել: – Ես էլ ինձ էի հարց տալիս այս ամբողջ տարիների ընթացքում, թե ի՞նչն էր պակասում արդյոք այս դրախտում: Կի՛նն էր եղել, հա՛, հա՛, հա՛:

Բնության հետ միասին Վարդանն էլ ծերունու խինդով բռնկվեց: Հաճելիորեն նստել էին ավազների վրա: Ստվերի նշույլ անգամ չկար նրանց երջանիկ պահի վրա: Ծերունին գլուխը դրեց Վարդանի ուսին, իսկ ձեռքն էլ՝ մյուս ուսին:

– Ի՛նչ հետաքրքիր է, չէ՞: Մեր ողջ կյանքի ընթացքում խուսափած ամեն բան մեր առջև է հառնում անակնկալ, ճիշտ այն պահին, երբ կարծում ենք, թե փրկվեցինք նրանից, – մտերմաբար Վարդանի ուսին հարվածելով՝ շարունակեց նա իր խոսքը: – Կնոջ ես կարոտում, անշուշտ, գի-

տե՛մ, բայց հոգ մի արա, կնոջը կտեսնես այստե՛ղ: Դու մինչև այժմ կին չես տեսել աշխարհի վրա, քո տեսածները լուկ գեղեցիկ անասուններ էին միայն, և քո անասունը տենչում էր միայն նրանց մարմնին: Դու Աստվածածինը պիտի տեսնես և այնուհետև կիմանաս, թե ով է կինը:

– Ե՞րբ պիտի տեսնեմ, – հարցրեց Վարդանը, – ե՞րբ պիտի գտնեմ, ե՞րբ պիտի ծնվեմ Աստուծոց, ե՞րբ պիտի Սուրբ Հոգու հովը խլի ինձ ու տանի Երրորդ Երկինք:

Ծերունին քաղցրաբարո նայեց Վարդանի դեմքին և աչքերին:

– Այո՛, այլևս դու էլ Արջ եղբոր նման սկսեցիր դիտել և անմեղ մանուկների նման՝ խաղալ: Աստծո Արքայություն գաղտնիքները եթե քո առջև բաց չանենք, ապա ո՞ւմ առջև պիտի բացենք: Դու էլ մեզ հետ մտի՛ր ներս, սիրելի ընկեր մեր:

Առաջին անգամ ծերունին նրան ընկեր էր կոչում: Բայց ինչո՞ւ էր հոգնակիրով խոսում: Ծերունին կարդաց նրա միտքը:

– Որովհետև քո մտնելիք Արքայություն մեջ չկա առանձնություն ու մենություն, այլ այնտեղ մտնող մեկը այլևս դառնում է «մենք», հասկացա՞ր:

Վարդանը չհասկացավ, իհարկե, բայց հետագայում պիտի հասկանար, անշուշտ, կասկած չունեք:

– Զրից ու Հոգուց ծնվեցիր՝ մկրտություն: Այժմ կրակից պիտի ծնվես: Ահա՛ կրակը, ո՞վ արգելք պիտի լինի մկրտելու համար քեզ:

Վարդանը իր շուրջը նայեց՝ կրակը տեսնելու, բայց չտեսավ: Ծերունին մատով լիճը ցույց տվեց: Արևի ցուքերն այնտեղ շողշողում էին ամենայն ուժգնությամբ: Վարդանի աչքերը շլացան, շարունակել նայել չկարողացավ: Ծերունին լուրջ շեշտով հրամայեց.

– Նայի՛ր՝ առանց աչքերդ թարթելու, լույսի՛ն նայիր:

Եվ իր ձեռքը դրեց Վարդանի գլխին: Վարդանի կոպե-
րը քարացան, անկարող էր փակել այլևս: Լույսեր մտան իր
մեջ, բոցեղեն լեզուներով կրակներ թափվեցին իր հուլթյան
մեջ, ոսկեգօծ ճառագայթներով ու արծաթագես ուղղագծե-
րով, բոցավառվեցին ոսկորներն ամբողջ, անէացավ մարմի-
նը, շոգիացավ, ոչնչացավ Վարդանը, դուրս եկավ իր
մտքից վեր մի տեղ, որ տեղ չէր, այլ անբացատրելի, ըն-
դարձակ մի տարածություն, ուր կարծես մեկ աչքի վերած-
վեց ողջ հուլթյունը, բյուրեղյա անծայրածիր մի գիտակ-
ցություն, մի մեծ աչք՝ ամենատես: Ա՛հ, ինչե՛ր տեսավ այդ
աչքը այնտեղ, որտեղ բառերը վերջանում են, մարդկային
լեզուն կանգ է առնում խոսելիս, ուր պետք չկա՝ հարցնե-
լու ո՛չ մի բան և պատասխանելու: Տեսավ Քրիստոսին, որ
իր պատկերացրած Քրիստոսը չէր, տեսավ Աստվածածնին,
որ իր պատկերացրած աստվածածինը չէր: Իր երևակայած
երկիրները չէին, հրեշտակները այլ թևերով էին թռչում,
ու նրանց շարականները անկարող էր որևէ մեկը կրկնել
նույնությունը: Ամեն ինչ Բարի էր, գեղեցիկ և ճշմարիտ՝
Սիրով շաղախված, և Վարդանը տերն էր այս ամենի, ի՛նքը
և նրանք միասին էին, անիմանալի միասնություն մեջ՝ վե-
րածված «մենք»-ի:

Ի՛նչ լավ զգաց իրեն՝ իր մարդկային մարմնից փրկված
լինելու համար: Այժմ Աստծուն էր հագել իբրև մարմին. իր
աչքը նրա աչքն էր, նրա Հոգով ազատորեն փչում էր ամեն
տեղ տիեզերքում, պարում էր Նրա բոլոր պարերը և հավա-
քում էր բոլոր աղոթքները՝ իբրև փառաբանություն ուղղ-
ված Նրան: Նախկինի նման չէր զգում այլևս, հիշեց անց-
յալը, միլիոնավոր տարիներ հարազատ էին իրեն, այնտեղ
էր ինքը միշտ: Աբրահամից առաջ արդեն իսկ գոյություն
ունեն ինքը: Տուն վերադարձած Անառակ որդին էր՝

խրախճանքով դիմավորված և ընդգրկված Երկնավոր Հոր մոտ: Եվ հասկացավ Վարդանը, որ Աստծո կողմից ծնվելով միայն՝ հնարավոր է գտնել Գանձը, որ խորը թաղված էր իր հողեղեն մարմնի մեջ իր ողջ կյանքի ընթացքում, կրում էր այն՝ առանց իմանալու ոստրեի մարգարիտի առկայությունը մասին, բայց հող չէր նա, մարմին չէր, այլ հոգի, Հոգին՝ տիեզերքի, Սուրբ Հոգին, ամեն բանի հոգին, ճշմարտություն կրակը, որ համապարփակ Սեր էր, Սեր էր և Սեր: Վարդանն այս սիրով կարող դարձավ ամեն ինչի. Աստվածային աներևույթ թևերով գրկեց ամեն ինչ, և ամեն բանի կողմից ինքն էլ գրկվեց սրտագին սիրով: Մի խոշոր շրթունք դարձավ Վարդանը, ամեն բանի համար սիրալիր մի համբույր ունեւր: Տիեզերքի բոլոր գաղտնիքները բացել էին իրենց չքնաղ գանձերն իր առջև, ինչ ցանկանար՝ կարող էր իմանալ, որևէ հարցումի պատասխանը ծնվում էր իր մեջ ինքնաբերաբար: Հանկարծ ցանկացավ իմանալ, թե ի՞նչ էր երկգլխանի վիշապը, ու տեսիլքի մեջ մի այլ տեսիլք բացվեց իր առջև, հոյակապ տեսիլք:

Տեսավ Սատանային, որն, իհարկե, նման չէր իր պատկերացրած սատանային: Աթոռի վրա նստած, առնագեղ, սակայն մի դաժան թագավորի նման հայտնվեց ու հպարտ հայացքով իր խոսքն ուղղեց Վարդանին.

– Իմ արարածն է երկգլխանի վիշապը, իմ հզորագույն հնարքը, իմ անմրցելի հանճարը, որի շնորհիվ կտրում եմ ճանապարհը մարդորդիների, որպեսզի չմտնեն Արքայություն և չժառանգեն իրենց որդիություն բաժինը Աստվածությունից:

Եվ Սատանան իր սև, մետաքսյա սքեմի կուրծքը բացեց: Նրա սրտից թռչող արարածներ դուրս ելան՝ անթիվ–անհամար մարախների նման, երամներով ուղղվեցին դեպի աշխարհ, լցվեցին քաղաքներն ու գյուղերը, որտեղ որ

մարդն ապրում էր: Նստում էին մարդկանց վզերին և երկու գլուխներով անդադար բաներ փսփսում նրանց ականջներին: Վարդանը նկատեց, որ գլուխներից մեկը սարսափելի տգեղ էր, սպառնազին ու դաժան, իր մեջ պարունակում էր վախի բոլոր երանգները և քաջ գիտեր, թե ինչպես ազդել մարդկանց սրտերից ներս: Կարող էր մտահոգությունների, հոռետեսությունների և կասկածների պատճառ դառնալ մարդկանց հոգիներում, կարող էր ակնթարթորեն աշխարհի բոլոր չարագուշակությունների, տարաբախտությունների թույնը ներարկել մարդկանց դողդոջ սրտերում, մղձավանջների մի դժոխք ցույց տալ նրանց արթուն լինելու պահերին անգամ: Բանտեր, հալածանքներ, առանձնություն, արհամարհանք, ցավ, տանջանք, աղքատություն, հիվանդություն և մահ՝ այս ամենը այս սարսափազդու գլխի թելադրանքներն էին, որոնցով բացասական ազդեցություն էր ունենում համայն մարդկության վրա զօր ու գիշեր:

Իսկ մյուս գլուխը պճնված էր անիմանալի գեղեցկությունամբ, ամեն ինչով բաղձալի մի երևույթ: Նրա ոսկե մագերը զարդարված էին թանկագին քարերով: Տեսնողը չէր կարող իր աչքերը հեռացնել այդ բարեազդեցիկ գեղեցկությունից: Այդ գլուխը մարդկանց ականջներին փսփսում էր արևահամ խոստումներ՝ երփներանգ ու դրախտային. դրամ, ուժ, համբավ, գեղեցկություն, առողջություն: Նա գիտեր լավագույն երգերը և պարերը: Մարդկանց առջև ճոխ սեղաններ էր բաց անում՝ անուշահամ խմիչքներով և ջերմագին պորտապարերով: Գիտեր գինու բոլոր տեսակները և դյուրությամբ կարող էր էրոսի կրակը բոցավառել չափազանց զուսպ կարծված անձանց մեջ անգամ: Օրական քսանչորս ժամ շարունակ կապույտ ու վարդագույն երազների, հարստության և հաջողության

հեքիաթների գույնզգույն հավաքածու էր անվճար ցուցադրում մարդկանց և մեծագույն վարպետությունը բոլոր աչքերից ծածկում գերեզմանը իր շքեղ վարագույրով: Համայն մարդկության քաղաքակրթությունը տեղաշարժում էր դեպի իր հեշտության տեսիլքները: Սողոմեի պարն էր այն Հերովդեսի առջև, որի համար մարդիկ պատրաստ էին զոհելու աստվածային ամեն ինչ՝ հմայված սին ու անիմաստ տեսիլքից:

Վարդանը հասկացավ, թե վիշապն ինչպես էր աշխատում հավատացյալների մտքի վրա՝ կուրացնելով նրանց աչքերը: Մարդիկ անկարող էին նրանց թելադրանքի գորությունը դիմակայել: Եթե մեկից փրկվում էին, ապա մյուսի կողմից, անշուշտ, կալանվում: Այն հերոսները, որոնք կարող էին հաղթել գողիաթներին, դավիթներ ու սամսոններ դառնալ՝ ժպտալով վիշապի վախ ու մահ սպառնացող գլխին, խեղճերը, սակայն, մյուս գլխի ճիրանների մեջ էին ընկնում, որ անուշաբույր կիրք, ուժ, հաճույք և հանգիստ էր խոստանում իրենց աննկուն հոգուն: Իսկ հաճույքների հմայքից ձերբազատված հավատացյալները տանջվում էին վաղվա մտահոգություններով, չքավորության և հիվանդության սարսափով: Հաճույք չտենչացող ինչ-ինչ հոգևորականներ, վանականներ միմյանցից վախենում էին և կամ աթոռների սիրույն և նախանձից տարված, ամեն առաքինություն կարող էին ոտնակոխ անել: Մինչև գերեզման այս պիղծ հոգիները հետևում էին մարդկանց, և երբ մահը հասներ, հավատացյալը հասկանում էր միայն այդ պահին երկգլխանի վիշապի խաղացած խաղը, որ ստվերներով վախեցրել և կամ հրապուրել էր նրանց այս աշխարհում, միայն ստվերներով:

– Ստվերների ուժն ունեմ ես, – հոխորտաց Սատանան,
– ստվերներ, որոնք Աստծո ճշմարտություններից առավել

ճշմարիտ են, գեղեցիկ ու գորավոր: Աշխարհը սրա փաստն է, իսկ հավատացյալները՝ իմ սիրելի խաղալիքները և մեծագույն հաճույքը: Երբ ասում են Քրիստոսին, թե ամենից շատ նրան են սիրում և ատում են իմ սիրելի մեղքերը, փորս բռնելով՝ ծիծաղում եմ, հա՛, հա՛, հա՛: Եվ ուտացնո՛ւմ եմ իրենց ասածը հենց իրե՛նց և կուլ տալ եմ ստիպում իրենց փսխածը կրկին: Բոլորը կես ճանապարհին մահանում են՝ կես կտոր գաճաճներ մնալով՝ իրենց հոգին բերնբերան լցված իմ ազդեցության երկյուղով կամ կրքերով: Կեղտոտ քուրճի նման մի կողմ եմ շարտում նրանց թշվառ հոգիները՝ ուղղակի Քրիստոսի ոտքերի առջև, և գոռում եմ նրա երեսին.

– Վերցրո՛ւ, ասում եմ, վերցրո՛ւ քեզ սիրող կեղծավորների հոգիները, վերցրո՛ւ և բա՛ց արա նրանց սիրտն ու տե՛ս, թե ի՞նչ պիտի գտնես քեզ պատականող. նրանք շրթունքներով քեզ են սիրում, բայց սիրահարված են իմ ստվերներին: Իմ դժոխքն են նախընտրում, քան քո դրախտը, որովհետև իմ թագավորության մեջ առավել երջանիկ են նրանք:

Սատանան նայեց բերկրությամբ Վարդանի աչքերին և ետ դարձրեց իր գլուխը հպարտորեն:

Վարդանը տեսավ հիասքանչ դրախտներ և սարսափազդու դժոխքներ, տեսավ հրեշտակներ, որոնք ապագան էին հյուսում բանավոր թելերով՝ Լոգոսի կողմից հրամայված, և մի ակնթարթում հասկացավ, որ երկինքն ու երկիրը պատրաստվում էին Քրիստոսի Երկրորդ Գալստյանը: Վարդանն ուզեց իմանալ իր պատկանած ազգի ապագան: Տեսավ իր ազգը՝ դժոխքների միջով անցած, դարեր շարունակ արյան ու արցունքների գետեր էին բխում նրա կողից՝ Խաչյալ Քրիստոսի նման: Սակայն դժոխքի ամեհի հորձանքները անկարող էին կլանել այն, որովհետև նրա վրա

հսկում էր Մեծն Գրիգոր Հայրապետը՝ Լուսավորիչը Հայոց, Մովսեսի նման՝ դեպի երկինք ուղղված աղոթքի վեր երկարած թևերով: Այս խոնարհ ազգը քանի՛-քանի՛ դժոխքներ հնարեց ու մարեց իր կյանքի ավիշով և, փարվելով Քրիստոսի Խաչին՝ մնաց քրիստոնյա՝ հավատարիմ և համբերատար մինչև վերջ, և խաչակնքելով դիմավորեց Քրիստոսի Երկրորդ Գալուստը ամպերի վրայով: Եվ Արարատի շուրջը Վարդանը տեսավ մի երջանիկ երկիր՝ արևաշող ու պայծառ, որտեղ Մեսրոպյան տառերն ընթերցվում էին դեռ, և հայ ազգը գրավել էր իր արժանի տեղը ազգերի ընտանիքում, երբ Աստծո Արքայությունը հիմնվում էր երկրի վրա: Վարդանը տեսավ, որ երբ ողջ աշխարհը դառնար երջանիկ և խաղաղ, միայն այն ժամանակ իր ազգն էլ, մյուսների հետ միասին, պիտի տիրանար իր արգար իրավունքներին:

Հանկարծ ամեն ինչ սևացավ, միայն խավարը մնաց: Վարդանը շվարեց, չհասկացավ, թե ի՞նչ էր կատարվում: Հետզհետե իր մարմնի զգացողությունը սկսեց վերականգնվել: Ծերը նրա աչքերը փակել էր իր ձեռքերով: Վարդանը սկսեց հեխհե շնչել: Բոլոր ոսկորները ցավում էին: Պառկեց ավազների վրա՝ ուժասպառ և տխուր: Դրախտը դրախտ չէր այլևս: Համեմատելով իր տեսած հրաշալիքների հետ՝ այն նման էր մի աղբի կույտի և կամ հարդի խուրձի: Ի վերջո, գտել էր Գանձը, բայց դեռ իրենը չէր ամբողջությամբ:



ՀԻՎԱՆԴ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՐԸ

Մի քանի ժամ Վարդանը քնեց ավազների վրա: Արեգակը լեռների վրա իրիկնամուտի արյուն էր ծորում՝ իր կեսը զոհելով լեռնաշղթաների խորանի վրա: Սակայն ագահ լեռները կարճ ժամանակից հետո կուլ պիտի տային այդ ամբողջը: Վարդանը դողդողալով արթնացավ. ողջ մարմինը այրվում էր կրակների մեջ, հիվանդ էր զգում իրեն և տկար: Յավով շտկվեց և նստեց ավազի վրա: Ծերունին նստած էր իր կողքին և անշարժորեն դիտում էր լիճը, վայելում նրա մեջ շողացող արեգակի ու ստվերների վերջին հիասքանչ շուրջպարը: Շրջվելով դեպի Վարդանը՝ թեթևակի հարվածեց նրա ուսին և ասաց.

– Բարի լույս, եղբայր, բարի լույս:

«Այս ի՞նչ բարի լույս է», – մտովի ինքն իրեն հարց տվեց Վարդանը, երբ գիշերն արդեն իսկ կլանում էր բոլոր լույսերը:

– Այլևս գիշերն անցավ քեզ համար անվերադարձ կերպով, այսուհետ դու ունես լուսավոր մի առավոտ, ո՛վ որդի լուսո և որդի տվնջյան:

Երկուսն էլ ոտքի ելան: Վարդանը դժվարանում էր քայլել, ոտքերը հազիվ էին կտրվում ավազից: Ծերունին շարունակեց խոսել.

– Այն, ինչ որ ապրեցիր, ո՛չ հասարակ մի տեսիլք էր, ո՛չ էլ մի հափշտակույթյուն՝ առաջներում տեսածներիդ նման: Կրակից անցան բոլոր հյուլեններդ, միտքդ ու հոգիդ, և ստացար նոր մի դրոշմ՝ երկնային: Աներևույթ աշխարհի մեջ դու հռչակավոր ես այսուհետ. ծնվեցիր այնտեղ ու մահվանից կյանք անցար՝ առանց մեռնելու: Անունդ իմա-

ցան բոլոր սատանաները և հրեշտակները: Դո՛ւ, մարդորդի, ծովափի հարյուր միլիոնավոր մանրաքարերի մեջ պլպլացող մի ադամանդ ես այս աշխարհի վրա, մեկ հսկա սերնդի մեջ՝ մի բուռ ընտրյալներից մեկը:

– Այնքան էլ հավատալի չի թվում ասածներդ, բայց կրկին անգամ շնորհակալ եմ: Եթե մեկ ուրիշն ինձ ասեր այդ խոսքերը, ես նրան կասեի՝ «Կորի՛ր այստեղից, սատանա»: Ես հասկանում եմ, որ ինձ հետ հսկայական փոփոխուլթյուն է կատարվել: Բայց ավելի նպատակահարմար չէ՞ր, որ ամեն բան ավելի բարվոք ու հաջող ընթանար: Ինչո՞ւ հիվանդացա, ինչո՞ւ եմ դողում այսպես, – հարցրեց Վարդանը ծերունուն:

– Դու ճյուղնապատ մի գազաթ էիր, այժմ վերածվեցիր ահարկու մի հրաբխի, սակայն, այնուամենայնիվ, միտքդ դեռ չի գիտակցում այս ամենը տակավին ու իրազեկ չէ, թե ինչ կատարվեց քեզ հետ: Այսուհետև հոգուդ տան մեջ է բնակվում Ամենակարող Աստված, իսկ մտքիդ մեջ դեռևս խեղճ ու տկար Վարդանն է սմբում մարմնեղեն, կապկից մի փոքր ավելի խելացի՝ լոկ մի կենդանի: Տարիների ընթացքում այնքան վարժվեցիր անասունի մորթով շրջելու, որ չես գիտակցում, թե այժմ ի՞նչ պիտի անես հրեշտակի նորափթիթ թևերով: Բայց, այնուամենայնիվ, պիտի սովորես: Սակայն Վարդանն ամենևին տրամադրված չէր՝ ատվածաբանության նրբին թեմաներով զբաղվելու: Հիվանդ էր, պառկել ու հանգստանալ էր ցանկանում: Մտան մոտակա մի քարայրից ներս: Մի տաք ջերմության մոտ կանգ առան: Չոր ավազի վրա փովեց Վարդանը: Դուրս գնաց ծերունին և այնուհետև վերադարձավ՝ մի քանի ճյուղեր և պտուղներ հավաքած: Ուժգնորեն ճյուղերը քսեց միմյանց, և անմիջապես բոցավառվեցին դրանք: Վարդանը կիսաբաց աչքերով, հոգնած դիտում էր ծերունուն և հիանում նրա

Թարմության և անհատնում կայտառության վրա: Ծերունին պտուղներ հրամցրեց Վարդանին, որն ուտել չուզեց, ախորժակ չունեի ամենևին:

– Նայի՛ր, – ասաց ծերունին Վարդանին՝ ջերմորեն սրտապնդելով նրան, – գանձը գտար, իսկ այժմ պետք է սովորես տիրանալ նրան, եթե ոչ, գանձի վրա նստած՝ մի մուրացկանի՞ ես փափագում վերածվել այսպես սմբած ու հյուսված, ինչպես մեր քրիստոնյա եղբայրներն են՝ ներքևում թափառող:

– Իհա՛րկե ուզում եմ սովորել, բայց ոչ այժմ: Մի քիչ քնեմ, շատ եմ հոգնած, ներիր ինձ, վաղ առավոտյան կզրուցենք անպատճառ:

– Ասացի քեզ, որ այլևս քեզ համար միշտ առավոտ է, և այս տկարությունը քո առաջին սերտելիք դասն է:

Բայց Վարդանը փակեց աչքերը և շրջվեց կողքի, կսկծեց և թևով ծածկեց երեսը: Վարդապետը բացահայտորեն դաս ստանալ չէր ցանկանում: Սակայն քունը չտարավ. մեկ աջ, մեկ ձախ շրջվեց անվերջ: Հողերի ցավը քանի գնում, ավելի սաստկանում էր, ավագահատիկներն անգամ ցավեցնում էին նրա ոսկորները: Տասնհինգ ըոպե մաքառելուց հետո, անքուն ու դժգույն, շտկվեց և նստեց: Ծերունին խաղաղորեն դիտում էր կրակը:

– Լա՛վ, սովորեցրու ինձ ինչպես Գանձին տիրանալ, ես պատրաստ եմ: Սակայն սկզբում բուժիր ինձ, խնդրում եմ, որպեսզի հանգիստ խոսենք, և ես հասկանամ քո ասելիքը կատարելապես:

– Ինչո՞ւ դու ինքդ չես բուժում քեզ: Որտե՞ղ, անհրաժեշտության դեպքում, անշուշտ, պիտի գտնես ինձ:

– Բայց ինչպե՞ս կարող եմ այդ անել:

Ծերունին մոտեցավ Վարդանին և խորաթափանց դիտեց նրա աչքերի մեջ:

– Աջ ձեռքդ մեկնիր, – ասաց ծերունին, – այժմ բաց արա և փակիր, բաց արա և փակիր, հասկացա՞ր:

Վարդանը նայեց ծերունու աչքերին՝ միաժամանակ անընդմեջ բացելով և փակելով ձեռքը: Հասկացավ Վարդանը ծերունու ասածը և նույնիսկ ավելին՝ անգամ չասածը, որ նրա մտքում էր: Շատ զարմացավ, որ այս բանից հետո այլևս ինքն էլ կարողանում էր կարգալ ծերունու մտքերը: Ծերունին մտովի բացատրում էր ձեռքի դասը, ասում էր լուեյայն.

– Ինչպե՞ս է շարժվում ձեռքը և հլու–հնազանդ, անձայն, անմուռնչ ենթարկվում քո հրամանին: Դո՛ւ ես հարյուրապետը՝ հարյուր անդամների վրա իշխող: Մեկին «արի» ես ասում, և գալիս է, իսկ մյուսին՝ «գնա», և գնում է: Ողջ մարմինդ սպասում է այսպիսի հրամաններ լսել քեզանից: Դո՛ւ ես, ով մարդորդի, դո՛ւ ես Հիսուսը, իսկ մարմինդ՝ մեռած Ղազարոսը:

Ծերունին ժպտաց և գոհունակությամբ շարժեց գլուխը:

– Հասկացար, չէ՞, ասա՛ խոսքդ, և ծառան պիտի առողջանա:

Այդ պահից իսկ Վարդանը լցվեց մի տարօրինակ հավատքով ու պատվիրեց հեղինակությամբ. «Բժշկվի՛ր, ո՛վ մարմին իմ, ցավերը թող անհայտանան, ցանկանում եմ զորությամբ լցվել»: Այդ ինքնահրահանգից հետո Վարդանը ապրիլյան զեփյուռի զովությունը հիշեցնող մի հով զգաց, իր ոտքերի գարշապարից ներս մտավ մի շունչ կենդանի, զորությամբ օծեց նրան: Շտկվեց Վարդանը, թարմ էներգիայով պրկվեց նրա ողջ մարմինը, և մկանները լարվեցին աղեղների մի պիրկ զսպումով: «Ոտքի կանգնե՛լ եմ ցանկանում», – ասաց և ուժգնորեն վեր ցատկեց տեղից: «Վազե՛լ եմ ցանկանում այժյամների նման՝ սարերի վրա ազատ–համարձակ»:

– Ավելի՛ն ցանկացիր, ավելի՛ն, – գոռաց ծերունին, –
ամեն ոք կարող է այդ անել, ավելի՛ն ցանկացիր:

«Թոչեւ եմ ցանկանում», – ասաց Վարդանը և հանկարծ
նույն պահին երկու մետր բարձրացավ տեղից ու օդի մեջ
շվարած առկախվեց: Ծերունին անսահման ուրախացավ,
երկու ձեռքերով ծափ զարկեց և ցնծագին ցատկոտեց տե-
ղում:

– Այո՛, այո՛, Հոգին սիրահարվեց քեզ, պարել է ցանկա-
նում քեզ հետ, մի՛ վախեցիր նրանից:

Վարդանն իր կյանքի պարը պարեց օդի մեջ՝ գրկա-
խառնված Հոգու հետ: Քարայրը լցվեց վարդի գերիչ, զմա-
յլելի բուրմունքով, ու լսվում էր աստղերի անիմանալի ե-
րաժշտությունը: Քարայրն այլևս նեղ էր Հոգու համար, որ
դուրս հանեց Վարդանին դեպի անհունը՝ աստղազարդ,
ընդարձակ երկնակամարի ներքո: Ծերունին վազեց նրանց
ետևից: Արթնացել էին վաղուց քուն մտած, ճյուղերի վրա
թառած բոլոր թռչունները: Այժմ ճռվողում էին միասնա-
բար և թռչկոտում ուրախ–զվարթ, աջ ու ձախ: Ամպերը
տեղ բացեցին լուսնին, որպեսզի արծաթափայլ շողեր ցողի
լճակի մակերեսին: Հոգին Վարդանին թողեց մի բարձր
ժայռի վրա, որտեղից ծերունին ցերեկը ցատկել էր լճակի
մեջ: Վարդանի ուրախ քրքիջից երջանիկ շարժվում էր ողջ
բնությունը: Թողեց իրեն պարապուլթյան, սուզվեց, գլխի-
վայր մխրճվեց լուսնածոր լճի ծոցում ու լողալով հասավ
ափ, որտեղ ծերունին՝ ժպտերես արդեն սպասում էր նրան:
Դուրս եկավ Վարդանը լճից: Ջրերը արծաթյա հեքիաթա-
յին թելերով վազում էին նրա մազերից, ուսերից վար: Ե-
րեսը փայլում էր, և աչքերը՝ զույգ արևներ, կորով էին ճա-
ռագում:

– Չե՞ս մրսում այլևս, – հարցրեց ծերունին Վարդանին:

– Ինչո՞ւ մրսեմ, – ասաց Վարդանը, – չէ՞ որ ես եմ

ցուրտը:

Վերադարձան քարայր, խոսեցին անվերջ: Այժմ էլ ծե-
րունին էր ցանկանում մի քիչ հանգստանալ, բայց Վար-
դանը չէր թողնում նրան հազար ու մի հարցումներով: Ար-
քայուլթյան գաղտնիքների որսորդն էր դարձել Վարդանը,
ասպետականությամբ արշավում էր հրեշտակների բերդերի
վրա ու անխնա թալանում երկնքի բոլոր գանձերը, և չէր
բավարարվում այս հոգևոր Մակեդոնացին՝ իր ավարների
ճոխությունից զմայլված ու արբեցած:

Ծերունին բացատրեց հոգևոր կյանքի սկզբունքները և
արեց պետք եղած զգուշացումները:

– Հոգևոր բաժուկները վտանգավոր են այնտեղ քայ-
լողների համար: Անչափ դյուրին է այնտեղից ցած ընկնե-
լը: Երեք տարի Հուդան Հիսուսի հետ մագլցեց աստվածա-
յին բարձունքները, իսկ երեք երկվայրկյանը բավարար էր,
որպեսզի գահավիժի այնտեղից ցած ու փշուր–փշուր լինի
անվերադարձորեն: Դաշտի մեջ սայթաքում ես, ընկնում ու
վեր ես բարձրանում՝ ծնկներդ մի փոքր ցավեցնելով: Հո-
գևոր անդունդից ընկնելը անբացատրելի է, իմացիր: Ուշա-
դիր եղիր եսիդ խաղերին: Չմոռանա՛ս, որ Մովսեսը չկարո-
ղացավ մտնել խոստացյալ երկիր՝ այդ բառի սխալ գործա-
ծության պատճառով, նույնիսկ միայն մեկ անգամ: Մի
մանկան համար հազար անգամ ներելի հանցանքը ձեռ-
վորված մարդու համար աններելի է: Սատանան կատարյալ
էր, ուստի իր մեղքն էլ կատարյալ էր:

– Քո տրամադրության տակ դրված ուժերին տեր դառ-
նալու հիմնական ճանապարհը՝ դրանք երբե՛ք ու երբեք
չգործելն է քո եսի համար, նույնիսկ արդարացուցիչ պատ-
ճառներով: Քարերը երբե՛ք հացի չպետք է վերածես, նույ-
նիսկ եթե մեռնելու լինես քաղցից, պիտի սպասես նրա ժա-
մանակին: Եթե Աստված ցանկանում է մահացնել քեզ

քաղցածուլթյամբ, թո՛ղ մահացնի: Այնուհետև ազուսները մի կտոր միս կբերեն քեզ համար, կամ երկինքը մանանա կցողի վրադ: Դու փաստիր, որ մեծ է քո հնազանդությունն ու սերը, քան ամեն մարմնական կարիքը, հեշտանքը, կիրքը կամ շահախնդրությունը: Գեթսեմանիի մեջ մեր Տերը չհաղթեց սատանային, այլ անկուշտ մարդկային բնությանը, որ սկսում է՝ բոլոր նախադասություններում «Ես»-ով վիժած և ավարտվում՝ «կուգեմ»-ով վրիպած: Երբ որոշ չափով կարիքների մեջ լինես, ասա նրան, որ քո մեջ է ու շուրջդ, ամեն տեղ: Քո սերը նրա հանդեպ փաստված է այլևս, այժմ Նա՛ պիտի ցանկանա փաստել իր սերը քո նկատմամբ, և մոտ ժամանակներս կհասկանաս, թե ինչպիսի՛ մի հզոր սիրեկան է Նա, որ անվերապահորեն պատրաստ է տալ քեզ իր այգու բոլոր ծաղիկները: Նույնիսկ առանց քո ցանկության պիտի շտապի քեզ ծառայել, ինչպես մայրը իր մանկանը, որպեսզի քո ժպիտը տեսնի և լսի շրթունքներից բացվող վարդը. «Փա՛ռք քեզ, Աստված, փա՛ռք քեզ»: Եթե իր խոշոր ափով քեզ է տալիս մի շնորհ, ապա խլիր Նրա ձեռքից հավատքո՛վ: Այդ կերպը գոհացնող է Նրան, իմացի՛ր: Զաքարիայի նման մի՛ խաղա Նրա առջև խոնարհ ծառայի դեր, կբարկանա՛, ուշադիր եղիր: Սիրելի Մարիամը մեր՝ խոնարհ շուշանը դաշտերի, արդյոք մերժե՞ց Նրան, երբ Աստված մեկնեց նրան Տիեզերքի մեծագույն ազամանդը: Գթասի՛րտ եղիր բազմությունների նկատմամբ, հատկապես՝ աղքատների, բայց և այնպես, երբեք մի՛ վստահիր նրանց քո մարգարիտները: Ունեցիր աշակերտներ, սակայն կաթիլ առ կաթիլ տուր նրանց հոգևոր սնունդը: Առականքով խոսիր ու բացատրիր նրանց Աստծո Արքայության գաղտնիքները: Ե՛վ բացված դուռ է առակը, և՛ փակված, որտեղից մի՛միայն արժանավորը կարող է անցնել՝ ավելի հեռուն ընթանալու:

ՍՐԲԵՐԸ ՄԻՇՏ ՍՈՒՐԲ ԵՆ

Երեք օր մնացին նույն տեղում: Ծերունին Վարդանին սովորեցրեց և հայտնեց այնպիսի բաներ, որոնց մասին իմանայինք անգամ՝ չէինք հասկանա, կամ հասկանայինք անգամ՝ չէինք հավատա:

– Գնա՛նք, այլևս ժամանակն է քեզ ճանապարհելու, – ասաց ծերունին:

Վարդանը դժգոհ էր այս որոշումից:

– Դու տարիներ ես անցկացրել այս դրախտում, իսկ ինձ երեք օրից հետո ցանկանում ես ճանապարհել, այո՞:

– Քեզ սովորեցնելու այլևս ոչինչ չունեմ: Սուրբ Հոգին ունես որպես ընկեր, Քրիստոսը՝ որպես Վարդապետ և Աստված՝ որպես Հայր: Ես երեսուն տարի չփնտրեցի ուրիշ մեկի ընկերությունը և դեռ չեմ էլ փնտրելու:

Ես ի՞նչ պակասություն ունեմ քեզանից: Ինչո՞ւ ես վտարում ինձ այս լեռներից: Եթե չես ցանկանում տեսնել երեսս, ապա հաճախակի չենք տեսնվի միմյանց: Բայց ես էլ հետագա տարիներս պետք է անցկացնեմ այստեղ, Սուրբ Երրորդություն հետ միասին: Այս լեռներն իմն են այլևս, իսկ ես՝ նրանցը: Այսուհետ քեզ նման ես պետք է այստե՛ղ մնամ:

– Բայց դու ներքևում տված խոստում չունե՞ս:

Վարդանի երեսը մթազնեց: Հիշեց Հակոբ սրբազանին տված խոստումը՝ վերադառնալ Ամրդուլի վանք:

– Յուրաքանչյուր ոք ունի իրեն շնորհված կոչումը: Դու պիտի քահանան լինես լեռների և մարդկանց ճահիճների միջև: Նրանք ճահիճներից այստեղ բարձրանալ չեն կարող, բայց քեզ հնարավորություն կունենան հասնել:

Դու էլ չիջնես նրանց ճահիճների մեջ, դրա կարիքը չունես: Ամրդուլի բարձունքների վրա կառուցիր բույնդ, այնտեղ հաստատիր արծվաբերդ, այնտեղ երկինք կարոտող ձագուկներ մեծացրու և կամ առաքյալներ՝ դեպի ճահիճները գնալու: Հայ Եկեղեցին կարիք ունի եկեղեցականների նոր սերնդի, և դո՛ւ ես ընտրվել և օրհնվել այդ կրակը բոցավառելու համար: Քո առաքելության վրա անձամբ Սուրբ Գրիգորը պիտի հսկի: Այ՛ս է քո կյանքի կոչումը:

Վարդանն ակամայից ընդունեց իր համար սահմանված այս դերը, բայց հանկարծ մի խորամանկ միտք հղացավ, որից աչքերը փայլեցին:

– Շատ բարի, պիտի վերադառնամ Ամրդուլ, ինչպես որ խոսք եմ տվել: Բայց տեսնո՞ւմ ես, թե ինչպես ձյունը փակել է բոլոր ճանապարհները: Այժմ այստեղ ձմեռենք, ձնհալին ցած կիջնենք, երբ ճանապարհները բացվեն, հնարավոր է, չէ՞:

Սակայն ծերունին, իհարկե, նրանից ավելի խորամանկ էր: Իր ձեռքով թեթևակի թոթվեց Վարդանի ուսը և քայլելու նշան արեց ու քայլեց:

– Հավատացողին ողջ տիեզերքը ճանապարհ է բացում, իսկ եթե չկա՝ մի նոր ճանապարհ կպատրաստի:

Մտան մի այլ քարայր, որն ավելի նեղանցք էր՝ դեպի ներքև տանող: Հետզհետե ավելի էր դժվարանում նրբանցքով ընթանալը, որոշակի տեղից հետո անգամ հնարավոր էր սողոսկելով անցնել:

– Այս նեղանցքի անունն ի՞նչ է, – հարցրեց Վարդանը:
– Գենոսիս:

Հիշեց Վարդանն այս հունարեն բառը: Աստվածորդու մարմնացումի մասին գործածված աստվածաբանական տխուր մի բառ էր, որ կրում էր «մերկացում»-ի իմաստ: Քրիստոսն իր աստվածային հանգամանքներից զրկվել էր՝

մարդ լինելով, փոքրացել ու ունայնացել էր՝ մարդկությանը փրկելու համար մեղքի անեծքից:

Ի վերջո, հասան ելքին, որտեղից դուրս եկան և մտան գորշ երկնքով պարուրված սպիտակ անապատի մեջ: Նրանց երեսը, գլուխը և հագուստներն ամբողջովին կորել էին փոշու և ցեխի մեջ: Վարդանը նկատեց, որ ձեռքերն ու ծնկները արյունոտ են, կտրատվել են՝ սուր-սուր քարերին շփվելով: Պատառոտվել էին հագուստները, իսկ կոշիկները՝ ճանապարհին ընկել-կորել էին: Դրսում ցուրտ էր, ահավոր ցուրտ: Վարդանն անասելի սկսեց կարոտել իրենց ետևում թողած դրախտը՝ ջերմ ու ծաղկավետ:

Հասան մի քարայրի: Պարզ էր, որ այն ծերունու բնակավայրն էր: Մուտքի ձյունը մաքրեցին և մի քանի ճյուղ հավաքեցին՝ վառելու համար: Ծանոթ մի մռնչյունից ետ շրջվեցին: Արջ եղբայրն էր եկողը: Երկու ընկերներն ուրախությամբ և ջերմությամբ փաթաթվեցին միմյանց: Արջը քաղցրորեն լիզեց ծերունու երեսը, և կարծես այդ կերպ բարեկամական ըմբշամարտի բռնվեցին: Վարդանը բարի նախանձով լցվեց այս իրողությունից և մի քանի անգամ ձնագնդակով հարվածեց նրանց: Արջ եղբայրը և ծերունին վազեցին նրա ետևից՝ բռնելու համար, սակայն խորամանկ Վարդանը փախավ քարայրի մեջ և դուռը կողպեց: Երկար աղաչանք-պաղատանքից հետո միայն ծերունուն ընդունեց ներս:

Ներսում ամեն ինչ պարզ էր ու հասարակ, միայն տարիների խնամք կար այդտեղ: Փայտից պատրաստված երկու դռներ կային՝ ցրտից պաշտպանվելու համար: Դարակներ էին պատրաստված պատերի մեջ, կային նաև մեկական պահարան և սնդուկ՝ եղեգնահյուս: Անկողնի պաշտոն կատարողը մի սալահատակ էր՝ բարակ շիվերով պատրաստված, վրան նուրբ հարդով փափկացրած:

– Ես այս ամենը կատարել եմ այս կացինով և մի հասարակ դանակով, – ասաց ծերունին:

Ջրի ամաններ ուներ՝ զանազան տարողունակությամբ, պատրաստված չորացրած դդումի կեղևներից: Ծերունին ձեռքը մեկնեց և պատերից կախված չորացրած մրգերից մի փունջ վերցրեց, մի քանիսը իր բերանը նետեց և մնացյալը հրամցրեց Վարդանին: Այնուհետև կրակ վառեցին՝ ներսը տաքացնելու համար:

– Ծխնելո՛ւյզ էլ ունես: Շատ հարմար տեղ ես ընտրել բնակվելու համար:

– Առաջին տարվա ողջ ամառվա ընթացքում աշխատեցի, որպեսզի ապահով բնակելի վայրի վերածեմ այս քարայրը: Օձերի մի բույն էր սա: Երկու արծվի ձագեր դողացա ժայռերից, որոնք ամբողջ ամառ ինձ հետ եղան: Մեկ ամսվա ընթացքում այնպե՛ս սնվեցին օձերով, որ դարձան երկու խոշոր արքայական արծիվներ: Բազմաթիվ անցքեր կային, բոլորը փակեցի, բացի մեկից, որն այնուհետև վերածեցի ծխնելույզի:

– Արջ եղբայրը ինչո՞ւ ձմեռային քուն չի մտել դեռ, տարօրինակ չէ՞, – հարցրեց Վարդանը:

– Վաղը պիտի քուն մտնի, մեր գնալուց հետո: Նրան որպես ժառանգություն պետք է թողնեմ այս քարայրը, – մի քիչ լուրջ ու մտածկոտ շարունակեց ծերունին: – Այս օրը շատ կարևոր էր ինձ համար: Աղոթեցի Աստծուն, որպեսզի մեկին ուղարկի ինձ մոտ այսուհետ, և քեզ ուղարկեց, Հայ Եկեղեցու մի վարդապետի: Ավելի քան երեսուն տարի Հաղորդություն չեմ ստացել: Ա՛յս օրվան էի սպասում:

Վարդանն անդրադարձավ, որ իր Սրբատուփի մեջ Հաղորդություն կա:

– Սակայն, – ասաց Վարդանը, – առաջին գիշերած քա-

րայրի մեջ թողեցի տոպրակս. երբ դուրս եկա, կանչեցիր ինձ քարայրից, և կարծեցի, թե կրկին այնտեղ պիտի վերադառնանք:

– Հոգ մի արա, Արջ եղբայրն այն կբերի: Նա լավ գիտի քարայրի տեղը: Գնա – ասա՛ նրան, որ վերցնի և այստեղ բերի տոպրակը:

Արդյո՞ք ինձ կհասկանա նա:

– Ինձ հասկանում է, իսկ ինչո՞ւ քե՛զ չպետք է հասկանա:

Ճիշտ դուռը բացելու պահին Վարդանը շրջվեց և անհամարձակ հարցրեց.

– Ձյունագնդիկների պատճառով Արջ եղբայրը չլինի՞ թե բարկացած լինի ինձ վրա:

– Հա՛, հա՛, հա՛, – քահ-քահ ծիծաղեց ծերունին, – ու խակալուծյունը հատուկ է մարդկանց: Իսկ արջ եղբայրը վաղո՛ւց արդեն մոռացել է ձնագնդիկներին: Նա և՛ կատակի ջիղ ունի, և՛ շատ լավ հասկանում է ու տարբերում բարեկամի ձյունագնդակը որսորդի լարած աղեղից: Հոգ մի անի:

Արջ եղբայրը նայեց Վարդանի երեսին, ու Վարդանը դիմեց նրան.

– Սիրելի՛ Արջ եղբայր, կբարեհաճե՞ս իմ տոպրակը բերել այստեղ այն քարայրից, որտեղ առաջին անգամ քեզ հանդիպեցինք, հիշո՞ւմ ես, չէ՞: Դե, գնա՛ և բեր այստեղ այն:

Արջ եղբայրը արջի նման նայեց Վարդանի երեսին և ոչ մի տեղ էլ չգնաց, իհարկե: Վարդանը մի քանի անգամ ոտքով ու ձեռքով անկանոն շարժումներ արեց: Այս անգամ Արջ եղբայրը սկսեց լիզել նրա ձեռքերը: Վարդանը կռահեց, որ քիչ հետո էլ պիտի սկսի լիզել իր երեսները: Վարդանը ստիպված կրկին ներս մտավ:

– Արջ եղբայրը ինձ չի հասկանում: Խնդրում եմ՝ դու բացատրես նրան, որ գնա:

– Իհարկե, ես կարող եմ բացատրել, բայց դու էլ պետք է սովորես կենդանիների հետ խոսել: Այսուհետ դու այդ շնորհն ունես, պետք է օգտագործես:

– Խոսեցի, բայց Արջ եղբայրը չհասկացավ: Ուրիշ ինչ-պե՞ս խոսեմ, չգիտեմ:

– Դու միայն բառերով խոսեցիր նրա հետ, կարծես մարդու հետ էիր խոսում: Նա կենդանի է, և նրա հասկացողությունը տարբեր է մեզանից: Նրա պատկերացումները թաքնված զգացումներով պիտի խոսես:

– Ինչպե՞ս, այսինքն՝ յուզաներկ մի պատկեր պետք է նկարեմ ու ցո՞ւյց տամ նրան, – կատակեց Վարդանը:

– Ճիշտ այդպես, բայց ոչ ներկով, այլ երևակայությունից պատկերես այն և փոխանցես Արջ եղբոր աչքերին մի գործվոր զգացումով: Անասուններն ինչպե՞ս են հասկանում վախեցողներին, սիրողներին կամ որսորդներին, որոնք ա-կամայից պատկերներ են փոխանցում անասուններին:

Վարդանը դուրս գնաց: Իր մտքում գծագրեց այն ամենը, ինչը պիտի փոխանցեր Արջ եղբորը: Սիրագործով նայեց աչքերին և գրպանում մնացած մի քանի չորացած պտուղները հրամցրեց նրան: Մի քիչ երկար տևեց այս ամենը, բայց, ի վերջո, Արջ եղբայրը քայլեց և հեռացավ: «Հուսանք, որ նա հասկացավ, թե ինչ ենք ցանկանում նրանից», – մտածեց Վարդանն ինքնաբերաբար:

Երբ կրկին մտավ քարայրը, անակնկալ էր սպասում նրան: Ծերունին հագել էր մի սև սքեմ, վեղար դրել գլխին և մի լանջախաչ կախել վզից: Այս տեսնելով՝ Վարդանը մանկան պես ուրախացավ:

– Անունդ չասացիր, բայց հայտնի դարձավ, որ դու մի հայ վարդապետ ես եղել ժամանակին: Գիտե՞ս, ես արդեն

կուսակցությունները: Քո կրթությունը սուրբ գրություններում մատնում էր քեզ: Վարդապետ ես, ի՞նչ բարի մի վարդապետ եղբայր:

– Այո՛, քեզ նման մի հոգնած վարդապետ, հոգնած և ձանձրացած՝ իր շուրջը վխտացող կեղծավորություններից, ամուլ պաշտամունքներից և խոսքի և գործի աններելի հակասություններից: Ցորենի մի հատի՞կ էի խորխորատում, թե՞ մեռած էի՝ հողի մեջ ընկնելով, այս սքեմը հագնելով և վանքում երկար տարիներ Աստծո կամքին չէի ցանկանում հանձնվել: Քեզ նման որքան ցանկանում էի ինքնաբերաբար, կամովին քաշվել լեռները, չէի կարողանում:

– Ի՞նչ եղավ, ինչպե՞ս եղավ, որ ընտրեցիր մենակությունը:

– Ընտրությունն իմ կողմից չէր, դժբախտաբար ես աքսորվեցի:

– Ո՞վ քեզ աքսորեց:

– Խի՛ղձս, խի՛ղձս էր, որ աքսորեց ինձ, և ես երեսուն տարի շարունակ սրտիս վրա շղթաների կապանքներ զգացի որպես պատիժ:

Մի պահ կանգ առավ, աչքերը հառեց քարայրի դատարկություն ուղղությամբ, որով կարծես դիտում էր անբաղձալի իր անցյալը:

– Այժմ ոչ ոք այլևս պատմելիքս չգիտի: Իմացող մի քանի հոգիներն էլ մահացել են: Դո՛ւ էլ իրավունք ունես իմանալու, որովհետև քիչ հետ Հաղորդություն պիտի ստանամ քո ձեռքից: Որպես խոստովանություն ընդունիր խոսքերս, սիրելի հայր սուրբ: – Այնուհետև խոսքը շարունակեց՝ գետնին նայելով, – վանական կյանքին ծանոթ ես. միապաղաղ, ձանձրալի և սառը, հատկապես այն ժամանակ, երբ հոգեհարազատ անձերով չես շրջապատված, և հոգևոր արկածախնդրությունը կանգ է առել վաղուց, ու

ամեն ինչ վերածվել է վարժություն: Ես երկար տարիներ տեսնում էի հոգևոր այս չորությունը ինձ վրա: Ընթերցումներով ջանում էի լրացնել այս պակասը, սակայն սին հպարտություն էր միայն ձեռք բերածս: Հոգևոր կյանքը իր օրենքներն ունի. կա՛մ դեպի առաջ պիտի ընթանաս, կա՛մ դեպի ետ սահես: Հոգևոր կյանքը լեռ բարձրանալու նման մի բան է: Քեզ չի արտոնում կանգ առնել կես ճանապարհին մինչև չհասնես կատարին: Եթե ոչ՝ ջարդ ու փշուր կլինես: Այս վիճակը տարիներ տևեց և, ի վերջո, մտքի մեղքերը ծնունդ տվեցին մի աահավոր ողբերգություն:

Մի պահ կանգ առավ: Երևում էր, որ Նա դժվարություններ է խոսում: Այնուհետև շարունակեց խոսել՝ աչքերը տամկացած.

– Մեծ Պահքին շրջակա գյուղերն այցելելու և քարոզելու սովորություն ունեինք: Ես էի բոլորից կարկառուն քարոզիչը մեր վանքում, խոսքի մեծ վարպետ: Մի գյուղում քարոզս այնքա՛ն հավանեցին, որ աղաչում էին ինձ, որպեսզի մի քանի օր ևս մնամ այնտեղ և քարոզ խոսեմ նրանց: Հյուրասիրվեցի տեղի մի քահանայի կողմից: Պատկառելի և ազնիվ մի անձնավորություն էր նա: Իր կույս դստերը, որ շատ գեղեցիկ էր, հրապուրեցի, խաբեցի և պղծեցի: Մեր հարաբերությունները տևեցին մի քանի ամիս: Ամուսնանալու խոստումներ էի տալիս նրան: Խեղճ քահանան ոչ մի բանից լուր չունեի, չէր պատկերացնում, թե ինչպիսի իժ է հյուրընկալում իր հարկի ներքո: Կեսօրին քարոզում էի սրբություն, իսկ գիշերները գործում էի պղծություն: Ի վերջո՝ աղջիկը հղիացավ: Անշուշտ, հասկանում ես թե այսպիսի իրողությունը որքան անպատվություն է քրիստոնյա համայնքում մի կույս աղջկա համար, և՛ նրա ընտանիքին հասած անպատվությունը: Երբ

Հայրը իմացավ այս վիճակը, վաճառեց եկավ, աղաչեց ինձ, որ մեղքս քավեմ՝ ամուսնանալով իր աղջկա հետ: Կտրուկ մերժեցի: Վանահայրը մեռել էր, և միաբանությունը ինձ պիտի վանահայր ընտրեր միաձայնությունով: Այլևս ուրիշ թեկնածու չկար: Ինչպե՞ս կարող էի այսպիսի բարեբաստիկ առիթը բաց թողնել: Ինչպե՞ս կարող էի ամուսնանալ և անբիծ անունս խայտառակել: Բոլոր կապերս խզեցի նրանց հետ և սպառնացի, որ ես խայտառակ կանեմ նրանց, եթե շատ համառեն:

Ծերունու շնչառությունը հետզհետե արագանում էր, և երեսը տխրագին, քրտնաթոր տեսք էր ընդունում:

– Մեկ շաբաթ անց լուր ստացա, թե աղջիկը արկածի է ենթարկվել ու սարից ընկնելով՝ մահացել: Փառք տվեցի Աստծուն, որ այս կերպ փակվեց այս հարցը՝ առանց տեղի տալու որևէ խայտառակության: Ոչ ոք չիմացավ նրա հղիության մասին: «Ի՛նչ մեծ բախտավորություն», – հանգիստ շունչ քաշելով՝ մտածում էի ես: Սակայն հուղարկավորությունից հետո հայրը այցելեց ինձ և աչքերիս մեջ նայելով՝ ասաց.

– Դժոխքից քեզ մի ճշմարտություն բերեցի:

Իմ շուրջը այլ անձինք ևս կային: Շվարեցի, վախեցա, որ կարող է բղավել, բարձրաձայն խայտառակել ինձ: Բայց այդպես չվարվեց:

– Ո՛չ, ո՛չ, այս հարցը ուրիշներին հետաքրքիր չէ, այս ճշմարտությունը մի՛միայն քեզ համար է, – ասաց՝ սառը ժպիտը շրթներին և ականջիս փսփսաց: – Անձնասպան եղավ:

Այսքանը, այլևս ուրիշ ոչինչ չասաց ու հեռացավ:

Խորը շունչ քաշեց ծերունին, պրկվեցին դեմքի բոլոր մկանները, շրթները կծոտեց և շարունակեց իր խոսքը ավելի ցածր ձայնով ու գլխահակ:

– Կրակները մեջ ընկա: Իրապես դժոխային մի ճշմարտություն էր դա, որ սկսեց ինձ տանջել անխնա կերպով: Միայն այդ ժամանակ հասկացա գործած մեղքերիս ծանրությունը: Չէի համարձակվում եկեղեցի մտնել, աղոթել, Սուրբ Գիրք կարդալ: Դավթի ապաշխարության սաղմոսներն անգամ բավարար չէին գործածա մեղքերի վրա ողբալու: Քուն չունեի, ախորժակ չունեի: Ընտրությունների օրը այս սքեմով պայուսակա վեցրեցի և փախա վանքից: Միայն իմ մի մտերիմ ընկերոջը համառոտակի բացատրություն տվեցի.

– Ես անարժան եմ՝ վանահայր ընտրվելու: Ձգում եմ, որ ես որոշ ժամանակ մենակյաց կյանքով պետք է ապրեմ: Դրա համար էլ գնում եմ լեռները՝ ճգնելու:

Միայն լեռների սառնամանիքը կարող էր հանգսնել դժոխքի կրակը: Սակայն նրանք էլ անկարող էին բավարարել՝ հանգիստ տալու բորբոքված խղճիս: Բոլոր անդունդները ինձ կանչում էին՝ անձնասպան լինելու, որպեսզի վերջնականապես փրկվեմ մտատանջանքներիցս: Սակայն Տերը ողորմած եղավ: Երբ ուխտ արեցի, որ պիտի ապաշխարեմ երեսուն տարի, միայն այդ ժամանակ փոքր-ինչ խաղաղություն գտա:

– Ինչո՞ւ երեսուն տարի, – հարցրեց Վարդանը:
Դառնադետ ժպտաց ծերունին և ասաց.

– Երբ վարդապետ էի, մեր աշակերտներին սովորեցնում էի ապաշխարության կանոնները: Անապատի հայրերը պոռնկության մեղքի համար տասը տարի ապաշխարություն էին սահմանել: Իսկ ես երեք մահացու մեղք էի գործել. պոռնկություն և մահ՝ անմեղ մի աղջկա և անծին երեխայի: Բայց այժմ հասկանում եմ, որ նույնիսկ երեսուն տարիներն էլ քիչ էին: Տասը տարի ևս պետք էր, որ ապաշխարեի՝ այդ ազնիվ քահանայի վստահությունը չարաչար

դավաճանած լինելու համար:

Ծերունին լռեց: Վարդանն արտասովում էր:

– Քո սուրբը շոգիացավ հանկարծ, այնպես չէ՞:

– Ո՛չ, – ասաց Վարդանը, – ավելի՛ սրբացավ:

Եվ ընկավ ծերունու ծնկներին, բռնեց նրա ձեռքը և ար-
ցունքոտ աչքերով համբուրեց:

– Շատ ես նեղություն կրել, շատ ես տանջանքներ տե-
սել: Այսքանը բավարա՛ր է: Վե՛րջ տուր այլևս այս տառա-
պանքներին: Դու գեղեցիկ մի վարդ ես լեռների: Ո՞ւմ հոգն
է, թե նա իր արմատներին ցանված ինչ աղբերով է մեծա-
ցել:

– Հակառակ այն բոլոր մեծ հայտնություններին, հրաշք-
ներին և կատարելության աստիճաններին, որոնց դու էլ
վկա եղար: Ամեն օր վզիցս կախված մի քար կրեցի, սակայն
Աստված կատարյալ հանգիստ չընդհատեց ինձ, մինչև չլրա-
ցավ ապաշխարության երեսուն տարին: Երեկ գիշեր Ամե-
նակարող Տերը վերջ դրեց ապաշխարությանս: Այսուհետև
ազատ եմ այլևս և նվիրված բոլորովին: Տերը աղջկա և ե-
րեխայի հոգիները ցույց տվեց ինձ: Երջանիկ էին և
փրկված: Իսկ քահանան եկավ՝ լույսերի մեջ ողողված և ա-
սաց. «Ես քեզ արդեն վաղո՛ւց ներել եմ»: Քո աղոթքները
նույնպես օգնեցին ինձ, շնորհակալ եմ:

Ծերունին շոյեց Վարդանի գլուխը:

– Հիմա հասկանում ես, թե ինչու անուն չունեմ ես: Ա-
նունս փրկելու համար ինչպիսի՛ մեծ մեղքեր գործեցի: Ար-
ժե՞ր, արդյոք: Սիրում էի այդ աղջկան, կարող էի ամուս-
նանալ նրա հետ և կես ճանապարհից քավել բոլոր մեղ-
քերս... Ինչ որ է, այսպես է եղել իմ ճանապարհը:

Արջ եղբոր ձայնը հնչեց դրսում: Վարդանը մի բուռ չո-
րացած պտուղներով դուրս գնաց: Արջը, իր ակռաներով
բռնած, բերել էր տոպրակը, որը դրեց Վարդանի ոտքերի

առջև և նրանից ստացավ իր թանկագին նվերը: Վարդանը ներս բերեց:

– Սրբատուփղ հանիր, խոստովանեցրու և Հաղորդություն տուր ինձ, հայր սուրբ:

– Մի՛ արա, հայր սուրբ, դու Հիսուսի նման ես, իսկ ես՝ Մկրտչի: Ե՛ս պետք է, որ խոստովանեմ քեզ և Հաղորդություն ընդունեմ քո ձեռքից:

– Այժմ մեզ անհրաժեշտ է արդարությունն ամբողջությամբ բերել տեղը: Թո՛ւյլ տուր, որ խոստովանեմ և Հաղորդություն ստանամ ձեռքիցդ:

Վարդանը բաց արեց սրբատուփը՝ Հաղորդություն տալու համար ծերունու, որը ծնրադրել էր նրա առջև: Ծերունին խոստովանեց և արցունքաթաթախ աչքերով երեսուն տարի հետո առաջին Հաղորդությունը ստացավ Վարդանի ձեռքից: Ընկան բոլոր շղթաները նրա սրտից, հաշտվեց ամեն ինչի հետ ու մի ժպիտ ծլարձակեց նրա հոգնած հոգու մեջ՝ Քրիստոսից կնքված:



ՄԻ ՎԵՐՁ, ՈՐ ՄԻ ՍԿԻՋԲ ԷՐ

Արևն արդեն վաղուց մայր էր մտել: Մի մրրիկ էր փչում իր վաղեմի վայրենի սուլիչով, լիզելով ժայռերն ու ծառերը, ցուրտը բարկասիրտ սպառնում էր իր քթից շնչած բոլորին: Կրակի հանդարտ ձայնը ավելի սրտամոտ էր: Նրա ջերմությունից ալիք-ալիք ապահովություն էր շողարձակում:

– Արջ եղբայրն ի՞նչ է անում այժմ, – լռությունն ընդհատեց Վարդանը:

– Մոտակա քարայրի մեջ է, իր որջում, մի՛ անհանգստացիր նրա համար:

– Այնուհետև ի՞նչ պիտի անես, սիրելի հայր սուրբ, այսինքն ինձ ճանապարհելուց հետո: Ի՞նչ ծրագրեր ունես: Քանի որ ապաշխարանքի օրերդ լրացան, կարող ես ինձ հետ ցած իջնել: Ի՞նչ լավ կլիներ, եթե աշխարհը տեսներ, թե լեռներն ինչպիսի սրբեր են ծնում:

– Ո՛չ, այլևս ցած իջնել չեմ ցանկանում: Ավելի վեր մագլցել եմ ցանկանում՝ նոր կատարներ, նոր բարձունքներ գրավելու:

Ծերունին ոտքի ելավ և սկսեց մաքրել քարայրի աջակողմը հարդերով և ճյուղերով ծածկված հատակը: Մի կույտ քարեր էին դիզված: Ծերունին սկսեց մեկ առ մեկ քարերը մի կողմ հավաքել: Քիչ անց մի փոս հայտնվեց:

– Ապաշխարության առաջին տասը տարիներին պեղեցի այս ժայռափոր փոսը ափ առ ափ: Այնուհետև փակեցի՝ պահելով ա՛յս օրվա համար:

– Ի՞նչ նպատակի պիտի ծառայի այն:

– Ողջ կյանքիս ընթացքում հավաքած գանձս այստեղ

պիտի թաղեմ, հա՛, հա՛, հա՛:

Ծերունին կրկին վերագտել էր իր գվարթ կերպարանքը: Սակայն Վարդանը տեսավ իր հոգևոր աչքերով, թե ծերունին ինչ էր ակնարկում: Դա նրա գերեզմանն էր:

Արի մի փոքր էլ դու օգնիր, – Վարդանին դիմեց ծերունին:

– Սակայն Վարդանը բացասաբար շարժեց գլուխը: Մի սարսափ էր պատել աչքերին:

– Շատ լավ, – ասաց ծերունին, – ես կբացեմ, իսկ դու կծածկես, գործի արդար բաժանում, հա՛, հա՛, հա՛:

– Վարդանը մոլեգնաբար ցատկեց տեղից և սկսեց վերցրած քարերը արագորեն լցնել փոսի մեջ: Վարդանը նման էր մի խենթի:

– Այդ ի՞նչ ես անում:

– Քո ասածն եմ անում: Դու կբանաս, իսկ ես կծածկեմ:

– Այ՛ո, բայց միայն գանձն այնտեղ դնելուց հետո:

– Կատակ մի՛ արա ինձ հետ: Մի՛ կարծիր, թե ես չհասկացա: Դու պիտի պառկես այնտեղ: Քո գերեզմանն է այս փոսը, որ բացում ես:

– Ի՞նչ կա սրա մեջ այսքան տարօրինակ: Բոլոր ապրողներն էլ մի օր պիտի մահանան, իմ ժամանակը հասել է այլևս:

– Ի՞նչ ժամանակ, – առարկեց Վարդանը, – դու իմ կյանքում տեսած մարդկանցից ամենից առողջն ես:

– Օձը իր կաշին փոխում է, երբ առողջ է: Այլևս մենք մահվան կողմից այստեղ–այնտեղ քաշվելու մարդիկ չենք: Մե՛նք ենք որոշում, թե երբ պիտի անցնենք այդ կամրջից այն կողմ:

Սակայն Վարդանը չէր լսում և արտասովում էր: Հեծկլտալով փաթաթվեց ծերունուն:

– Ինչո՞ւ ես ինձ տանջում այսպես: Ինչո՞ւ այս գիշեր:

Իմ գնալուց հետո թող տեղի ունենա այս բանը:

– Եթե դու մահվանն այսպիսի դառն ազդեցություն ցուցաբերես, ներքևում խեղճերն ինչպե՞ս կարող են մխիթարություն գտնել, – ծերունին սիրով ու ժպիտով նայեց Վարդանի աչքերին: – Քեզ ամեն ինչ պատմեցի: Երեկ գիշեր, երբ Տերը ետ տվեց ինձ իմ ազատությունը, հարցրեց, թե այսուհետև ի՞նչ կցանկանայի անել: Ես էլ նրան պատասխանեցի. «Մեռնել և քեզ հետ լինել կցանկանամ»: Նա էլ ժպտալով ինձ ասաց. «Անմիջապես արի»: Դու էլ տեսար, թե Տերը որքան քաղցր է ու որքան անբաղդատելի՝ նրա գեղեցկությունը: Չե՞ս ցանկանում, որ գնամ նրա մոտ:

Վարդանը դուրս եկավ գերեզմանից, կծկվեց մի կողմում և տաղտուկ աչքերով դիտեց իր գերեզմանը պատրաստող ծերունուն:

– Ես հիմա էլ նախանձում եմ քեզ, – սաց Վարդանը: – Ի՛նձ էլ տար, ուր որ գնալու ես: Միասին մտնենք մահվան գիրկը, այնպես, ինչպես այն քարայրներից մեկը, որ միասին մտանք ու դուրս եկանք՝ միշտ ճոխացած:

– Քո ժամանակը գեռես չի հասել:

Ծերունին գերեզմանից դուրս եկավ և նստեց Վարդանի կողքին ու գլուխը դրեց նրա ուսերին՝ առաջվա նման:

– Կյանքիս ամենից խորհրդավոր և երջանիկ գիշերն է սա: Ես շատ գոհ եմ, որ դու էլ իմ կողքին ես: Կարող ես երևակայել, մարդու ողջ կյանքը այս գիշերվա պատրաստությունն է, այնպես. ինչպես հղիության ինն ամիսները՝ ծննդաբերություն: Պիտի մի նոր աշխարհ ծնեմ, որտեղ պիտի շարունակեմ մեծանալ, հասունանալ և կատարելագործել իմ անձը, մինչև Քրիստոսի նման դառնամ:

– Ինչո՞ւ ես ցանկանում այսքան վաղ մեկնել: Չե՞ս մտածում, որ մարդկությունը քո հասունության և գիտեցածների կարիքն ունի, և շատ ու շատ օգտակար կարող ես

լինել և հարստացել նրանց կյանքը՝ քո հոգևոր փորձա-
նուկթյունը բաժանելով նրանց:

– Այո՛, բայց հոգևոր կյանքի զարգացումը ճիշտ հակա-
ռակ ուղղութեամբ է ընթանում: Օդի մեջ քայլող մեկին
տեսնելով՝ հավատքի եկող մարդկանց կարիքը չունի Աստ-
ված: Եթե այդպես լիներ, ապա ինքը՝ Տերը, կգործադրեր
այս կերպը՝ մարդկանց մեջ հավատք արթնացնելու: Քեզ և
ինձ համար էլ կարիքը չունի՝ այդպես վարվելու: Աստված
մեզմ ու նուրբ ձայնով է կանչում համայն մարդկութեանը
և փափագում, որ միայն նրանք ընդառաջ դան, որոնք այս
կանչին են հետևում: Մարդիկ մի սեր ունեն իրենց սրտե-
րում որպես դրամագլուխ: Աստված ցանկանում է տեսնել,
որ ի՛ր համար տրամադրեն այն և իրենց տրամադրածի հա-
մաձայն ստանան իրենց տոկոսը: Հետևաբար, դու էլ
չպետք է մսխես հրաշքներդ՝ հավատք տարածելու համար,
եթե ոչ՝ կպատժվես, և ձեռքիցդ ետ կառնվեն այդ շնորհք-
ները: Ինձանից եղբայրական մի խրատ քեզ. մի՛միայն
բժշկութեան համար օգտագործիր հրաշքի շնորհքներդ: Այս
կերպ ապահով գետնի վրա կգտնվես: Ձեռքերդ հրաշքների
համար կրթելուց ավելի, ականջներդ կրթիր՝ Հոգու նուրբ
ձայնը լսելու և Նրա՛ գիտութեան խոսքը ստանալու, թե
յուրաքանչյուր տվյալ պարագայում ինչպե՞ս վարվես:

Խոսեցին, զրուցեցին, և Վարդանի տրամադրությունն էլ
բարձրացավ հետզհետե: Կրկին իր մեջ արթնացավ այն գի-
տակցությունը, որ առաջին տեսիլքով հայտնվել էր իրեն:
Տարբերությունն չկար կյանքի և մահվան միջև: Երկուսն էլ
լցված էին նոր ուղիներով ու արկածախնդրութեամբ և
հույս հետաքրքրական: Վարդանը պիտի իջներ Ամրդու,
իսկ ծերունին պիտի բարձրանար երկնային Երուսաղեմ:
Վարդանն անգամ սկսեց կատակել.

– Ինձ այնպես է թվում, որ ինձ գլխիցդ ազատելու հա-
մար հնարեցիր այս մեռնելու պատմությունը: Քեզ պիտի

Թաղեմ, և իմ գնալուց հետո դու նորից պիտի գաս և գնաս մեր դրախտապարտեզը՝ լողալու:

– Ո՛հ, ո՛հ, իրապես պիտի մեռնեմ բոլոր մարդկանց նման ու ետ գալու էլ միտք չունեմ երբեք: Բայց որպեսզի փաստեմ, եթե կուզես, իհարկե, յոթ տարի հետո կգաս և կտեսնես ոսկորներս:

– Մասունք էլ կվերցնեմ քեզանից, ի՛նչ լավ է:

– Այո՛, բայց շատ չվերցնես, – կատակեց ծերունին, – միայն աջ ձեռքիս ճկույթը, եղա՞վ:

– Եղավ, – ասաց Վարդանը և կրկին սկսեց արտասվել:

Փաթաթվեցին հայր ու որդու նման. մեկը արտասվում էր, իսկ մյուսը՝ խնդում: Ծերունին իր լանջախաչը հանեց և անցկացրեց Վարդանի վիզը, ապա ոտքի կանգնեց ու գնաց, մտավ գերեզման ու պառկեց:

– Բարի գիշեր, եղբայր, բարի գիշեր:

– Սխա՛լ ասացիր, ա՛յ ծերուկ, սխա՛լ ասացիր: Պետք է ասեիր՝ «Բարի լո՛ւյս, բարի լո՛ւյս», քանի որ մենք այլևս գիշեր չունենք:

– Ի՛նչ լավ աշակերտ ես: Ուսուցչիդ սխալն ես ճշտում: Բար լո՛ւյս, ա՛յ տղա, բարի լո՛ւյս:

Վարդանն էլ նստեց գերեզմանի եզերքին և թույլ չէր տալիս, որ քուն մտնի ծերունին: Շարունակ բաներ էր հարցնում տեղի-անտեղի: Ծերունին ասաց ի վերջո:

– Այժմ ազա՛տ արձակիր ինձ: Մի վերջին անգամ ևս թող տեսնեմ դեմքիդ ժպիտը մեկնելուց առաջ:

Վարդանը դժվարությամբ ժպտալ ջանաց:

– Գնաս բարո՛վ, եղբա՛յր, գնաս բարո՛վ, մինչև որ կրկին տեսնվենք: Բարի ճամփորդություն՝ քեզ:

Ծերունին աչքերը փակեց: Վարդանը հեռացավ գերեզմանից, նստեց կրակի մոտ՝ աչքերը հառած բոցերի պարին: Աղոթեց ծերունու համար, և մի մրափ պատեց նրա աչքերին, և քուն մտավ նստած տեղում: Երբ արթնացավ, վար-

դի անուշահոտութեամբ լցվել էր քարայրը: Վազեց գերեզման: Ծերունին քնած էր: Ցած իջավ: Մարմինը սառած էր, և բազկերակը չէր տրոփում այլևս: Մեռած էր ծերունին: Գերեզմանի եզերքին այդպես անշարժ նստած մնաց Վարդանը և այլևս չէր արտասվում: Անանուն մի դատարկութուն էր թողնել այն անանուն սուրբը Վարդանի սրտում իր մեկնումով: Կարծես երկար տարիներ ծանոթ մի բարեկամի էր կորցրել: Նա վեր կացավ, մի քանի տախտակներ զետեղեց մարմնի վրա և սկսեց քարեր դիզել դրանց վրա: Շուրջ մեկ ժամ տեղեց գերեզմանը ծածկելու գործը: Ծերունու գավազանը տնկեց գլխի կողմը: Ծես կատարել սկսեց, սակայն կանգ առավ: Իր իմացած հուղարկավորութեան բոլոր աղոթքներն այս սրբի պարագային անիմաստ էին հնչում: Հետևաբար ազատորեն աղոթեց, ինչպես որ իր սիրտը և իրողութեանն էր պահանջում.

– Աղոթի՛ր մեզ համար, սիրելի՛ հայր սուրբ, Անանո՛ւն սուրբը մեր Եկեղեցու: Մի՛ մոռացիր քեզ ծնունդ տվող մարդկութեանը, քո ազգին, վանքերն ու քո եղբայրներին անկատար: Դո՛ւ, որ հաղթականորեն անցար մյուս կողմը, հիշի՛ր մեզ Տիրոջ ողորմութեան Աթոռի առջև: Փա՛ռք Քեզ, Տե՛ր, որ պատասխանեցիր բոլոր հարցումներիս լիուլի, փա՛ռք քեզ, որ այն անանուն սրբին դիմացս հանեցիր: Իր ընկերակցութեամբ ես գտա քե՛զ նաև, մեծագույն Գանձը՝ սրտիս բաղձալին:

Վարդանը բացեց դուռը, Արջ եղբայրն այնտեղ էր: Ներս բերեց նրան: Արջ եղբայրը շուրջը նայեց: Ամեն ինչ ծանոթ էր այնտեղ իր համար: Աչքերը փնտրեցին իր համար ամենից ծանոթին՝ իր ծերունի եղբորը: Չգտավ: Վարդանի երեսին նայեց հարցական: Վարդանն աչքերով պատմեց նրա աչքերին, որ ծերունին մահացել էր: Գերեզմանը ցույց տվեց նրան: Արջ եղբայրը մոտեցավ գերեզմանին, ոտքի կանգնեց և մոնչաց դառնորեն, կարծես ճագը կորց-

րած լինեն: Փռվեց գերեզմանի վրա: Վարդանի մոտեցավ նրան, գլուխը շոյեց: Արջ եղբոր աչքերի մեջ արցունքներ կային: Երբ յոթ տարի հետո եկավ Վարդանը, Արջ եղբոր դիակը գտավ գերեզմանի վրա՝ նույնպես պառկած:

Վարդանը դուրս եկավ: Արևաշող մի օր էր՝ առաջին օրվա նման: Մի քանի քայլից հետո շրջեց գլուխը՝ մի վերջին անգամ քարայրը տեսնելու: Այդ պահին մի ձայն հնչեց քարայրից.

– Հա՛, հա՛, հա՛:

Վարդանը հասկացավ պատգամը և պատասխանեց.

– Հա՛, հա՛, հա՛:

Նա քայլերն ուղղեց դեպի ցած: Նրա բոլոր ճանապարհները կտրվում էին անանցանելի վիհերով, ճեղքերով կամ անդունդներով: Ելք չէին շնորհում իրեն ճյուղապատ լեռները: Հեռվից գայլեր էին մոտենում՝ իր վրա հարձակվելու համար: Վարդանը Քրիստոսին հագավ իր վրա: Գայլերն իրենց Տիրոջը տեսան ու ճանաչեցին Նրան աչքերի մեջ: Եկան ու ձեռքերը լիզեցին ուրախությամբ: Վարդանը հորիզոնը դիտեց անդունդի եզերքից: Երիտասարդ մի արծիվ թռուց նրա աջ ուսին: Հանկարծ աղմուկ լսվեց ետևից: Վարդանը շրջեց և տեսավ, որ մի ձնահոսք էր պոկվել և ահարկու ջրհեղեղի նման գալիս էր իր վրա: Նա հասկացավ, որ այդ հոսանքը իրեն պիտի խլեր ու տաներ դեպի անդունդ՝ ջարդուփշուր անելու: Թևերը վեր բարձրացրեց աղոթքի նման և զորավոր մի ձայնով բղավեց.

– Ո՛ւր ես, ո՛վ Տեր: Ես պետք է տուն վերադառնամ: Ծանապարհ բացեք ինձ համար, ո՛վ անդունդներ:

Իրեն ծանոթ երջանիկ Հովը խլեց Վարդանին, նախքան ձնահոսքի հասնելը, բարձրացրեց անդունդներից վեր: Արծիվը զարմացավ, որ այս մարդու որդին ինչպե՞ս կարող էր իրենից արագ թռչել:

ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՄԱՍ Բ

ՄԻ ՆՈՐ ՊԱՏՈՒՀԱՆ

Երկու ամիս անց Գրիգորն ու Կոլոտը, որպես լիիրավ անդամ, գրկաբաց ընդունվեցին Սուրբ Կարապետ վանքի միաբանության կողմից: Նրանց գործը ուսուցչությունն ու խոստովանահայրությունն էին: Միաբանության միաձայն որոշմամբ ուսման ծրագրերը վերակազմվեցին Վարդան Վարդապետի մեթոդների համաձայն: Կարապետ Սրբազանի կարգադրությամբ Կոլոտը ստանձնեց նաև տնտես Հայր Թովմասի օգնականի պաշտոնը, որը նրան հնարավորություն ընձեռեց նոր և շատ կարևոր գիտելիքներ ձեռք բերել. թեև խորապես հոգևոր՝ նրա մեջ արթնացավ մամոնայի ճամփաները լավ սովորելու տարօրինակ մի ձգտում: Այս հսկա վանքում էլ տնտեսությունը մեծ շարժման մեջ էր, ինչպես մյուս բոլոր վանքերում:

Այստեղ Հովհաննես վարդապետը մոտիկից ծանոթացավ հոգևոր կյանքի հնագույն ճշմարտության հետ: Առանց մարմնի հոգին կաթվածահար էր, ճշմարտությունը՝ մունջ առանց լեզվի, գեղեցկությունը՝ տձև առանց լույսի և կրոնը՝ կաղ առանց դրամի: Հոգու աչքերը վաղուց բացված Կոլոտ վարդապետի մարմնի աչքերն էլ կամաց-կամաց սկսեցին բացվել ոսկու ուժեղ փայլի շլացումից: Զարմանքով նկատում էր, որ կրոնական յուրաքանչյուր ձեռնարկ ու հոգևոր երազանք փողով սկսվում ու փողով էր ավարտվում: Փիլիսոփայական գրքերը, որ կարդացել էր նա, արդեն մի նոր իմաստ էին հաղորդում առօրյա կյանքի բարդ հյուսվածքը հասկանալու համար: Կրկին կարդաց Պլատոնի և Արիստոտելի քաղաքական բնույթի գրվածքները: Ըմբռնեց, որ փողը հասարակության մեջ այն էր, ինչ երակ-

ներով հոսող արյունը՝ մարդու մարմնում:

Կոլոտին մտահոգում էր իր այս նոր հետաքրքրությունը: Լավ գիտեր հայրերի ուսուցումը դրամասիրության վերաբերյալ: Գիտեր, որ վանականը պարտավոր էր խուսափել դրամից ու հարստությունից, ինչպես սատանայից: Հուզայի անիծյալ ճամփան չէ՞ր արծաթասիրությունը: Կոլոտը իսկապես մտահոգված էր: Արդյո՞ք առանց կամենալու կհրապուրվեր աշխարհիկ փառքով ու կընկներ ծուղակը նյութապաշտ մտածելակերպի: Նրա ընթերցումները մեծամասամբ տնտեսական ու քաղաքական փիլիսոփայության էին ուղղված, և նա մեծ հաճույքով էր այս հարցերի շուրջ զրուցում հայր Թովմասի հետ:

Ի վերջո բացեց սիրտն իր մտերմին ու պատմեց նրան իր հոգու հակասությունների և մտածումների մասին: Գրիգորը լավ ունկնդիր էր, նաև լավ էր ճանաչում իր ընկերոջն ու աշակերտին: Նա Կոլոտից վեց տարով մեծ էր. երբ ինքն արդեն վարդապետ էր, Կոլոտը դեռ սարկավագ էր: Սակայն Կոլոտի հասունությունը վաղու՛ց փակել էր տարիների այս խրամատը: Գրիգորը բարձր էր գնահատում Կոլոտի արժանիքները՝ նրա ուշիմ ու ճկուն միտքը, սուր հոտառությունը և առաջնորդելու բացառիկ կարողությունը: Վստահում էր Կոլոտի հեռատեսությանն ու նախազգացումներին: Նա՛ էր առաջարկել ու համոզել իրեն հեռանալ Ամրդուլից և փնտրել ուրիշ մի վանք: Ինքը գոհ էր իրենց այցելած բոլոր վանքերից և ուզում էր առանց շատ փնտրտուքի մնալ և հաստատվել դրանցից մեկում: Դարձյալ Կոլոտն էր, որ համոզել էր իրեն գնալ ամենամեծ վանքը՝ Սուրբ Կարապետ: Նրա ցուցումները միշտ ճշգրիտ էին, և նախաձեռնությունները՝ հաջողված: Իր ամբողջ էությունը մխրձվելու աստիճան Կոլոտը հիմա զբաղված էր տնտեսությունը: Գրիգորը ժպտաց և, նրա ուսին թփթփացնելով, ասաց.

– Որքան հասկացա՝ մի նոր որդ է ընկել մեջդ և անհանգստացնում է քեզ իր խլիրտներով: Բայց որդը դեռ ոչինչ է, այն պիտի մեծանա, ու տեսնենք, թէ ի՛նչ կդառնա՝ մոծա՞կ, թե մեղու, ճա՞նճ, թե՞ թիթեռնիկ:

– Ուզում ես ասել, որ շարունակեմ զբաղմունքս և չե՞մ ընկնի մեղքի մեջ:

– Անշուշտ, հիշում ես Անտոն ճարտարապետին: Երբ քեզնից երկու տարի առաջ Ամրդոլ եկավ, կյանքումս հանդիպած լավագույն աշակերտն էր: Դու էլ կհիշես. նրա մեջ հանկարծ մեծ սեր ու ձգտում արթնացավ հին տաճարների նկատմամբ: Փախչում էր, օրերով անհայտանում: Պառկում էր ավերակ եկեղեցիների մեջ ու ժամերով դիտում խաչքարերը: Բոլորը կարծում էին, որ խեղճը դիվահարվել էր, և մենք, հուսահատված, նրան փրկելու ճամփաներ էինք փնտրում: Սակայն Վարդան վարդապետը քառասուն օր բանտարկեց նրան մի խցի մեջ՝ նրա առջև բլրելով մատենադարանի ճարտարապետական բնույթի բոլոր գրքերը: Քառասուն օր անց, հագեցած, դուրս եկավ խցից և այլևս չփախավ: Ուր մի նոր եկեղեցի էր կառուցվում, վարդապետը ուղարկում էր նրան և երբ հասկացավ, որ նա հոգևորական լինելու համար չէր ծնվել, ամուսնացրեց: Հիմա նա մեր կողմերի լավագույն ճարտարապետներից մեկն է՝ եկեղեցաշեն և ազգօգուտ:

Վանքի պարիսպների վրայով հանդարտ քայլելով՝ Գրիգորը մի պահ կանգ առավ. ժամանակ տվեց Կոլոտին՝ մարսելու իր խոսքերը: Երեկոյի բոսորագույնը շողշողում էր քարերի վրա՝ անցած դարերի իմաստովթյունը ներշնչելով Գրիգորին:

– Այն, ինչ մենք շատ ենք սիրում և ընդունակ ենք անելու, Աստուծոց մեզ տրված հատուկ կոչում է, նաև՝ պարտականություն: Հավանաբար Աստված քեզ ինչ–որ բանի

Համար է պատրաստում թերևս՝ քիմքդ գրգռելով այս քաղաքատնտեսական նյութերի շուրջը: Սաղմոսներն անգիր իմացող շատ վանականներ ունենք, բայց քիչ է նրանց թիվը, ովքեր կարող են հասկանալ ժամանակի նշանները: Ո՞վ գիտե, թե մեր շուրջը փչող քաղաքական ու տնտեսական հողմերը ինչպիսի՞ ամպեր կկուտակեն մեր գլխին: Մեր մարդկային ու ազգային խնդիրները լուծելու ընդունակ քանի՞ եկեղեցական ունենք: Մեր մեծագույն խնդիրներից մեկը մեր վանքերի տնտեսությունից տաղնապալից վիճակը չէ՞: Ես անձամբ շահագրգռված չեմ այս խնդրով, բայց կարևորում եմ այն:

– Իսկ վտա՞նգը, – հարցրեց Հովհաննես վարդապետը:

– Անգերազանցելի հաճույք է անդնդից դիտելը՝ ընկնելու վտանգի առկայությունը:

Կոլոտը, հանդարտվելով, խրվեց իր ուսումնասիրությունների մեջ և հայր թովմասից սովորեց հաշվապահությունից վերաբերյալ ամեն ինչ: Ամեն օր՝ նոր դաս, նոր փորձառություն: Վանքի այս գրասենյակը տնտեսագիտությունից համալսարան էր դարձել նրա համար: Մի օր, երբ թովմաս վարդապետի հետ ստուգում էին հաշիվները, դուռը ձեռնեցին. ներս մտավ սարկավազներից մեկը մի գյուղացու հետ:

– Ասում է, թե մի ձեռագիր ունի, հա՛յր սուրբ: Արժե տեսնել:

– Բարո՞վ եկար, ո՞ր գյուղից ես:

– Գեղատունկից: Իմ պապերից մնացած մի ավետարան ունեմ, ահա՛, նայե՛ք, – գյուղացին բացեց իր տոպրակն ու կաշվե կողով, լավ պահպանված մի մագաղաթ հանեց, համբուրեց ու հարգանքով դրեց սեղանի վրա, – հայրական այս հիշատակից չէի ուզենա բաժանվել, բայց տղայիս եմ ամուսնացնելու և փողի կարիք ունեմ:

Թովմաս վարդապետը թերթեց գրքի էջերը. պատկերա-

զարդ ու լավ խնամված, ամբողջական, թանկարժեք մի ավետարան էր այն: Նրա կողքին կանգնած Կոլոտի աչքերը չորս բացվեցին: Անմիջապես հասկացավ ձեռագրի անգին արժեքը. մագաղաթը առնվազն վեց– յոթ հարյուր տարվա մի հնուլթյուն էր՝ հոգևոր անգնահատելի մի գանձ: Սակայն թո՛վմաս վարդապետը անտարբեր էր մագաղաթի նկատմամբ: Շուրթերը ծռելով և ուսերը թափ տալով, անտարբերուլթյամբ հարցրեց.

– Որքա՞ն ես ուզում սրա համար:

– Ընչտն ասած, չգիտեմ, դուք որոշեք նրա արժեքը, դուք գիտեք:

– Քեզ մի բան ասեմ, եղբա՛յր, մենք սրա պետքը չունենք: Դու մեր մատենադարանը մտած, տեսած կա՞ս: Սրա նման հազարավոր գրքեր ունենք և տալու տեղ ենք փնտրում:

Կոլոտը զարմացավ: Վարդապետը սուտ էր խոսում: Այսպիսի հնուլթյունը շատ հազվագեպ երևուլթ էր նույնիսկ վանքերի գրադարանների համար:

– Բայց քեզնից կգնեմ այս ավետարանը: Հիմա ասա ինձ, տղայիդ հարսանիքի համար ինչքա՞ն փողի կարիք ունես: Բայց սուտ չխոսես, եթե շատ ուզես, չեմ գնի:

Գյուղացին, գլուխը ծռելով, ասաց.

– Տասը օսմանյան ոսկի:

– Ի՞նչ, տա՞սը ոսկի: Այս հին գրքի՞ համար: Եթե ուզում ես, հինգ ոսկի: Ես մեր դպիրների կողմից գրված մի նոր ձեռագիր ծախեմ քեզ, նոփ–նոր: Բացի այդ, տասը ոսկով երեք հարսանիք կանես: Շատ–շատ ուզեցիր: Վանքը դժվար օրեր է ապրում, շաղ տալու փող չունենք:

– Դուք ի՞նչ կտաք:

– Հինգ ոսկի:

– Շատ քիչ չէ՞, հայր սուրբ, գոնե ուլթ ոսկի լիներ:

– Դու՞ ինչ կասես, Հովհաննես վարդապետ: Ի՞նչ կարժենա սա:

Կոլոտն անսպասելիորեն ինքն իրեն գտավ այս առևտուր– խաղի մեջ:

– է– է– է՛, յոթից ավելի չարժե,– կմկմաց նա՝ գլուխը բացասաբար շարժելով:

Կոլոտը նույնպես սուտ խոսեց՝ զարմանալով, որ առանց խղճի խայթ զգալու հեշտույթյամբ ստեց:

Գյուղացին տատանվում էր: Բայց Թովմաս վարդապետը գիտեր մարդուն շփոթմունքից ինչպես հանել: Դրամարկղից վերցրած քսակից յոթ ոսկի հաշվելով՝ դրեց գյուղացու ափի մեջ: Ոսկու փայլն ու ափի մեջ այն շոշափելը կախարդական ներգործություն ունեցան մարդու վրա. աչքերի մեջ արևներ ծագեցին, և մի ժպիտ ծնվեց հոգու խորերից: Թովմաս վարդապետն ուզում էր կնքել առևտուրն միանգամ՝ ընդմիջտ՝ գոհացնելով մարդուն:

– Սարկավագին հայտնիր նախնիներիդ անունները: Այս կիրակի Սուրբ Պատարագին նրանց հոգու հանգստություն համար հոգեհանգիստ կկատարենք, և այդպիսով քո խիղճն էլ հանգիստ կլինի: Նաև տղայիդ հարսանիքին կզանք հայր սուրբի հետ: Փառավոր հարսանիք կլինի,– բարեկամաբար մարդու ուսին թփթփացնելով՝ վարդապետը վարպետորեն կնքեց գործարքը:

Երբ գյուղացին ու սարկավագը դուրս եկան, Թովմասը «հարձակվեց» մատյանի վրա: Կարծես լափելով շրջում էր էջերը, շոյում էր, հոտոտում և քահ–քահ ծիծաղում՝ ձեռքերը մանկան նման սեղանին խփելով:

– Աթոռդ քաշիր ու նստիր կողքիս, եղբա՛յր: Նայի՛ր, տե՛ս՝ ի՛նչ չքնաղ գանձ է: Յոթ ոսկով գնեցինք, յոթ հարյուրով էլ չէինք կարող գտնել այսպիսի մի բան, պատկերացնու՞մ ես: Նայի՛ր, հազար քառասուն յոթ թվին է

գրված:

Հովհաննեսն էլ խանդավառվեց գրքով, բայց կամաց–կամաց խիղճը սկսեց տանջել նրան այնպես, ինչպես կոտրված ոսկորդ է սկսում ցավել:

– Խաբեցիրնք խեղճ գյուղացուն, հա՛յր սուրբ, մեղք գործեցիրնք:

– Ի՞նչ մեղքի մասին ես խոսում, – առանց մտահոգուլթյան վարդապետը մատնանշեց մատյանում մի տեղ:

– Տեսնու՞մ ես կարմիր կնիքը: Լավ նայիր և կարգա, թե ինչ է գրված:

– «Արչարունիքի Սանդղտավանք, Անի», – կարգաց Կոլոտը:

– Տեսար, թե ո՛ւմ է պատկանում այս Ավետարանը: Աստված գիտե, թե ինչ պայմաններում է հեռացել Անիից: Քանի– քանի անգամ մեր վանքերը կողոպտվեցին այլազգիների կողմից, երկրաշարժերից վնասվեցին կամ արշավանքների ժամանակ գրքերը թաքցրին, իսկ մի մասն էլ բաժանեցին գյուղացիներին, որպեսզի վտանգից հետո կրկին վերադարձվեն վանքերին: Ահա մեր գեղուհին հարսի նման վերադարձավ մեզ մոտ, – հայր թովմասը գործովալից մի համբույր դրոշմեց մատյանի վրա:

– Որքա՛ն կուրախանա սրբազանը, երբ տեսնի սա, – ասաց նա, – բայց անմիջապես չասենք, մի քանի օր թող մնա մեր գրասենյակում, փոքր–ինչ վայելենք, իրավունք ունենք, չէ՞:

Այդպես էլ եղավ: Անցյալի թագուհին բազմել էր նրանց գրասենյակին: Հազիվ զբաղված մի քանի գործով՝ հազիվ անդրադառնում էին դրա վաղեմի էջերին: Երկար ու մտածկոտ՝ Կոլոտը կանգ առավ մի մանրանկարի վրա: Թովմասը մոտեցավ՝ տեսնելու, թե այդ ինչ նկար էր գրավել Կոլոտի ուշադրությունը: Հիսուսն ու նրա աշակերտ-

ներն էին՝ բոբիկ ոտքերով, նիհար և գրեթե կիսամերկ: Դիմացի էջի վրա գեղազրված էին Տիրոջ խոսքերը՝ արտասանված իր աշակերտներին առաքելության ուղարկելուց առաջ: Հովհաննես Կոլոտը սկսեց մի քանի տող բարձրաձայն կարդալ. «Ձեր գոտիների մեջ ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ և ո՛չ էլ պղնձադրամ ունեցեք: Ծանապարհի համար ո՛չ պարկ, ո՛չ ավելորդ հագուստ, ո՛չ կոշիկ ու գավազան առեք»: Հետո տխուր դեմքով նայեց հայր Թովմասին:

– Հա՛յր սուրբ, ինչու՞ ենք մենք այսքան զբաղվում դրամով, երբ այդքան մեծ հարստություններ կան վանքերի մեջ կուտակված: Այս ամենի կարիքը կա՞ Քրիստոսի ավետարանը քարոզելու համար:

– Իհարկե՛, կարիք կա, և դեռ ավելին: Դու ծանոթ ես մեր ելմտացույցին և գիտես, թե որքան փողի կարիք ունենք. հագիվ ծայրը ծայրին ենք հասցնում: Միայն մենակյաց խոտածարակ ճգնավորները փողի պետքություն չունեն: Եթե ուզում ես հաց ուտել, ուրեմն պետք է կա՛մ դրամագլուխ ունենաս, կա՛մ մուրաս:

– Իսկ Տիրոջ խոսքերը ինչպե՞ս մեկնենք:

– Շատ պարզ: Նրանց հավատը փորձելու և խորացնելու համար մի քանի օրվա պտույտներ էին դրանք և ոչ թե նրանց ամբողջ կյանքի համար տնօրինված տնտեսական ուղեգրի:

– Ինչպե՞ս կարող ես այդքան վստահ լինել:

– Իրենք էլ մեզ նման ունեին ընդհանուր մի քսակ, որ հանձնված էր Իսկարիովտացուն, այնպես չէ՞: Նաև մեր Տերը այդ խոսքերը իր առաքելության առաջին տարիներին էր ասել, իսկ ապա իրականությունը ստիպեց նրան վերանայել իր իդեալիզմը և հաստատել դրամապանակ: Իմ կարծիքով դա պատահեց Պետրոսին պատվիրած ձկան որսից հետո՝ նրանցից ակնկալված մեկ ոսկի տուրքի համար: Փո-

դի համար Տեր Հիսուսը կա՛մ հաճախ այսպիսի հրաշքներ պիտի գործեր և ինչպես հացերը բազմացրեց, նույնպես և ոսկիները պետք է բազմացներ, որ մի տեսակ կախարհուկություն էր դառնում, և շատ չէր տարբերվելու քարերը հացի վերածելուց, կա՛մ իր հրաշքների համար դրամ պիտի պահանջեր, որ հակառակ էր «ձրի առեք և ձրի տվեք» նրա սկզբունքին: Անշուշտ, կարող էր մուրալ: Բայց սա կլծուլացներ նրա պատգամների ուժը: Ո՞վ կհարգեր անճար մի մուրացկանի և կհավատար, թե նա էր աշխարհի փրկիչը՝ Մեսիան: Ուրեմն, որդեգրեց իրեն հետևողների նվիրատվությունները տնտեսելու ճամփան՝ հօգուտ իր առաքելություն: այն, ինչ մենք ենք անում, իմ սիրելի խղճահարված եղբայր:

Կոլոտը զարմացավ ու հիացավ թովմաս վարդապետի կուռ տրամաբանություն և հասուն աստվածաբանություն վրա. ստույգ ու հստակ էին նրա բոլոր պատճառաբանությունները, որ լրիվ համոզեցին նրան, և շատ հանգուցյանք քանդվեցին նրա մտքում:

– Ինչ լավ բացատրեցիր, հա՛յր սուրբ, լուսավորվեցի, շնորհակալ եմ:

– Իսկապես, ի՛նչ լավ կլիներ, եթե այս մատյանը մի քանի օր էլ մնար այստեղ, այնպես չէ՞:

Սակայն այդպես չեղավ: Հանկարծ դուռը բացվեց: Կարապետ սրբազանը նույն սարկավազի հետ ներս խուժեց իր յուրահատուկ չոր հագույլ և կաղալով ուղղվեց դեպի մատյանը:

– Ապա տեսնեմ յոթ ոսկով ձեր գնած ձեռագիրը:

Սրբազանը մի քանի ըոպե հմայված թերթեց գիրքը և հիացմունքով ու մասնագիտորեն նկատեց.

– Հովհաննես գրչագրի գործն է: Մեկը ևս ունենք մեր գրադարանի մեջ, սակայն սրա չափ կատարյալ չէ: Հրա՛չք

է սա, հրա՛չք: Թող մի շաբաթ մնա տաճարում՝ ի տեսութ-
յուն միաբանների, իսկ հետո միայն հատուկ օրերին կհա-
նենք:

Հանկարծ հազի սաստիկ մի նոպա բռնեց Կարապետ
սրբազանին: Մի գավաթ ջուր հասցրին նրան: Նրա թաշկի-
նակի վրա արյան հետքեր նկատեցին և հասկացան, որ այս
հազը լավ նշան չէր: Սրբազանը փոքր-ինչ հանդարտվե-
լուց հետո վերցրեց գիրքը, գրկեց երեխայի նման, առանց
սարկավազի օգնության աղաչանքներին ականջ դնելու՝
ինքն անձամբ տանելով՝ գնաց ուրախությունամբ՝ մոռանալով
նույնիսկ պարզ շնորհակալությունն կամ գնահատանքի
խոսք ուղղել վարդապետներին, որոնք, սակայն, հասկա-
ցան նրան և ուրախ էին իրենց մեծավորի այս սիրալից ե-
ռուզեռով:



ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Վանքում տարիներն անցան, ինչպես ասում են, ջրի պես, միապաղաղ, միևնույն ժամանակ՝ հետաքրքիր: Հովհաննես Կոլոտը վաղուց կատարելապես հարմարվել էր միջավայրին: Սուրբ Կարապետ վանքի միաբանությունը, անշուշտ, միայն պաշտամունքով ու ուսմամբ չէր զբաղվում: Տարվա մի մասը գնում էին՝ քարոզելու շրջակա գյուղերում և քաղաքներում: Այս առաքելությունը խրախուսում էր մարդկանց աղոթքի՝ ուսումնառության մեջ և կապում էր ճշմարիտ կյանքին ու աշխարհի իրադարձություններին:

Լավագույն քարոզիչը Կոլոտն էր. բոլորը գիտեին դա: Նրա քարոզները բեմից իջնելուց հետո էլ չէին դադարում, այլ շարունակվում էին ճաշասեղանների շուրջը, ճամփորդությունների ընթացքում, խանութների մեջ, հարսանիքներին ու հուղարկավորություններին և այլ բազմաթիվ առիթներով: Այս պարագաներում, սակայն, ոչ ոք չէր նկատում, որ նա քարոզում է. իր զրույցները նա կառուցել էր դաստիարակելու, ոգևորելու, խանդավառելու և մխիթարելու ազդու մի միջոցով, որի լավագույն ձևը ավետարանչությունն էր: Կոլոտը փորձառու այն եկեղեցականներից էր, որոնք շատ շուտ հասկանում են զրույցի գորությունը, մարդկանց մոտ նստելով և նրանց աչքերին նայելով՝ խոսելու գորությունը, երբ հաց ես կտրում նրանց հետ, բաժակ բարձրացնում միասին, ուս-ուսի տված, իրար նայելով, ծիծաղելով ու միասին լացելով: Ահա այսպիսի պահերին էր, որ մարդիկ ընդարձակ ու անարգել բացում էին իրենց սրտի գաղտնարանի դռները և, եթե հավատացյալ են

ու զրուցակիցն էլ Կոլոտի նման մեկն է, Քրիստոսի նման հյուրընկալում են նրան: Կոլոտն իր խոսքուզրույցը վերածել էր արվեստի և դարձել այդ առաքելության ամենաազդու գեները: Վարդանը նրանց սովորեցրել էր պարզ և հստակ. «Քրիստոնեությունը տարածվեց և գրավեց նույնիսկ Հռոմը ոչ թե բեմասացությամբ, այլ անմիջական զրույցներով»:

Բազմաթիվ ու բազմազան բարեկամներ ձեռք բերեց բոլոր խավերից ու ասպարեզներից. տերեր ու ծառաներ, գյուղապետեր ու գյուղացիներ, արվեստի ու արհեստի մարդիկ: Տեսավ, որ հավատացյալ ժողովուրդը անպայման մի բան տալ կամ անել էր ուզում իր եկեղեցու համար և պատրաստակամ էր, եթե վստահում էր եկեղեցականին: Իսկ Կոլոտին վստահում էին մինչև վերջ: Մարդկանց իր ետևից տանելու առանձնահատուկ շնորհ ունեւր նա: Նրա՝ իր ծրագրերը շոշափելի ներկայացնելու կարողությունը մասնակից էր դարձնում ունկնդիրներին, որոնք, անդիմադրելի մի խանդավառությամբ վարակվելով, անմիջապես ներքաշվում էին նրա երազների մեջ: Գիշերը երազում էր Կոլոտն ու առավոտյան սկսում պատմել դրանք: Բոլորս էլ նույնն անում ենք, բայց ո՛չ հարկավոր տևողությամբ և ո՛չ էլ Կոլոտի պես համառությամբ հասնելու աստիճան: Կոլոտը երբեք չէր մոռանում իր տեսիլները և, երբ առիթը ներկայանում էր, պատմում էր ու պատմում ու մի օր էլ, կարծես մոգական մի ձեռքով, սկսում էր կառուցել իր լուսագիծ երազները: Առավոտյան ժամերգություններից մեկի ժամանակ դիտեց եկեղեցու՝ փլվելու աստիճան հնացած գմբեթը, որ տասնյակ տարիներով նորոգված չէր:

– Ամենից գեղեցիկ կաթողիկե գմբեթը կարող ենք շինել և պե՛տք է, որ վերաշինենք, – ասաց Կարապետ սրբազանին:

– Այո՛, պետք է, ես էլ գիտեմ, բայց ինչպե՞ս, գործը շատ է և երկար էլ կտևի:

– Այո՛, իհարկե, – ասաց հայր թովմասը, – բայց փող չունենք, և չես կարող պատկերացնել, թե որքան թանկ կնստի այն մեզ վրա:

– Ի՞նչ կարիք կա, – ասաց երեց վարդապետներից մեկը, – դեռ հարյուր տարի էլ կդիմանա:

– Այո՛, այո՛, սրա համար պետք է աղոթել, – ասացին ուրիշներն ու մոռացան: Միայն Գրիգորն էր, որ ասաց.

– Ինչու՞ չէ, անպայման պիտի նորոգենք, ո՛չ, ո՛չ, վերաշինենք:

Գրիգորը, չնայած Կոլոտից տարեց էր ու երեց, երբեք չէր անհանգստանում նոր ծրագրեր ղեկավարելու մտքով: Կիրառական գաղափարները առողջարար ազդեցություն ունեին նրա վրա՝ միստիկ խորացումներից դուրս գալու և կյանքի խնդիրներին առերեսելու ուղղությամբ: Մի բան փորձով շատ լավ հասկացել էր. ինչ–որ ասում և ծրագրում էր իր կրտսեր եղբայրը, այսպայման մի բան պակասում էր, որ պիտի լրացվեր, և մեկը պետք էր, որ անպայման աներ այդ բանը: Ահա իրենց ամենօրյա աղոթքի եկեղեցու գմբեթը: Ուրեմն ի՞նչու իրենք չանեն այդ գործը:

Այսպես և ուրիշ շատ շինարարական ձեռնարկների և վանքապատկան հողերը ավելի եկամտաբեր օգտագործելու կարիքը միշտ առկա էր իրենց քթի տակ: Այնտեղ, ուր ումանք գանգատվում էին իրենց խնդիրներից և զգում էին նրա կարիքը, Կոլոտը հայտնվում էր իր լուծումներով:

Օրինակ՝ վանականները իրենց խցիկներից մատենադարան գնալու և եկեղեցուց սեղանատուն իջնելու համար պետք է բավականին քայլերին, ուղղաձիգ աստիճաններ մագլցեին կամ իջնեին, որն անձրևին ու ձյանը անտանելի էր դառնում հատկապես երեց միաբանների համար: Ու մի օր էլ Կոլոտը միաբանական ժողովին առաջարկեց խցիկնե-

րի և մատենադարանի միջև կամուրջ շինել ու փորել ներքնուղի, որը եկեղեցին կկապեր սեղանատան հետ: Բոլորը հասկացան այն մեծ դյուրությունը, որ պիտի ընծայեր իրենց այս ծրագիրը: Բայց կամո՞ւրջ բարձունքի վրա և թունե՞լ տասը մետր խորությամբ ժայռի մեջ... Աղմուկ բարձրացավ, ու, մոռացած ծրագրի լուծումը, գնացին՝ շարունակելով գանգատվել ծնկների ցավից ու ցից աստիճաններից:

ժողովից հետո Գրիգորը Կոլոտին հիշեցրեց Եզոպոսի առակը:

– Մկները ճարպիկ կատվից փրկվելու ժողով են գումարում, և նրանցից մեկը առաջարկում է կատվի վզից զանգակ կախել, որ դրա զնգզնգոցը իրենց զգուշացնի նրա ներկայության մասին: Բոլորը հիանում են այս հանճարեղ մտքով և հոտնկայս, ցնծազին ծափահարում: Բայց հարց է ծագում, թե ո՞վ պիտի կախի զանգը: Միտքն այնքան սարսափազդու էր, որ բոլորը ահաբեկված մտնում են իրենց ծակերը:

– Մերոնք էլ՝ իրենց խցերը, – պատասխանեց Կոլոտը՝ դաժան մի ժպիտ շուրթերից կախված, – եթե մենք զանգը չանցկացնենք անհոգության գազանի վզից, այն կկործանի ազգն ու եկեղեցին միասին:

Կոլոտն ու Գրիգորը քաջ գիտեին, որ միայն անձնագոհ-հոլթյան խենթ սխրանքով կարելի էր մաքառել դարերի թմրության դեմ:

– Մեր վանքը լիքն է բարի, անձնուրաց և տաղանդավոր միաբաններով, որոնք, սակայն, հաճախ անտարբեր են վանքի խնդիրների նկատմամբ և եթե մի գործ անում են, ապա միայն՝ երբ հրամայում են: Եթե չեն կարողանում իրենց ապրած տարածքը կազմակերպել, ինչպե՞ս պիտի աղ ու լույս լինեն աշխարհին, ուր ճարպիկ, ձեռներեց ու տքնաջան մարդիկ ամեն օր կյանքի բոլոր ասպարեզներում

հեղաշրջումներ են կատարում և փոխում աշխարհի դեմքը:

– Երբ կրակը հանգելու վրա է, բռնկվում է փչելով: Մենք նույնպես պետք է փչենք Աստծո խոսքը նրանց վրա անընդհատ և առանց հուսալքվելու ու պիտի անդադար աղոթենք:

Գրիգորը լավ էր հասկանում մարդու հոգին՝ իր ոսկով ու պղնձով, բարձունքներով ու վիհերով: Գրիգորի համար դժվար չէր նույնացնել ողջ մարդկությունը իր անձի հետ: Նա չէր քննադատում, այլ ավելի ջանում էր հասկանալ: Նարեկյան մի միատիկ էր նա, որ օր ու գիշեր աղոթում էր վանքի ու եկեղեցու բոլոր մեղքերի համար՝ որպես իր մեղքեր ու հանցանքներ: Հետևաբար լավ էր հասկանում Կոլոտի ցավն ու հոգու անհանգստությունը, որ ամենուր տեսնում էր պակասներն ու թերիները, ախտորոշում էր և ուզում արագորեն բուժել վերքերը:

Որոշեցին մի այլ ճանապարհ գտնել. երբ որևէ գաղափար հղանար, նախ միասին պիտի քննեին այն, ապա պիտի որոշ եղբայրների էլ հաղորդակից դարձնեին և այսպես կամաց-կամաց տարածվելով՝ հասարակաց կարծիք պիտի ստեղծեին վանքում: Սա իր արդյունքը տվեց: Ակնկալածից ավելի շատ կողմնակիցներ գտան իրենց բարի ծրագրերի համար: Բոլորն էլ պատրաստակամ են լավ բանի մասնակցություն, միայն պետք է համոզվեն դրանում. այս էր նրանց քաղած դասը: Երբ ծանրակշիռ Գրիգոր վարդապետը հավատացնում էր, ուրեմն այլևս կարելի էր հավատալ վառվռուն Հովհաննես վարդապետի բարձրաթռիչ տեսիլներին: Մնում էր միայն տիեզերական հրամայականը գտնել. փող գտնել:

Եթե կար մեկը, որ ծնվել էր փող հայթայթելու և հավաքելու համար, Կոլոտն էր: Նվիրատվություն ստանալը, պարտքեր հավաքելը կամ հետաձգելը նրա աստվածատուր շնորհներից էին: Գյուղացիները կամավոր գալիս էին աշ-

խատելու վանքի շինարարական գործերում՝ հետները ուտելիք բերելով իրենց և վանքի համար: Կոլոտը համատեղել էր պաշտամունքը շինարարության հետ: Աշակերտներին ուղարկում էր գյուղերը՝ քարոզելու և գյուղացիներին աղոթել սովորեցնելու: Ամեն ինչ նոր էր անգրագետ գյուղացիների համար, որոնք հափշտակությամբ նորից լսում էին իրենց ասած պատմություններն ու ապա ախորժակով պատմում տանը:

Շինարարության ընթացքում նրանց շատ օգնեց Շեյխ Մահմուդը: Այս երախտագետ քուրդն ու նրա ցեղակիցները չէին մոռացել երկու վարդապետներին: Երբեմն դժվարանում էր վանքի վարձով տրված կալվածքներից դրամ հավաքելը, բայց Շեյխի մի խոսքը բավական էր հարցը հեշտությունամբ լուծելու համար: Հրաչքի երկարատև արձագանքների շնորհիվ օրեցօր ավելանում էր վանքը ուխտի եկող այլազգիների թիվը, մասնավորապես աղոթք խնդրելու Գրիգորից և Կոլոտից: Եկավ ժամանակը ևս մի անգամ ապացուցելու տեսիլքների գորությունը: Վերջապես մեկը զանգակը կախել էր վանքի կատվի վզից ու հաղթել անտարբերության գազանին: Այնտեղ բարձրանում էին նոր աշտարակներ, նորոգվում խցեր, մառաններ, հյուրասենյակներ: Կամուրջը շինված ու թունելը բացված էր, և այլևս ոտքի ցավից գանգատվող չկար: Բայց ամենից կարևորը եկեղեցու գմբեթն էր, որ վերաշինվել էր կաթողիկե ոճով: Ոտքից գլուխ նորոգված եկեղեցին հպարտությունամբ էր լցնում միաբանների սիրտը:

«Այս վայել է Գրիգոր Լուսավորչի հիշատակին», – հիացմունքով բացականչում էին նրանք, ովքեր անցյալում ընդդիմանալով ասում էին. «Ի՞նչ կարիք կա, այս գմբեթը դեռ հարյուր տարի էլ կդիմանա»:

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Հայր Թովմասը իբրև առաջնորդը գնաց Սեբաստիա՝ Կոլոտին թողնելով իր փոխարեն իբրև գանձապահ: Վանահայր Կարապետ սրբազանը բավականին ծերացել էր և հիվանդ էր, բայց և այնպես ոչ ոք չէր ուզում նրա հրաժարականը, որովհետև գիտեին նոր ընտրությունների վնասների մասին: Մոտալուտ ընտրապայքարի համար արդեն իսկ կազմվել էին չորս-հինգ խմբակներ: Գրիգորն ու Կոլոտը հեռու էին մնում՝ զգուշանալով և կողմերից ոչ մեկին նեցուկ չկանգնելով: Նրանք դեռ ամբողջի էին և չէին ուզում դրսից եկած խառնակիչներ երևալ: Սակայն բոլորն էլ քաջ գիտեին, թե որ խմբին որ միանար այս երկվորյակը, այն էլ անտարակույս պիտի շահեր: Ուստի նրանց այս խոհեմ չեզոքությունը գնահատվում էր բոլորի կողմից:

Վանքը պարտք չուներ, եկամուտն ավելացել էր, գանձանակը՝ լցվել: Հաջողությունը և մեծավ մասամբ ի կատար էին ածվել շինարարական աշխատանքները: Աշակերտների թիվը հասել էր գագաթնակետին: Բազմաթիվ գրիչներ անխոնջ ընդօրինակում ու բազմացնում էին հնագույն ձեռագրերը՝ դրանք կորստից փրկելու համար:

Օրակարգում առաջնահերթ էր ժամանակակից մի տպարանի այրող պահանջը: Արդեն ամեն ինչ պատրաստ էր: Տարիների խնայողությունը դրամագլուխ էր կազմված: Միաբաններ էին ուղարկված Կոստանդնուպոլիս և Եվրոպա՝ ուսումնասիրելու հարմար կարելիությունները: Կոլոտը ցանկանում էր ամենալավը, ընտիրն ու մեծը: Որովհետև և հայ Առաքելական Եկեղեցու առաջ գաղափարական մի

մեծ պայքար էր ցցվել: Հիսուսյանների կամ ավելի ծանոթ անվամբ՝ ճիզվիտների ազդեցիկ ուղղությամբ կաթոլիկական զորավոր մի շարժում էր սկսվել հայ ժողովրդի մեջ: Հայ եկեղեցին, անպատրաստ՝ դիմագրավելու այս արշավանքին, մեծապես տուժում էր մարդոբուսության պատճառով: Հիսուսն տարուց ի վեր շարունակվող այս պառակտիչ շարժումն իր տխուր պտուղներն էր արգեն տալիս ամեն տեղ: Այս մրցակցութունը ակամայից ցույց էր տալիս Առաքելական Եկեղեցու տկարությունը՝ բավարարել չկարողանալու իր հոտի հոգևոր պահանջները: Հրատարակչությունը պակասն ու կրթված եկեղեցականների պատրաստությունը Հայ Եկեղեցու առջև նետված մեծագույն մարտահրավերն էին: Վանքերից բացի հայ իրականության մեջ ոչ մի ուրիշ բարեկրթված հաստատություն չկար:

Նորից գարուն էր: Սուրբ Կարապետ վանքում իրենց հաստատվելու օրից երեք կլոր տարիներ էին անցել՝ արդյունաբեր երեք տարիներ: Տարօրինակ ձևով ամեն ինչ, հրաշքով սկիզբ առած, հաջող էր ընթացել՝ ապահովված Կարապետ սրբազանի նման պահապան հրեշտակի թևերի ներքո: Նրանց ծաղկուն առաքելությունը վաղուց տվել էր իր քաղցր պտուղները: Ահավասիկ Վարդանի սկզբունքներով պատրաստված աշակերտների առաջին հունձը. ձեռնադրվում էին վեց նոր աբեղաներ: Կարապետ սրբազանը նստած՝ մի կերպ կատարեց ձեռնադրությունը: Պատարագիչն ու քարոզիչը Կոլոտն էր:

– Որքա՛ն սպասեցինք ձեզ, տղանե՛ր, որքա՛ն սպասեցինք: Բախտավոր են կանայք. միայն ինն ամիս է տևում նրանց հղիությունը: Իսկ մենք սպասեցինք ձեզ ինը տարուց ավելի: Բարով եք եկել կղերական մեր աշխարհը: Այսօր մենք՝ ձեր ուսուցիչներն ու եղբայրները, մայր արծվի չափ ուրախ ենք՝ տեսնելով, որ ձեր թռչնաթևերն այլևս

կատարյալ են, և ռուսները շնչում են անհամբեր՝ կարոտ հյուսիսային հողմերին: Բարով եք եկել մեր ցուրտ լեռները, ուր մարդկանցից հեռու ըմբռնվելու եք արծիվների առանձնությունը՝ ամպերի և Աստծո հարեանությունը: Մարդիկ պիտի հիանան աստղերի մեջ ձեր սավառնումով ու պիտի գան խոնարհաբար հավիելու և համբուրելու ձեր աստղաթաթախ սքեմը: Միայն իմանայիք՝ որքա՛ն ուրախ ենք, տղանե՛ր, ա՛հ, որքա՛ն ուրախ: Մենք՝ Քրիստոսի՝ չորս կողմից ճնշված բանակը, մենք՝ պաշարված, կողոպտված ու հազար անգամ ոտնակոխ բանակը, սակայն միշտ կանգուն՝ երբե՛ք հուսահատ, երբե՛ք հաղթված, երբե՛ք գինադուլ: Եվ ահա հորիզոնի վրա դուք եք՝ մեզ օգնություն հասնող ասպետները՝ մանկունք Սիովնի. ի՛նչ երջանիկ օր: Լսեցինք ձեր՝ կորյունի մունչյունը թշնամու դեմ, եկաք մեռնելու: Բարով եկաք այս կենսատու և արգասաբեր մահվանը: Ձեր մահով մարդկանց սրտերում հարություն պիտի առնի Քրիստոսի խաչը, ձեր կորցրած կյանքերով պիտի գտնվեն կորած որդիները Երկնավոր Հոր, և պիտի պարարտանան աղոթքի անապատները ձեր արցունքներով:

Պատարագից հետո պարտեզի մեջ՝ ընկուզենիների ստվերի տակ, ճոխ սեղան պատրաստեցին: Բոլոր միաբանները ներկա էին՝ ներառյալ նաև խոր ծերություն հասած անկողնային վիճակի չորս միաբաններ, որոնց, իրենց անկողիններով, տեղավորել էին սեղանների շուրջը: Գինին առատ էր, և խորովածը՝ համեղ: Երգերի և ուրախություն ձայնը արձագանքում էր ամենուր:

– Ավելի լավ չէր կարող լինել, այդպես չէ՞, – ասաց Կոլտը Գրիգորին, – ինչ որ ձեռնարկեցինք, Աստված օրհնեց ու ինչ որ ցանեցինք, հարյուրապատիկը ստացանք: Մենք շրջապատված ենք անկեղծ եղբայրներով, և Կարապետ սրբազանը, իր խոր ծերությունը և հիվանդությունը հան-

դերձ դեռ հայրաբար հսկում է մեզ: Վերևում Աստված ունենք, ներքևում՝ հաց ու գինի. մեր շտեմարանը լիառատ է բարիքներով: Ուրիշ ի՞նչ պիտի լիներ:

Կոլոտը վերցրեց բաժակն ու զարկեց Գրիգորի բաժակին և աղաղակեց գինու անուշ թմրություն ներքո.

– Գարնան գեղեցկության և նոր նվաճումների համար:

Գրիգորը տխուր չէր, բայց մի տեսակ մտածկոտ էր: Կոլոտը, նկատելով այդ, հարցրեց.

– Ի՞նչ կա, ուրախ չե՞ս, ինչ–որ բա՞ն պատահեց:

– Ո՛չ, ոչինչ չկա, լավ եմ, միայն թե – կանգ առավ Գրիգորը՝ խորը շունչ քաշելով, – կարծես թե վատ բան պիտի պատահի, սրտիս մեջ անհայտ մի նեղություն խռովում է ինձ: Կարծես թե երկար ժամանակ է, ինչ սատանան թողել է մեր օձիքն ու չի մոտենում այս կողմերին: Չափից ավելի հանգիստ ու խաղաղ ենք:

– Ի՞նչ, ուրեմն սատանայից նոր փորձություն սպասելով՝ տխրե՞նք և պահի գեղեցկությունը խաթարե՞նք՝ տրտմելով ու մտահոգվելով: Եթե սատանա կա, Աստված էլ կա և, – Կոլոտը դարձյալ զարկեց իր բաժակը Գրիգորի՝ սեղանի վրա դրված բաժակին և զվարթաձայն բարձրացրեց, – և Աստված մեզ հետ է:

– Կասկած չունեմ, որ Աստված մեզ հետ է: Սակայն, չգիտեմ ինչու է ձոբ Երանելու փորձությունն է գալիս միտքս և արձագանքում սատանայի մարտահրավերը Աստծուն: Մի՞թե Հոբբը ձրի է պաշտում Աստծուն: Չէ՞ որ դու նրան և նրա տունը և նրա ողջ ունեցվածքը շրջապատեցիր, նրա ձեռքի գործերը օրհնեցիր, և նրա ստացվածքը երկրի վրա շատացավ: Հիմա ձեռքդ երկարի ու դիպցրու նրա ամեն ունեցածին ու կտեսնես, թե ինչպես պիտի հայհոյի քեզ: Հուսամ, որ մեր փորձությունը թեթև կանցնի: Գրիգորը նայեց երկինք ու շնչաց.

– Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ՝ փրկեա ի չարէ:

Կոլոտն էլ վարակվեց Գրիգորի մտահոգութեամբ: Որովհետեւ լավ գիտեր այս աղոթքի ախոյանին, ինչպես նաև Գրիգորի նախագագացումների ճշգրտությունը, որ ապացուցված էր մի քանի առիթներով. ինչպես, օրինակ, մի ամառ գյուղացիները տառապում էին երաշտի պատճառով: Դաշտերի մեջ անձրևի աղոթք ասվեց: Աղոթքից հետո վարդան վարդապետը շրջվեց Գրիգորի կողմն ու բոլորի առաջ դիմեց նրան. «Ե՞րբ պիտի անձրևի»: Բոլորը զարմացած էին այս հարցումից: Գրիգորը պատասխանեց ցածր ձայնով. «Այս գիշեր»: Այդ գիշեր դաշտերը կշտացան անձրևով: Հետո Կոլոտը Գրիգորին առանձին հարցրեց, թե ինչպե՞ս իմացավ: «Չգիտեմ, բայց, երբ աղոթում էինք, մի ձայն արձագանքում էր գլխումս՝ այս գիշեր, այս գիշեր, այս գիշեր: Սա մի շնորհ էր՝ Սուրբ Հոգուց ինձ տրված. վարդան վարդապետն այդպես ասաց»:

Սակայն Հովհաննես Կոլոտը հոռետեսությունը տրվող մարդ չէր և, եթե իմանար, որ քիչ անց աշխարհը փուլ կգա, կրկին կկարողանար կատակել ու քմծիծաղել վախի դեմքին: Հիշեց նորից իր խողտացնող ոտանավորը.

«Չմեռը հեռացա՛վ, գարունը արթնացա՛վ, Քրիստոսը մեր մեջ հայտնվե՛ց, հոռետեսությունը ետ փախա՛վ, իսկ Գրիգոր վարդապետը չիմացա՛վ, տխրե՛ց ու լա՛ց եղաւ, լա՛ց եղաւ»:

Կոլոտին հաջողվեց Գրիգորից ժպիտ կորզել:

– Դե, ասա՛ տեսնեմ, փորձիչը ե՞րբ է հարվածելու մեզ: Ի՞նչ են ասում ահանջիդ ձայները:

Գրիգորը կամացուկ ժպտաց. ճիշտը պիտի խոսեր, բայց եղբայրները բարձրաձայն, միաբերան ուրախ մի երգ սկսեցին: Ոչ մի տխրություն չէր կարող դիմանալ այսպիսի եր-

գի գորուծյանը: Եղբայրական ուրախությունը, գինին ու կատակները վաղուց ավել էին տխրությունը՝ արտաքսելով վանքի պատերից դուրս: Այս գարնան առաջ ձյունն ինչպե՞ս կղիմանար: Կյանքն այսօր դրախտից մի անկյուն էր սարքել իրենց առջև. վաղվա դժոխքը ու՞մ հոգան էր:

Մոտենում էր ժամը չորսը: Բոլորն էլ կուշտ ու հագեցած էին: Կարապետ սրբազանի հետ ոտքի կանգնեցին՝ արտասանելու գոհաբանական աղոթքը: Հենց այդ պահին Գրիգորը շնչաց Հովհաննեսին՝ այսօր, այսօր:

– Ի՞նչ, այսօ՞ր, – մուտաց Կոլոտը: Սակայն աղոթքը սկսված էր: «Հայր մեր»–ից հետո հզոր մի «ամեն» թնդացրեց պարտեզը: Եվ փորձիչը եկավ:

Սեղանը առաջ շարժվեց, հետո ոտքի տակ հողը սկսեց խլրտալ: Բոլոր կողմերից ահագանգող աղմուկ բարձրացավ:

– Երկրաշա՛րժ է, երկրաշա՛րժ է, Աստվա՛ծ իմ:

Ծառերի խշրտոցը սպառնալից էր: Ծատերը միմյանց ձեռք բռնեցին, ոմանք ծունկի իջան, բոլորն անխտիր սրտագին աղոթում էին: Պարտեզում ապահով էին, իրենց վրա փլվող պատերից հեռու: Սակայն կայուն ու անշարժ թվացող հողի երերումն արդեն իսկ բավական հոգեցունց էր: Տասը վայրկյան անց շարժումը կանգ առավ:

– Փա՛ռք Աստծո, կարճ տևեց, շուտ կանգնեց:

Ի՞նչ իմանային, որ երկրաշարժը պարզապես խորը մի շունչ քաշեց՝ բուն ավերումը վարից վեր սկսելու համար: Խորերից եկող մի հարվածից սթափվեցին բոլորը, ու սկսվեց երկրաշարժի մոլեգին պարը: Այս մեկը առաջինից շատ էր տարբերվում: Ոչ մեկը չկարողացավ ոտքի վրա մնալ. ջանալով ինչ–որ բանից բռնվել՝ սողում էին գետնին: Իսկ ծառերն էլ այնպես էին ճկվում, որ կարծես պատրաստվում էին գավազանահարել նրանց: Մի քանի չորացած

ճյուղեր արդեն իսկ ընկան: Լեռների երգչախումբն աղա-
ղակում էր ժայռերի ահարկու մի կրճտոցով: Ոչ մեկն ակա-
նատես չէր եղել այսպիսի ահավոր երևույթի և ոչ էլ լսել
այսպիսի մի ձայն իր ամբողջ կյանքի ընթացքում: Ժամա-
նակը կարծես կանգ էր առել, և աղետը, սաստկանալով,
չարունակվում էր: Մեկը սուր մի ճիչով ուժգին գոռաց.

– Նայե՛ք, նայե՛ք, եկեղեցին փլվում է:

Իսկապես, նրանց աչքերի առաջ նորակերտ գմբեթը քա-
րուքանդ էր լինում, իսկ զանգակատունը ճեղքվում էր վե-
րից վար: Կործանարար ճոճումը աննկարագրելի որոտ ու
փոշի էր ծնում: Աշխարհի վե՞րջն էր գալիս: Ոչ ոք այդպես
չէր աղոթել, և ոչ ոք մահվանն այդքան մոտ չէր զգացել
ինքն իրեն:

Երբ երկիրը դադարեց շարժվել, սկսվեց սրտերի ցավա-
տանջ շարժում-ձայնումը:

Տեսնես ի՞նչ էր խլել իրենցից այս աղետը: Բայց և վա-
խենում էին մոտ գնալ շենքերին: Վանքի սուրբ պատերը
հիմա արդեն վերածվել էին իրենց վրա հարձակվող գա-
զանների: Բոլորը, ծնկի իջած, փառք էին տալիս Աստծուն
և ողորմութուն խնդրում նրանից: Շարժումները թեև թե-
թև, սակայն մերթնդմերթ շարունակվում էին՝ կրկին խու-
ճապի մատնելով միաբաններին:

Կործանումը մեծ էր: Վանքում ոչինչ չէր մնացել անվ-
նաս:



ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԱԳՆԱՊԸ

Մի քանի ըոպերի մեջ ամեն ինչ տակնուվրա էր եղել: Փլվել էին պատեր, տանիքներ, կամարներ: Նրանց տարիներին հաջողութունը եկեղեցու գմբեթի նման տապալվել, իսկ երազները զանգակատան նման ձեղքվել էին: Սակայն որոշ ժամանակ անց իրենց հավատի աչքերով նրանք սկսեցին բարին տեսնել չարության մեջ:

– Փա՛ռք Աստծո, – ասաց Գրիգորը գոհունակութ-
յամբ, – ես ավելի մեծ մի բան էի սպասում, ավելի կործա-
նիչ, քան այս մեկը:

– Սրանից ավելի մեծ էլ ի՞նչ կարող էր լինել, – հարց-
րեց նոր աբեղաներից մեկը:

– Պատերազմ, թալան, կողոպուտ և գերեվարութուն: Մեր վանքերը սովոր են երկրաշարժերի հետ միասին ապ-
րել: Անգամ այսպիսի սաստիկ երկրաշարժերն ավելի տա-
նելի են, քան մարդկային բարբարոսությունները: Մեր մա-
տենադարանը այրված չէ, սրատված ու գերված չեն մեր
միաբան եղբայրները: Ավելի ողորմած ու կարճ են բնութ-
յան հարվածները, քան մարդկային դաժանությունները: Ի-
զուր չի ասել Դավիթ մարգարեն. «Լավ է Աստծո ձեռքից
պատիժ ստանալ, քան մարդկանց ձեռքն ընկնել»: Ոչ մե-
կիս քիթն էլ չի արյունել: Եթե երկրաշարժը մեկ ժամ հետո
պատահեր, եկեղեցու մեջ էինք լինելու, երևակայեցեք:

Իսկապես, վնասը մեծ էր, բայց ոչ անդարմանելի: Սկսե-
ցին մաքրել փլատակները: Նրանց համար մեծ մխիթա-
րութուն էր, որ իրենց խցերը շատ քիչ էին վնասվել, իսկ
ճաշարանն ու մատենադարանն էլ գործածելի վիճակում

էին: Աշխատողի մեծ պահանջ կար, բայց այդ պահին հեշտ չէր այն գտնելը:

– Եթե ժայռերի վրա հաստատված մեր քարակերտ վանքը վնասվել է, ապա ի՞նչ վիճակում կլինեն հողակերտ գյուղերը: Պետք է անմիջապես օգնության հասնենք մեր ժողովրդին, – հայտարարեց Կարապետ սրբազանը:

Հենց նույն գիշերը բոլոր երիտասարդ վանականները մեկնեցին շրջակա գյուղերն ու քաղաքները: Միայն նորափետուր արեղաները մնացին վանքում ու տաժանակիր աշխատանքով լրացրին իրենց քառասնօրյա ապաշխարանքի շրջանը:

Կոլոտն անմիջապես փոխվանահայր ընտրվեց՝ լիազորվելով պատշաճ հեղինակությամբ և, ձեռքին իր անվամբ կնիք ունենալով, անմիջապես ուղղվեց Բաղեշ, որպեսզի նահանգապետարանից նորոգման համար արտոնագիր ձեռք բերի: Բարեբախտաբար Բաղեշի կողմերը երկրաչարժից չէին տուժել: Այնտեղից Կոլոտը պարտքեր վերցրեց, որքան կարելի էր, և անմիջապես վերադարձավ: Ծանապարհին հանդիպեց հողին հավասարված գյուղերի: Շեյխ Մահմուդը մեռել էր, իսկ Ջեմալը՝ վիրավոր փրկված: Հայ և քուրդ գյուղացիները չէին կարող օգնել վանքի շինարարությանը, որովհետև իրենք իսկ, անտանելի հոգսերով ծանրաբեռ, փորձում էին փլատակների միջից նոր կյանք սկսել: Ապա եկավ հնձի ժամանակը, և մարդիկ զբաղվեցին իրենց արտերով:

Վանքի համար ստիպված էին հեռուներից բանվորներ բերել, որը շատ թանկ նստեց նրանց վրա: Քարերից շատերն այնպես էին փշրվել, որ դարձել էին ոչ պիտանի: Այդ պատճառով վերաշինելու համար անհրաժեշտ էր նոր, ամուր քարեր հայթայթել, որ մի կերպ գտան երեք մղոն հեռվում գտնվող հանքերում: Շատ դժվարին ու ծախսալից

գործ էր քարերն այնտեղից հանելը, վանք բերելն ու տաշելը: Բայց և այնպես ամեն ինչ վերաշինվեց իր նախկին դիրքով ու փառքով: Միաբանները գոհ էին արդյունքից, բայց լրջորեն մտահոգված, քանի որ ամեն ինչ արված էր պարտքով, և որևէ եկամուտ չունեին՝ կնքված մուրհակներն ու պարտքերը վերադարձնելու համար:

Աշնանը Կարապետ սրբազանը մի քանի օր տառապեց մահվան անկողնում: Այդ միջոցին վերսկսվեց ընտրապայքարը նոր վանահայրության համար: Բայց Կարապետ սրբազանը կրկին առողջացավ և ջանաց խաղաղ ընտրություն ասպարհով իր վերջին շնչում: Իր մոտ կանչեց Գրիգորին ու Հովհաննեսին, որոնք, նրա անկողնի մոտ ծնկած, ձեռքերը բռնած, գորովալից մխիթարում էին:

– Որդյա՛կ, կարծում եմ, որ լավագույն ընտրությունը ձեզանից մեկի վանահայր լինելն է:

– Բայց մենք վանքում նորեկ ենք համարվում: Իրենց կյանքն այս վանքի մեջ անցկացրած վարդապետներ կան. անարդար կլինի նրանց նկատմամբ, այնպես չէ՞, – պատասխանեց Կոլոտը՝ սրբելով սրբազանի քրտնաթոր ճակատը:

– Ո՛չ, ո՛չ, ընդհակառակը, նրանք ավելի հեշտ կընդունեն դրսից մեկի առաջնորդությունը, քան իրենցից մեկի մեծավոր լինելը: Եթե իրենց միջից մեկը ընտրվի, խմբավորումները երկար ժամանակ գժտված կմնան, ինչը այս դժվարին ժամանակներում ամենից անցանկալի երևույթն է մեր վանքի համար. հանուն խաղաղություն ձեզանից մեկը պետք է վանահայր դառնա:

– Բայց միաբանները կընդունե՞ն այսպիսի մի առաջարկ:

– Ես բոլորի հետ խոսել ու համոզել եմ, մի՛ մտահոգվեք: Եթե ձեզանից մեկը իր թեկնածությունը դնի, բոլորն էլ կհամակերպվեն: Հիմա դուք որոշեք, թե ով պիտի լինի:

Երկուսն էլ միաժամանակ միմյանց մատնանշեցին:

– Հովհաննես վարդապետը արդեն իսկ վանքի փոխվանահայրն է: Նրանից ավելի լավը չունենք, հատկապես որ տնտեսական այս ճգնաժամից մեզ դուրս հանող կարողագույն միաբանը նա է:

– Լավագույն թեկնածուն Գրիգոր վարդապետն է, որն իմ երեց եղբայրն է և ուսուցիչը: Ինքն է Վարդան վարդապետի լավագույն ժառանգորդը, ինձանից ավելի ճգնասեր ու աղոթասեր: Նաև վանքի տնտեսական խնդիրներով զբաղվելու համար ես ավելի ազատ պետք է լինեմ, այնպես չէ՞, – նժարը Գրիգոր վարդապետի կողմն էր ծռում Կոլոտը:

– Այո՛, որդի՛ս, – ասաց սրբազանը՝ դիմելով Գրիգորին, – ինձ թվում է, քո վանահայրությունը լավագույն ընտրությունն է: Խնդրում եմ, ընդունիր, որպեսզի մահկանացուս խաղաղությամբ կնքեմ և իմ ետևից լսեմ համերաշխ եղբայրության սիրո աղոթքներ և ոչ թե բաժանյալ միաբանության կծու բամբասանքները միմյանց դեմ:

Ինչպե՞ս կարող էր Գրիգորը մերժել իրենց պահապան հրեշտակի վերջին կամքը: Անկեղծ սիրով համբուրեց հյուժոված վանահոր ձեռքը և երկու շիթ երախտապարտ արցունքով օժեց այն:

Երկու շաբաթ անց Կարապետ սրբազանը վախճանվեց: Գրիգորը միաձայն ընտրվեց Մշո Սուլթան Սուրբ Կարապետ վանքի նոր վանահայր: Սակայն անտակ պարտքերի մտահոգությունը ստվերում էր նրանց ուրախությունը: Գրիգորն ու Հովհաննեսը չէին կարողանում քնել: Աղետը ընկճելու աստիճան սաստկացրել էր իր անխնա հարվածները: Հոր Երանելու փորձիչ սատանան այս անգամ երաշտով էր հարվածում տարածաշրջանը: Հունձը ձախողվել էր, ու սովը՝ սկսել: Սոված մարդկանց խմբեր էին դիզվում վան-

քի դուան մոտ՝ հաց մուրալու:

– Նիհար ու քաղցած մանուկների հայացքները անտանելի են, սպանում են ինձ: Սիրտս պայթում է, Կոլո՛տ, պայթում: Ի՞նչ ենք անելու:

– Ինչ որ հրամայես, այն էլ կանենք, աբբահա՛յր: Ի՞նչ են ասում ներքին ձայներդ:

– Կիսե՛ք ձերը աղքատների հետ մինչև վերջին փշրանքը և պատրաստ եղեք նրանց հետ սովամահ լինելու, – կասկածանքով նայեց Գրիգորը իր գանձապահ եղբորը, որովհետև լավ գիտեր, թե ինչպես էր նա աշխատում վանքը ոտքի վրա պահելու համար: Չորս հարյուր հոգի արդեն իսկ ճաշում էին վանքում: Կոլոտը բարձրաձայն ծիծաղեց:

– Այն, ինչ ասում ես, աբբահա՛յր, հակառակ է տնտեսության և ողջամտության բոլոր կանոններին: Բայց գիտեմ, որ այսպիսի գաղափարները մսից ու ոսկորից չեն բխում, այլ միայն Սուրբ Հոգին կարող է ներշնչել դրանք: Եթե հրամայես, վանքի ամբարները, մինչև վերջին փշրանքը, կբացենք սովյալների առջև:

– Բացե՛նք, եղբա՛յր, բացե՛նք, որպեսզի սոված մանուկ չմնա:

Այդուհետ վանքի ճաշարանում հազար հոգու համար ճաշ էր եփվում, և երկու հազար նկանակ հաց բաժանվում սովյալներին: Կոլոտը պարտք էր անում՝ առանց իմանալու, թե ինչպես պիտի վճարի դրանք: Եվ մուրհակները կնքում էր իր կնիքով:

– Միայն երկու շաբաթ կարող ենք շարունակել այսպես, – ասաց Կոլոտը Գրիգորին, – եթե հրաչք չպատահի:

– Սատանան ապացուցեց, որ գոյություն ունի. այժմ Աստված պիտի ապացուցի, որ մեզ չի լքել: Պիտի շարունակենք, մինչև որ մենք էլ խառնվենք սովյալների շարքերին, որպեսզի հանգիստ խղճով կարողանանք ասել, թե՛

մենք էլ ձեզ պես հաց չունենք ուտելու, – որոշեց Գրիգորը:

Տասնհինգ օր անցավ, բայց վանքի ո՛չ ալյուրը նվազեց, ո՛չ էլ ձեթը պակասեց: Քարավաններն ամեն կողմից ցորեն էին բերում Սուրբ Կարապետ վանքին, որը Երուսաղեմից ու Էջմիածնից հետո երրորդ կարևոր ուխտատեղին էր հայ ժողովրդի համար: Ուխտավորները, երբ տեսնում էին ծանր վիճակը, լայն բացում էին քսակներն ու իրենց տները վերադառնալուց հետո էլ շարունակում էին օգնություն հայթայթել: Ահա մի վաճառական Հնդկաստանից, մի ամիրա Կոստանդնուպոլիս մայրաքաղաքից, Պարսկաստանից մի ազնվական և Արցախից մի մելիք: Երբեք այսքան երևելի մարդիկ միառժամանակ չէին այցելել վանքը, որն այնքա՛ն կարոտ էր հրաչքի: Ինչո՞ւ հիմա և միասնաբար, ճիշտ անհրաժեշտ պահին: Պատահածը բախտի բերմա՞մբ էր, թե՞ Հոբելի օրհնությունն էր ի վերջո հասել ՝ իբրև պատասխան իրենց հավատարմության: Կառավարությունը ևս օգնություն հասավ: Տարածաշրջանում չքավորությունն էր իշխում, բայց, փա՛ռք Աստծո, սովամահ չկար:

Ձմեռն իջավ Տարոնի լեռների վրա ու սպիտակ մանանայով ծածկեց ամեն ինչ: Ձյունը դանդաղեցրեց կյանքը: Այլևս ուխտավորներ չկային: Վանքը տրվեց իր առօրյա զբաղմունքներին և լրջորեն զարկ տվեց աշակերտների կրթությանը: Աղոթքի, խոկման և ընթերցանության անսահման ժամանակ կար ցանկացողի համար: Ձյունը փակել էր ճանապարհները, բայց բացել դեպի Աստված տանող ուղիները: Վանքի լուսությունը հզի էր ՝ պատրաստ հոգիներին վերածնունդ պարգևելու:

Կոլոտի բոլոր մտածումները ավարտվում էին պարտքերի մարման մտահոգությամբ: Պարտատերերը մի քանի ամիս անց պահանջելու էին վերադարձնել իրենց փողերը:

Մուրհակները տակ իր կնիքն էր դրված: Պետք էր փող գտնել, բայց ինչպե՞ս: Հարցը դրվեց միաբանական ընդհանուր ժողովում: Նոր գաղափարներ արտահայտվեցին՝ թե՛ ծիծաղաշարժ, թե՛ խիզախ: Օրինակ՝ երիտասարդ հայերից մեկը խոսեց ուխտավորների թիվն ավելացնելու մասին.

– Քրիստոսի ջերմեռանդ հետևորդների մեծամասնությունը կանայք են, որոնք ավելի բարեպաշտ են, քան այրերը: Եթե արտոնենք կանանց մուտքը Սուրբ Կարապետ, կբազմապատկվի ուխտավորների թիվը, ուստի և՛ եկամուտը:

Մեծ ազմուկ բարձրացավ այս երիտասարդ ու ոչ փորձառու վանականի տխմար առաջարկի վրա, որն արդեն հարյուրավոր տարիներ առաջ միանգամընդմիջտ լուծված էր: Իգական սեռին պատկանող ոչ մի արարած չէր կարող մուտք գործել վանքի պարիսպներից ներս, ինչպես ուրիշ վանքերում: Ծերերը սկսեցին կատակել այս մտքի վրա և արհամարհանքով վերաբերվեցին երիտասարդին՝ թաքուն կրքեր սնուցելու ամբաստանություն: Կոյուտը թեև չէր կիսում երիտասարդի առաջարկը, բայց անցավ նրա կողմը.

– Այստեղ եղբայրների ազատորեն արտահայտվելու վայրն է: Ամեն մի նոր գաղափարի դեմ այսպիսի անխիղճ պահվածքով իսպառ կխրտնեցնենք միտք արտահայտել ցանկացողներին: Եկեք մտածենք: Որքա՞ն պարտական է եկեղեցին հերետիկոսներին, որոնց շնորհիվ հասանք վարդապետական հստակություն: Եկեք վիճաբանենք ու վերստին հստակեցնենք, թե ինչու՞ կանայք չպետք է մուտք գործեն Սուրբ Կարապետից ներս:

– Հովհաննես վարդապետ, դո՞ւ էլ չգիտես, թե ինչու է այդ արգելքը, – քմծիծաղով առարկեց մի երեց միաբան:

– Ես քաջ գիտեմ մեզ ավանդվածը, հա՛յր սուրբ, և սրտանց պաշտպանում եմ, սակայն այս նոր գաղափարը

այնքան էլ հիմար չէ, որքան դուք կարծում եք և արհամարհում այն: Մեր վանքը բավականին մեծ է, և մենք հեշտուկամբ կարող ենք պաշտպանել թե՛ մեր միաբանական ներփակյալ կյանքը և թե՛ արտոնել կանանց մուտքը եկեղեցի և գերեզմանատուն, ուր նրանք կարող են կատարել իրենց ուխտը և հեռանալ: Եթե կանայք սկսեն գալ, մեր եկամուտն իսկապես կբազմապատկվի, ինչպես ասաց հայր սուրբը:

– Ամեն ինչ առևտրի ենթակա չէ այս վանքի մեջ, հայր Կոլոտ: Եթե կինը մտնի, հոգևոր միջնորդը կքայքայվի, ու սատանան մուտք կգործի կանանց հետ:

Մեծ վիճաբանությունն ծագեց: Բոլորը խոսում էին, վիճում ու բարձրաձայնում: Գրիգորը փակեց նիստը և երեք օր մտածելու ժամանակ տվեց: Պարզ երևում էր, որ քննարկվող նյութը բոլորին էլ հետաքրքրել էր ու միաբանների մեջ անսպասելի եռուզեռի առիթ տվել:

Երրորդ օրը՝ առավոտյան ժամերգությունից հետո, Հակոբ վարդապետը, որ միաբանության ավագագույնն էր, ուզեց մի քանի ընկերակցությամբ խոսել Կոլոտի հետ: Կոլոտն ակնկալում էր լսել սաստում և ավանդության պահպանման մասին խստաբարո մի ճառ:

– Նայի՛ր, վարդապետ, – ասաց ծերը՝ չարաճճի ժպիտը շուրթերին, – իմացի՛ր, որ այս մեկը շատ շահեկան գաղափար է և շատ էլ կողմնակիցներ ունի: Ես էլ եմ մեջը:

– Զարմանալի է, հայր սուրբ, դու էիր ամենից վառվռուն հակաճառողը այս գաղափարի դեմ:

– Դեռ այդպես եմ: Այս գիշեր էլ պիտի առարկեմ դրա դեմ: Բայց դու փակ քվեարկություն պահանջիր և տես լինելու բանը:

Կոլոտը մի անգամ ևս զարմացավ մարդկային հոգու բարդության վրա: Այդ գիշեր շատ քիչ կողմնակիցներ ու-

*Նեցավ առաջարկը, որը փակ քվեարկութեամբ մերժեց,
բայց հազիվ չորս քվեի առավելութեամբ: Յուրաքանչյուրը
զարմացած էր, թե ովքե՞ր են արդէոք նրանք, որոնք կողմ-
նակից էին իրենց անմիջական շրջապատում կին տեսնելու
գաղափարին:*



ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

Երկրաշարժից հետո ևս երեք տարի անցավ: Մեծագույնագույն պարտքերը, ճնահյուսի նման կուտակված, անմիջական լուծման էին սպասում: Պարտատերերը, իրենց իրավունքը անմիջապես ստանալու համար, մեծապես անխնա ճնշում էին խեղճ վանականներին: Նրանք, երբ տեսան, որ զինված սպառնալիքների տակ իրենց կյանքն էր վտանգվում, խոհեմաբար ժամանակավորապես ցրվեցին ուրիշ վանքերի վրա, հատկապես վարդապետները՝ ներառյալ Կոլոտն ու Գրիգորը: Սակայն ազդեցիկ հայերի միջնորդությամբ Կոլոտին հաջողվեց ապահովություն հաստատել Բաղեշի կառավարչի կողմից ուղարկված մի զորախմբով: Երբ վանք վերադարձան, Ջեմալը նրանց այցելության եկավ՝ անկեղծորեն նրանցով մտահոգված: Արդեն քսանամյա երիտասարդը Մահմուդի փոխարեն դարձել էր տարածքի քրդերի ցեղապետն ու շեյխը: Նա պաշտպան կանգնեց վանքին այնպես, ինչպես հայրը: Զինված սպառնալիքները վերացան: Այս առումով արդեն ապահով էին, բայց պարտքերը մնում էին՝ ավելի ու ավելի կուտակված: Լուծման մեկ ճանապարհ էր մնացել. նվիրատվություն հավաքել Տարոնի ու Բաղեշի սահմաններից այն կողմ՝ մեծագույն քաղաքների մեջ հավաքված աշխարհասփյուռ հայերից:

Միաբանական ընդհանուր ժողովը որոշեց կարող վարդապետների առաջնորդությամբ երեք պատվիրակություն ուղարկել դեպի Կովկաս, Պարսկաստան և մայրաքաղաք Կոստանդնուպոլիս, ուր գնալու էր Կոլոտը:

Երկու հարազատների բաժանումն իրոք զգայացունց էր

բառի բուն իմաստով: Մեկնելուց մի օր առաջ վանքից դուրս եկան՝ միասին ժամանակ անցկացնելու և աղոթելու: Քայլերը նրանց տարան դեպի այն առվակը, ուր վեց տարի առաջ կանգ էին առել, և ուր թիթեռնիկը թառել էր Կոլոտի թևին: Նորից մի գեղեցիկ օր էր ու դարձյալ խաղաղ: Նստեցին ծառերի տակ և իրենց տոպրակներից հանեցին լավաշ հաց ու պանիր, կերան ախորժակով և զրուցեցին ամեն ինչի մասին: Երկուսն էլ խուսափում էին խոսել մեկնումի մասին, բայց անխուսափելի էր չանդրադառնալ դրան:

– Գիտե՞ս, Գրիգոր, հիմա ինչ կուզենայի:

– Ի՞նչ:

– Մի ուրիշ թիթեռնիկ թառեր թևիս վրա, նախկինի նման խոշոր, գեղեցիկ ու չքնաղ:

– Ինչու՞, մի ուրի՞շ հրաշք էլ ես ուզում:

– Այո՛, մի պահ պատկերացրու, որ վերադառնում ենք վանք, և մի մեծահարուստ աշխարհուրաց է եկել: Սուրբ Անտոն անապատականի պես ամեն ինչ ծախել ու վանքում ապրել է ուզում, և մենք փրկվում ենք բոլոր պարտքերից: Եվ կամ վանքի մեջ շինարարությամբ զբաղվողները հեթանոսությունից մնացած գանձ են գտնում՝ ոսկի, արծաթ, ադամանդներ:

– Հա՛, հա՛, հա՛, ես կարծում էի այսպիսի երազները դու միայն քնած ժամանակ ես տեսնում:

– Ինչու՞ է աշխարհի վրա ամեն ինչ այսքան բարդ, դժվարին ու անհավասար, Գրիգո՛ր: Ինչու՞ կյանքը գոնե մեկ օր երազների չափ հեշտ ու երջանիկ չի անցնում: Ինչու՞ են լուծումներն այսքան ուշանում, ինչու Աստծո մոգական ձեռքը հեշտությամբ ու ազդեցիկ կերպով չի վերացնում չարությունը:

– Այսինքն, մենք ավերենք, իսկ Աստված մեր ետևից

անվերջ հրաշքներով շտկի ամեն ինչ: Նաև համամիտ չեմ քեզ հետ, որ կյանքը միշտ քո նկարագրածի չափ դժվար է ու տխուր: Դժվարությունների ժամանակ ընդհանրապես մարդիկ ուզում են, որ Աստված միջամտի մի հրաշքով և մոգական փայտիկի հպումով լուծի խնդիրը: Իսկ սովորական դեպքերում ոչ ոք չի դժգոհում կյանքից և ոչ էլ Աստծուց անընդմեջ հրաշք սպասում:

– Հետաքրքիր է, չէ՞: Ընդհանրապես այսպիսի հոգեվիճակում դու էիր լինում, և ես ջանում էի մխիթարել քեզ: Այսօր մեր դերերը փոխվեցին: Այսօր ես մխիթարանքի կարիք ունեմ: Հոգիս մեռնելու աստիճան տխուր է, պանդխտությունը ծանր եմ տանում:

– Միայն մի քանի ամիս. այս գործն իրականացնողը միայն դու ես, հակառակ դեպքում քեզ չէի ուղարկի: Վստահ եմ, որ դու մայրաքաղաքում ոչ միայն պարտքերը փակելու չափ հանգանակություն կհավաքես, այլև մյուս ծրագրերն իրականացնելու միջոցներ կհայթայթես: Գիտես, թե վանքի մեջ որքան անհրաժեշտություն կա արդիական մի տպարանի. չարժե՞ մի քանի ամսվա պանդխտությունը:

– Մի քանի ամիս: Իմ ներսի ձայնն այս անգամ խուճկում է հոգիս: Հուշում է, որ սա իմ վերջին ճամփորդությունն է և այլևս երբեք չեմ կարողանալու վերադառնալ Սուրբ Կարապետ:

– Այդ դեպքում մի՛ գնա: Ուրիշներին կուղարկենք:

– Բայց գնալ էլ եմ ուզում:

– Ձեմ հասկանում, հակասական բաներ ես ասում. ուզում ես գնալ, թե՞ ոչ:

– Ուզում եմ և թե չեմ ուզում միևնույն ժամանակ: Քեզ հետ երբևէ չի՞ պատահել: Անշուշտ, ուզում եմ գնալ մայրաքաղաք, տեսնել ու գրավել այն: Ճանաչել մարդկանց ու ճանաչվել նրանցից, դիրքի տիրանալ, իշխել փողին և ուղ-

դուլթյունն տալ մեր եկեղեցուն և ազգի ճակատագրին: Այո՛, ուզում եմ մտնել պատմութեան մեջ, անհատ լինել եմ ուզում: Եվ այս բոլորի ճամփան անցնում է Նոր Հռոմով:

Գրիգորը զարմանքով նայեց իր վաղեմի բարեկամին: Նրանից երբեք այսպիսի խոսքեր չէր լսել: Իրենց վանական կյանքում այսպիսի զգացումները ամոթալի էին համարվում և, թերևս, միայն խոստովանանքի ժամանակ արտահայտվող կրքեր ու սրտի գաղտնի մեղքեր լինեին:

– Ի՞նչ է, շա՞տ զարմացար: Դու էլ երբեմն այսպիսի բաներ չե՞ս անցկացնում մտքիցդ: Ժամանակ առ ժամանակ այս կրակները չե՞ն վառվում սրտիդ մոլթ անկյուններում:

– Բայց դու այդպիսին չես, ես գիտեմ: Այսքան տարի իմ ճանաչած Կոլոտը այս չէ, իհարկե, – Գրիգորն իր գլուխը շարժեց թերահավատութեամբ:

– Այո՛, միայն այն Կոլոտը չեմ, դրա համար էլ չեմ ուզում բաժանվել այս տեղերից: Չեմ ուզում խառնվել մեծ քաղաքների ժխորին: Ես վանքում մնալ եմ ուզում, խորանալ աստվածագիտութեան մեջ, հոգուս սովորեցնել երկնքի ճանապարհը: Վանքի մեջ մի քանի տարի ևս անցկացնելուց հետո ուզում եմ ճգնելու բարձրանալ մեր սեպածե լեռների վրա, ուր Վարդանի նման փնտրել ու գտնել եմ ուզում իմ Անանուն Սրբին ու նրանից մկրտվել կրակով:

– Ահա, սա՛ է Կոլոտը:

– Ձէ՛, չես հասկանում: Երկուսն էլ ես եմ: Ավելի ճիշտ երկուսն էլ լինել եմ ուզում և երկուսն էլ չեմ: Երկուսի մեջտեղում առկախյալ վիճակի մեջ եմ և ինձանից դու չես: Ո՛չ լեռ բարձրանալու քաջությունն ունեմ, ո՛չ էլ քաղաք իջնելու: Այս ի՞նչ հանելուկ է, եղբայր, ո՞րն է այս լաբիրինթոսից դուրս գալու ելքը: Երկար ժամանակ աղոթում էի Աստծուն, որպեսզի դուրս հանի ինձ այս կաթվածահար երկմտությունից: Եվ ահա ուղարկում եք ինձ մայրաքա-

ղաք: Փա՛ռք Աստծո, հրում եք ինձ: Հակառակ ղեպքում
ես անձամբ չէի կարող կատարել այդ քայլը:

– Դու արդեն լուծել ես խնդիրը, և ես հասկացա, որ
չուտ կամ առհասարակ չես վերադառնալու: Եթե անգամ
դու ուզենաս վերադառնալ, ներքին Կոլոտը մի այլ ճամփա
կգտնի՝ երկարելու համար իր այս «զբոսանքը», – այս ան-
գամ տխրեց Գրիգորը:

– Կարծում եմ մի քանի ամսից կվերադառնամ, երբ մեր
պարտքերը վճարելու չափ հանգանակություն հավաքեմ,
անմիջապե՛ս կվերադառնամ:

– Մի քանի ամսի՞ց: Առակը լավ է ասում. «Մարդը
ծրագրում է, իսկ Աստված ծիծաղում»: Բայց ամեն ինչ լավ
է լինելու, մեր երևակայածից ավելի լավ, շատ ավելի մեծ ու
փայլուն կերպով: Հիմա հոգիս ցնծում է և ասում, որ դու
փողի համար իր եղբայրների կողմից Եգիպտոս ծախված
Հովսեփն ես: Քո պանդխտությունն էլ այդպես փառավոր
է լինելու, նաև ազգօգուտ ու եկեղեցաչեն:

Երկու եղբայր գրկախառնվեցին, նրանք լալիս էին:



ԴԵՊԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Սեպտեմբերի երկրորդ օրը՝ երկուշաբթի առավոտյան, ժամերգությունից հետո Կոլոտը հեռացավ վանքից: Ուզում էր մայրաքաղաք հասնել երկու ամիս Անատոլիայում շրջելուց հետո: Իր ճամփորդության ընթացքում նա անցավ անթիվ գյուղերով, ավաններով ու քաղաքներով: Ամեն տեսակ մարդու հանդիպեց ու հյուրասիրվեց: Ամեն տեսակի փոխադրամիջոցից օգտվեց. ճիակառք, ձի, ջորի, էջ և Աստծո տված երկու ոտքերը: Զարմացած էր, որ հայերը տարածվել էին ողջ Անատոլիայով մեկ և ամեն անկյունում կարելի էր հայի հանդիպել: Ողջ ճամփորդության ընթացքում ոչ մի անգամ օտարութուն չգզաց. միշտ մի հայ տանիք ծածկում էր նրա գլխավերևը: Ուր եկեղեցի կար, պատարագեց ու քարոզեց: Ըստ սովորության գրուցեց բոլոր խավերի մարդկանց հետ: Ականատես եղավ իր ժողովրդի ցավերին՝ քաղաքական ու կրոնական խտրությանը, կաշառակերությանն ու աղքատների կեղեքումին հարուստների կողմից: Որոշ տեղերում ցավով տեսավ կաթոլիկ քարոզչության պառակտիչ արդյունքները՝ բաժանված ընտանիքներ, միմյանց զրպարտող հոգևորականներ, անտեղի բանավեճեր ու կուսակցություններ: Տեսավ համայնքներ առանց եկեղեցու և եկեղեցիներ՝ առանց եկեղեցականի, ուր ժողովուրդը պաղատում էր նրան մի օր ավելի մնալ իրենց հետ: Տեսավ մզկիթ դարձած եկեղեցիներ և եկեղեցիներ՝ լքված ու կիսափուլ:

Այս ճանապարհորդությունը հոգնեցրեց նրա հոգին. այնքա՛ն քիչ բան կարող էր անել հազարավոր խնդիրների

դիմաց, եթե նույնիսկ հազար կտոր լինեն: Եվս մեկ անգամ համոզվեց, որ խնդրի լուծումը ազգի համար կրթված եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստելն էր: Հասկացավ, որ ոչ թե տարիների, այլ դարերի ծրագրեր էին հարկավոր ազգային ու կրոնական շոշափելի զարգացում արձանագրելու համար: Վայրկյան առաջ Սուրբ Կարապետ վերադառնալ էր ուղղում, որպեսզի զարկ տար աշակերտներ պատրաստելու գործին և նոր ուժգնություն մաշխոթացներ կրթական գործունեությունը:

Հանգանակությունը լավ էր գնում՝ գերազանցելով իր ակնկալիքները: Երեք բան խթանում էին այս հաջողությունը՝ Սուրբ Կարապետ վանքի անունը, Վարդան վարդապետի տարածված հռչակը և Կոլոտի ճարտասանությունը: Մշո Սուլթան վանքը անխտիր բոլոր հայերի բաղձալի գլխավոր ուխտավայրերից մեկն էր: Անշուշտ, բոլորի համար մատչելի չէր Սուրբ Կարապետ այցելելը, և ահա, Սուրբ Կարապետ վանքը եկել էր իրենց ոտքը: Ուղղում էին մասնաբաժին ունենալ նրա կարիքներին իրենց մեծ ու փոքր նվիրատվություններով և արժանանալ Սուրբ Գրիգորի և Սուրբ Կարապետի բարեխոսությունը: Կոլոտը արձանագրում էր նրանց անունները, որպեսզի վանքի մեջ հոգեհանգիստ կատարվեր նրանց ննջեցյալների համար:

Կոլոտին ամենից շատ զարմացնում էր Վարդան Վարդապետի հռչակը, որն ամենուր այսքան մեծ տարածում էր գտել: Իր ամբողջ կյանքը վանքում անցկացրած մեկի համար սա փոքր նվաճում չէր: Երբ Կոլոտն ասում էր՝ «Ես Վարդան Բաղիչեցու աշակերտն եմ», մարդկանց նայվածքը հանկարծ փոխվում էր, և հիացմունքով լի մի ժպիտ էր սփռվում նրանց դեմքերին:

– Ասա՛ մեզ, իրո՞ք մեռելներին հարություն էր տալիս: Ծճմարի՞տ է, որ կարողանում էր քառասուն օր քաղցած

մնալ: Ոմանք տեսել են, որ օդում կարողանում էր թռչել: Ուզած տեղում կարող էր հայտնվել ու հանկարծ անհայտանալ: Դու տեսե՞լ ես ձյան վրա նրա ոտաբոբիկ քայլերը: Այսպիսի հարցերին պատասխանելը դժվար էր, որովհետև, երբ Վարդանի կյանքից որևէ դրվագ էր պատմում, անպայման ուզում էին ավելին լսել: Նրանց համար դրանք լսելը հաճելի ժամանց էր՝ հեքիաթի նման: Իսկ ամենից դժվարը՝ նույն հրաշքները, գոնե փոքրագույնները, ակնկալում էին տեսնել նրա աշակերտից: Կոլոտը հրաշագործ մի վարդապետի աշակերտ էր, բայց ինքը դժբախտաբար հրաշագործ չէր: Հեշտ չէր նաև այս ամենը գոհացուցիչ կերպով բոլորին բացատրել: Մի քահանայի հետ այս նյութի շուրջն ամբողջ գիշեր զրուցելուց հետո Կոլոտը չկարողացավ քնել: Իսկապես տարօրինակ էր մի բան. ինչու՞ իրենք, այսքան մոտ լինելով հանդերձ, միաժամանակ այսքան տարբերվում էին Վարդանից: Միշտ զգում էին, որ անկամրջելի մի անդունդ կար նրա վեհուկության և մյուսների միջև: Հին հուշերն արթնացան, և Վարդան վարդապետի գեղեցիկ ժպիտը գծագրվեց նրա աչքերի առջև: Մի օր աշակերտները նեղել էին վարդապետին իրենց խիզախ հարցումներով: Վարդանն ինքն էր նրանց այդպես հարցաքննելու սովորեցրել, իր անձը՝ նույնպես: Տարին չորս անգամ նա «Ճշմարտության դատաստան» էր կազմակերպում, որի ժամանակ իր աշակերտների հետ որևէ նյութի շուրջ ճշմարտությունն էին ուսումնասիրում՝ վիճաբանության խիստ ոճով: Վարդապետներ, աբեղաներ, սարկավազներ և ավագ աշակերտներ՝ հիսուն— վաթսուն հոգի շրջանաձև նստում էին հավասար իրավունքներով: Վարդանը նույնպես նստում էր նրանց մեջ՝ նրանց հավասար: Ժողովի ընթացքում չէր կարելի գործածել դիմելու «Դուք», «Ձեզ» ձևերը. բոլորը հավասարապես «դու» էին,

ներառյալ Վարդանը, որ քաջալերում էր աշակերտներին, որպեսզի ոչ մի բան չթաքցնեն, խոսեն սրտի խորքից. հատկապես իրենց ուղղված հարցումների ժամանակ լինեն անկեղծ՝ մի կողմ դնելով քաղաքավարությունը և խոսեն այնպես, կարծես խոսում են իրենք իրենց հետ առանձնության մեջ: Միայն մի պայման էր դրել. ինքն էլ կարող էր նույնն անել՝ նրանց սիրտը կոտրելու աստիճան սուր և մերկ:

– Հիսուսը միշտ գործածում էր այս հնարը իր աշակերտներին կրթելիս: Բայց դուք չեք կարող հանդուրժել այն տարին չորս անգամից ավելի, – ասում էր Վարդանը:

«Դատաստանից» լացելով հեռացողներ էին լինում: Այս ժողովները միայն մի նյութ ուսումնասիրելու համար էին. արտոնված չէր այդ նյութից մի այլ նյութի անցնել: «Դատաստանը» տևում էր երբեմն մի քանի ժամ, իսկ երբեմն էլ՝ օրեր: Այդ օրվա «Դատաստանի» թեման Վարդանի հրաչքներն էին:

– Այդ ինչպե՞ս է, որ քո մասին ժողովուրդը ավելին գիտի, քան մենք: Ինչու՞ չես պատմում մեզ քո հրաչքների մասին, ինչպե՞ս ես անում դրանք:

– Եթե չես պատմում, ուրեմն պետք չէ:

– Բայց քո մասին մեզ են հարցնում, և չէ որ մենք քո աշակերտներն ենք և իրավունք ունենք իմանալ:

– Եթե իրավունք ունենայիք, կառնեիք:

– Վիրավորում ես մեզ, մենք քո վարդապետներն ենք:

– Հարցն էլ հենց այդ է: Իմ աշակերտներն եք և ամբողջ կյանքում այդպես էլ պիտի մնաք ու մեռնեք: Դեռ Քրիստոսի աշակերտը չեք դարձել:

– Քիչ առաջ մեզ վիրավորեցիր, իսկ հիմա հայհոյում ես, շնորհակալ ենք:

– Ճշմարտության լեզուն վիրավորող է: «Վա՛յ ձեզ դպրաց ու փարիսեցվոց կեղծավորաց». հիշեցի՞ք, թե ով է

խոսողը: Դուք տառերի վարդապետ դարձաք, իսկ հրաշքների դպրոցը այլ է, որին նույնիսկ չեք դիմել:

– Քեզ դիմեցինք, ամբողջ տարիներ մանկությունից ի վեր քո ծնկների տակ նստեցինք, և մեզ միայն տառերը սովորեցրիր, մեղավորը դու ես: Եթե Ամրդուլի մեջ հրաշքների դպրոց հիմնելիր, մենք էլ կհաճախեինք ու Վարդան վարդապետի կեղծավոր վարդապետները չէինք լինի:

Վարդանն սկսեց ծիծաղել՝ ձեռքերը շոյելով:

– Շատ լավ, շատ լավ, շարունակե՛ք, գտնենք ճշմարտությունը:

– Բայց հարցին չպատասխանեցիր: Ինչու՞ տառերի, գրքերի դպրոց հիմնեցիր և ոչ թե հրաշքների: Խույս մի տուր պատասխանից:

– Որովհետև այբուբենի տառերը չիմացողը գրել–կարդալ չի կարող սովորել, բայց նաև բոլոր գրել–կարդալ իմացողները գիրք հեղինակել չեն կարող, և պետք էլ չէ, որ բոլորը գիտնականներ դառնան: Հոգևոր կյանքի բարձունքները ևս ստորոտներ ունեն: Ուսումնասիրել Սուրբ Գիրքը, այսինքն՝ սովորել աստվածագիտության տարերքը, փիլիսոփայություն, տրամաբանություն և այլ գիտություններ, դեպի հոգևոր կատարելություն տանող առաջին քայլերն են: Ես էլ հոգևոր նախակրթարան բացեցի Ամրդուլի մեջ, որ մեր լեզվով «համալսարան» է հորջորջվում: Սա սովորեցիք և «վարդապետ» կոչվեցիք: Դուք գոհ եք, ժողովուրդը գոհ է, և ինչու՞ չէ, Աստված նույնպես գոհ է: Ուրեմն խնդիր չկա, որովհետև ես էլ գոհ եմ:

Նորից Վարդանը լռեցրեց բոլորին: Բայց և այնպես քսան վարդապետ և քառասուն աշակերտ կային իր առջև: Հարցումների տարափը չէր դադարում:

– Ինչու՞ մեզ չես առաջնորդում դեպի հոգևոր ավելի բարձր մակարդակներ, երևի նախանձում ես, ուզում ես մե-

նակ մնալ այդ բարձունքների վրա: Ինչպիսի՞ն է մեզ վերևից նայելու հաճույքը, վարդապե՛տ:

– Եթե ուզում ես իմանալ, արի այստեղ և դիտիր:

– Մենք ուզում ենք գալ, բայց դու հազար ու մի արգելք ես դնում մեր առջև: Ահա խնդրում ենք քեզ, որ առաջնորդես մեզ հրաշքների աշխարհը, բայց փոխարենը միայն ճառ ենք լսում քեզանից:

– Դուք կարծում եք, որ վերևում՝ մի տեղ, հրաշքների խանութ կա, ուր պիտի առաջնորդեմ ձեզ, և դուք էլ պիտի գնեք ձեր ուզածը ու, այսպիսով, ձեր համբավը իմի նման պիտի տարածվի, և դուք ձեզ հեզևոր կյանքում սնահառորեն հառաջացած զգաք: Ես ձեր մանկամտության գործիքը չեմ դառնա: Այո՛, ես առանձին եմ մնալու այս բարձունքի վրա: Եթե կարող եք, մագլցելով եկեք: Համեցե՛ք: Հոգևոր կյանքի գազաթները իմ ապրանքները չեն:

– Անանուն Սուրբը քեզ առաջնորդեց դեպի կատարները: Դու ինչո՞ւ ես այդքան ժլատ Աստծո արքայության գաղտնիքները մեզ հետ բաժանելիս:

– Եթե ձեր մտքում եղածը կատարելի, Ամրդուր աղանդավորների բույն կդառնար և ոչ թե ուղղափառ մի վանք: Գիտե՞ք, ինչ է հոգևոր կյանքի ոսկե ցանկապատը: «Ինչ որ Աստված չի կամենում ցուցադրել աշխարհին, դու էլ պետք չէ ցանկացող լինես այդ ուղղությամբ»: Այս ցանկապատից դուրս սատանան և դևերը սպասում են ձեզ գրկաբաց:

– Բայց մենք մեր ամբողջ կյանքը հոգևոր զարգացմանը զոհեցինք: Գրքերից բացի ուրիշ բան չունեն՞ս մեզ տալու: Քեզնից հաց ենք ուզում, և դու մեզ քա՞ր ես տալիս: Ինչո՞ւ չես կիսում մեզ հետ Սուրբ Հոգուց ժառանգածդ:

– Ձեզ հետ կիսում եմ այն ամենը, ինչը ձեզ համար օգտակար է, և դուք կարող եք ընկալել: Եթե ավելին անեմ,

ձեր կործանման պատճառը կդառնամ: Ես ձեզ բոլորիդ ճանաչում եմ: Ձեր մեջ դեռ չկա Անանուն Սրբին աշակերտող մեկը: Ձեզ մի առակ պատմեմ. մի գորտ թռչել էր ուզում, որպեսզի ձեզ նման բարձունքներից դիտի աշխարհը: Շատ է աղաչում – պաղատում թռչուններին, որ օգնեն իրեն: Գորտը մի փայտիկ է բռնում բերանով, և երկու թռչուններ էլ, իրենց կտուցներով դրա ծայրերից բռնած, միասին թռչում են վեր: Երբ մյուս թռչունները տեսնում են թռչող գորտին, հիացած զարմանում են: «Ո՞վ է, – ասում են, – այս հանճարեղ միտքը հորինել, ո՞վ հղացավ այսպիսի մի հրաշալի բան»: Գորտն այլևս չի կարողանում դիմանալ այս գովասանքներին, ու բերանը բացելով՝ հպարտորեն աղաղակում է. «Ե՛ս, ե՛ս, ե՛ս», և գետին ընկնելով՝ ջարդուվազուր լինում: Պատճառը մի հրաշք չեղա՞վ, որ հսկա Մովսեսը Խոստացյալ Երկիրը չմտնի: Որովհետև չկարողացավ հրաշագործել առանց արտասանելու այդ անիծյալ բառը. «Ե՛ս, ե՛ս, ե՛ս ձեզ ջուր տամ»: Եվ հիմա դուք ուզում եք, որ ձեզ գաղտնիքներ սովորեցնեմ կամ ուժեր փոխանցեմ, որպեսզի դուք նույնպես հրաշքներ գործեք: Դուք նման եք այն մարդուն, որ ուզում է վիրահատել սովորել նախքան բժիշկ դառնալը:

Վարդանն առյուծի պես պաշտպանում էր իր դիրքերը: Սակայն հարցումների արշավանքը կանգ չէր առնում, և արդեն մոնղոլական հարձակումներ էին սկսել:

– Ես սկսում եմ կասկածել, որ Անանուն Սուրբը գոյություն է ունեցել: Ես քո հրաշքներից ոչ մեկը չեմ տեսել: Այն, ինչ ժողովուրդը պատմում է, կարող են չափազանցաված առասպելներ լինել: Թերևս դու էլ հրաշագործ չես, այլ պարզապես գրույցների արդյունք մի առասպել:

Այսքանն արդեն շատ էր: Մի աղմուկ բարձրացավ վերջին արտահայտության և դրա տիրոջ դեմ: Հասցեատերը

ավագ աշակերտներից մեկն էր: Վարդապետներից շատերն անմիջապես սկսեցին Վարդանին պաշտպանել:

– Ես տեսել եմ, որ նա ի ծնե կույրի աչքերը բացեց, և այդ մարդը դեռ ապրում է Դեղնառատ գյուղում:

– Ես էլ վերջերս խոսել եմ մի մարդու հետ, որ պատմում էր, թե ինչպես է վարդապետն իրեն արթնացրել մահաքնից: Մարդը ծառից ընկնելուց հետո մի ամբողջ շաբաթ քնած է եղել:

– Սրանից վեց տարի առաջ Ամրդոլում համաճարակ էր սկսվել, և երկու միաբան մեռել էին: Վարդապետը հեռու մի տեղ էր գնացել: Երբ վերադարձավ, հավաքեց բոլորիս եկեղեցում և սանձեց հիվանդությունը, որն անհետ կորավ մեր վայրերից:

– Սպասե՛ք, սպասե՛ք մի րոպե, – ասաց Վարդանը՝ ձեռքերը բարձրացնելով: – Դուք խախտում եք «Դատաստանի» մի սկզբունքը: Վախեցնում եք հարցադրողին: Նա իր սրտից անցածն ասաց քաջաբար: Թողե՛ք շարունակի և վերջացնի իր խոսքը:

– Ներողություն՝ն, վարդապետ, եթե ակամա չափն անցա: Նպատակս ձեզ վիրավորելը չէր:

– Վիրավորված չեմ: Մինչև հիմա շատ գոհ եմ հարցումիցդ: Իսկ եթե շարունակես քաղաքավարությունդ, դուրս կնետվես, օրենքները գիտես: Ուրեմն վերջացրու խոսքդ:

– Ամեն ինչ Անանուն Սրբի մասին քո պատմածների վրա է հիմնվում: Ըստ քեզ՝ այս տարի նրա մահվան յոթերորդ տարելիցն է: Մենք թերևս իրավունք չունենք տիրանալ Արքայություն գաղտնիքներին, սա հասկանալի է՝ ըստ քո բերած պատճառաբանությունների: Սակայն դու պնդում ես, որ պատմական իրականություն է Անանուն Սուրբը: Եթե այդպես է, ապա նրա քարայրը այս աշխարհում մի տեղ պետք է լինի, և նրա ոսկորներն էլ պիտի

հանգչեն գերեզմանի մեջ: Եթե այդպես է, մենք կարող ենք այցելել նրա գերեզմանը և վերցնել նրա ճկույթը՝ որպես նշխար: Այս բոլորի ստուգաբանությունը քեզնից իմանալու իրավունքը ունենք, կարծում եմ:

Այս անգամ գնահատանքի ծափահարություններ բարձրացան: Վարդանը փախչելու տեղ չունեի:

– Այո՛, – ասաց, – ձեր իրավունքն է իմ ասածների մասին պատմական փաստեր պահանջելը, որը պիտի ստանաք: Վաղը կգնանք:

Վանքում տոնական մթնոլորտ էր տիրում: Բոլորն ուզում էին գնալ: Բայց Վարդանն ընտրեց միայն ինը հոգու՝ աբեղաներից ու վարդապետներից՝ չորսին, սարկավազներից՝ երեքին և ավագ աշակերտներից միայն Կոլոտին ու հարցադրող Դավիթին՝ որպես վարձատրություն: (Դավիթի անունը ձեռնադրության ժամանակ փոխվեց Եղիայի: Նա Կոլոտի համազյուղացին, տարեկիցն ու դասակիցն էր: Ուշիմ, խելացի, լավ վարքով և հոգևոր ձգտումներով լի օրինակելի աշակերտ ու վանական էր նա՝ ջերմ նկարագրով: Բնականաբար Կոլոտի հետ լավ ընկերներ ու համախոհներ էին: Սակայն Վարդանի մահից հետո նրանց ծանոթ Եղիան հեռացել էր, կարծես մի սատանա էր եկել նրա փոխարեն: Ինչպե՞ս կարող էր մեկն հանկարծ այսքան փոխվել: Ստերով ու ինտրիգներով դարձավ Ամրդուլի վանահայրը:)

Չորս օր տևեց, մինչև հասան ծերունու քարայրը: Գերեզմանի վրա, որպես սիրո դրոշակ, փռված էր Արջ եղբոր մորթին: Այնտեղ մեռել էր հավատարիմ եղբայրը: Հարգանքով մի կողմ դրեցին մորթին: Աղոթեցին, հոգեհանգստի տարելից կատարեցին և սկսեցին ուշադրությամբ և երկյուղով հեռացնել քարերը, մինչև հասան փայտերին, որոնք քարերի անմիջական հպումից մարմինը պահպանելու համար էին դրված: Դուրս եկան՝ մարմինը բացելու գործը

Թողնելով Վարդանին: Վարդանը հուզմունքից լալիս էր: Իջավ գերեզման և սկսեց հեռացնել փայտերը: Բերանից մի սուր ձիչ դուրս թռավ, ու նա գերեզմանից դուրս ցատկեց:

– Մարմինը չի փտել, նույնությամբ մնում է:

Դողը պատեց բոլորին: Նայեցին փոսին. այնտեղ քնած մարդ կար՝ պառկած: Շվարեցին, պլշած աչքերով իրար նայեցին: Հանկարծ քարայրն ամբողջովին լցվեց վարդի անուշահոտությամբ, և մի տարօրինակ ներկայություն զգացին մինչև իրենց ուղնուծուծը: Մշուշի նման մի բան սկսեց շրջել քարայրում: Սկզբում հիացան, ու եղածը նրանց դուր եկավ, բայց հետո դողը պատեց նրանց: Բոլորն էլ, ծնկի իջած, սարսափահար դողում էին: Չէին կարողանում դիմանալ կատարվածի զորությունը: Աղաչում էին Վարդանին.

– Մի բան արա, վարդապե՛տ, որ վերջ գտնի այս վիճակը, այլևս չենք դիմանում:

– Սրբի ներկայությունն է դա: Ձեզ համար եկավ և ողջունում է ձեզ:

– Բավական է այսքան ողջույնը, վարդապե՛տ, թող գնա, թե ոչ՝ կմեռնենք:

– Ո՛չ, ո՛չ, – ասաց կանգնած Վարդանը, – եղբայրս մնալու է, դուք պիտի գնաք, հեռացեք և երեք ժամ անց եկեք:

Բոլորն էլ սահմուկած ու ահաբեկված անմիջապես դուրս խուժեցին ու փախան քարայրից: Ներքև վազեցին մինչև շունչները կտրվելը: Չհասկացան՝ ի՞նչ էր պատահել: Զարհուրեցին կատարվածից, լեզուները կապ էին ընկել: Մեկ ժամ անց միայն սկսեցին միմյանց հետ խոսել: Իրենց քաջությունը հավաքած՝ նորից դեպի քարայրը քայլեցին: Հեռվից տեսան, որ մի լույս էր իջել դրա վրա: Երեք ժամ հետո Վարդանը դուրս եկավ և ձեռքի շարժումով նրանց

իր մոտ կանչեց: Ոչ մեկը պատրաստ չէր ևս մեկ անգամ այնտեղ մտնել: Վարդանը նորից ներս մտավ: Մի ժամ հետո վերադարձավ նրանց մոտ:

– Իր խոստացածի համաձայն միայն ճկույթն էր չորացել: Արտոնեց, որ այն վերցնեմ որպես նշխար: Նայեցե՛ք:

Արծաթյա մի տուփ բացեց Վարդանն ու ցույց տվեց Սրբի չորացած մասունքը: Բոլորը ծնրադրեցին և երկյուղով համբուրեցին Վարդանի ձեռքի սրբատուփը:

– Ես նախկինի պես փակեցի զերեզմանը: Այժմ կարող եք այցելել դրախտային պարտեզը: Եկեք գնանք:

Ցից արահետներից հետո հասան անդնդի ծայրը: Վարդանը սկսեց քայլել միայն մեկ ոտք լայնությամբ գետնի վրայով: Հետ դարձավ ու տեսավ, որ ոչ ոք չէր գալիս իր ետևից:

– Եկե՛ք, սա է դրախտ տանող ճանապարհը:

– Ո՛չ, ո՛չ, – դժգոհեցին բոլորը, – նույնիսկ այծերը չեն կարող քայլել այստեղով: Այսօր արդեն բավականին վախեցանք, նորից չենք կարող ապրել այդ վախը:

Վարդանը վերադարձավ նրանց մոտ:

– Ես էլ կարծում էի, թե շատ եք ուզում լինել այնտեղ, երբ պատմում էի ձեզ:

Բոլորը լուռ էին: Մի քիչ քայլելուց հետո վարդապետներից մեկն առաջարկեց մյուսը փորձել:

– Ուզում ես ասել Գենոսիսի/Գեհենի/ թունե՞լը: Վատ գաղափար չէ, եկեք դա փորձենք:

Նրանց գտածը շատ նեղ մի անցք էր, որտեղով հազիվ մեկ հոգի կարող էր մտնել: Առաջին մտնող սարկավազը ուժգնորեն գոռաց.

– Անցքը փլվել է, առջևումս միայն հող է, առաջ գնալն անհնար է:

Վանք վերադարձան և արդեն բոլորը անառարկելիորեն

ընդունում էին Վարդանի բոլոր ասածները հրաշքի մասին: Նրանք ականատես էին եղել մի իսկական հրաշքի, որ լրիվ փակել էր նրանց ախորժակը հրաշքների նկատմամբ: Ամենքը հասկացել էին սրբության այն մակարդակը, որն ակնկալվում էր հրաշագործից: Սրբության այդ աստիճանը նրանց քարայրից դուրս էր վանել, ինչպես կեղտոտ մուրացկաններին պալատից: Եվ սա կարող էր հասկանալ միայն նա, ով դա ապրել էր: Վարդան վարդապետը երբեք չպատմեց, թե ինչ արեց քարայրում այդ երեք ժամերի ընթացքում: Միայն թե դրանից հետո սկսեց շինել հռչակավոր խաչը, որ տևեց մի ամբողջ տարի:

Ամբողջում Վարդանի նման ուրիշ հրաշագործ վարդապետներ չեղան: Միայն երկու միաբաններ մենակեցության հատուկ արտոնություն ունեցան և ապա գնացին լեռները ճգնելու: Մանուկ և Միհրան վարդապետներն էին, որոնցից երկրորդին մի օր սառելով մեռած գտան վանքի ճանապարհի վրա, իսկ Մանուկը կորավ լեռներում. ոչ ոք չիմացավ, թե ինչ պատահեց նրա հետ: Կոլոտն ու Գրիգորը նրա մասին առանձին հարցրին Վարդան վարդապետին:

– Լեռները Մանուկ վարդապետի^օն էլ Միհրանի նման մեռցրին:

– Ո՛չ, – ասաց Վարդանը խորունկ մի ժպիտով, – լեռները ընդունեցին նրան:



ՄԻ ՈՒՐԻՇ ԹԻԹԵՌՆԻԿ

Երկու ամիս անց, հոկտեմբերի վերջերին, Պոլիսն արդեն բավականին մոտեցել էր: Պարտիզակը կանաչներ հագած նահանգ էր: Աշունը դեռ շատ քիչ էր ազդել շրջապատի վրա: Վաթսուն հազար հայ էր ապրում տարածաշրջանում: Կոլոտն այստեղ հանդիպեց ամենից ավելի հավատացյալ հայերին: Մինչև հիմա սրանց նման եկեղեցուն ու եկեղեցականին կապված շատ քիչ վայրերից էր անցել: Մեկ շաբաթ մնաց այստեղ և վաղ այգաբացին փախչելով փրկվեց նրանցից, քանի որ այլ կերպ ազատվել այս բարեպաշտ մարդկանց՝ իրենց մոտ ավելի երկար մնալու պնդումներից, հնարավոր չէր: Անշուշտ այստեղ կատարեց մեծագույն հանգանակությունը: Վանքի պարտքերի կեսը գրեթե արդեն հավաքել էր և մաս-մաս ուղարկել Տարոնի կողմերը գնացող վստահելի և երևելի անձնավորությունների կամ վաճառականների միջոցով, որոնց տեղի եպիսկոպոսի ներկայությունը գրավոր երաշխիքի փոխարեն հանձնում էր փողը, որպեսզի նրանք հասցնեին Սուրբ Կարապետ:

Կոլոտի ճարտասանությունը հեշտացնում էր դրամահավաքը: Բայց միշտ մի բան անհանգստացնում էր նրան, երբ ամեն անգամ նվիրատվության կոչով դիմում էր ժողովրդին: Որոշ տեղերում նրա առջև հավաքված ժողովուրդն այնքան աղքատ էր երևում, որ հավաքածն ուզում էր բաժանել նրանց: Իր սկզբունքի համաձայն Կոլոտը երբեք քարոզը չէր վերածում նվիրատվության կոչի և քարոզի գաղափարն էլ չէր օգտագործում հանգանակությունը բարձ-

րացնելու նպատակով և ոչ էլ Աստծո խոսքով ջանում էր ժողովրդի սիրտը օժանդակության պատրաստել: Պատշաճ վերաբերմունքը թողնում էր հավատացյալներին: Այս էր պատճառը, որ երբեմն մոռանում էր օգնության կոչով դիմել ունկնդիրներին:

Նա իր առաքելությունը կատարել էր ավելի քան: Հանգանակության համար ևս երկու պատվիրակություն էր ուղարկված. մեկը դեպի Պարսկաստան, իսկ մյուսը՝ Կովկաս: Եթե սրանք էլ պարտքերի մյուս կեսը փակող հանգանակությունը ապահոված լինեին, վանքն այլևս ազատված կլիներ պարտքերից, և ուրիշ խնդիր չէր մնա: Հիմա ճյուղից առաջ կարող էր վերադառնալ Տարոն և վերսկսել դաստիարակչական աշխատանքը, որին անհամբեր էր ու կարոտած: Սակայն իր երազանքների քաղաքին այսքան մոտենալով՝ չէր ուզում առանց տեսնելու վերադառնալ: Նաև հնարավոր էր, որ մյուս խմբերը ձախողած լինեին, և այդ ժամանակ իր առաքելությունը կմնար անկատար: Բացի այդ, միաբանությունը նրան Կոստանդնուպոլիս էր ուղարկել մասնավոր հանգանակության համար: Իհարկե, վանքի գանձանակը քիչ ավելի շատ դրամ մտնելը բալասանի նման էր լինելու, որը նա շատ լավ էր հասկանում: Ներքին մի կռիվ սկսվեց Կոլոտի մեջ՝ առաջ գնալու և վերադառնալու համար: Բայց արդեն իսկ դեպի Պոլիս էր գնում և ահա հասել էր Արմաշ՝ մայրաքաղաքից չորս-հինգ օրվա հեռավորությամբ ու դեռ անորոշ և վարանոտ հոգեվիճակի մեջ էր: Արմաշը հայկական մի գյուղ էր իր գողտրիկ եկեղեցիով: Համայնքի հավատքով տպավորված՝ Կոլոտը ազդեցիկ քարոզ տվեց եկեղեցու մեջ: Ավետարանի օրվա ընթերցվածը «Այրի կնոջ լուման» էր, որն այնքան ազդեցիկ հնչեց, որ մարդիկ իրենց քսակները գրեթե դատարկել էին եկեղեցու գանձանակի մեջ: Եկեղեցու քահանան շատ գոհ

էր արդյունքից, որից լավ բաժին հասավ նաև Սուրբ Կարապետ վանքին: Պատարագի ընթացքում Կոլոտը մի վերջին անգամ սակարկում էր Աստծո հետ՝ առաջ, թե՞ հետ գնալու համար, որովհետև Արմաշը վերադառնալու համար վերջին կայանն էր: Սակայն դժվար էր Աստծո ձայնը լսել իր սրտի աղմուկի մեջ: Ի վերջո որոշեց վերադառնալ Տարոն և հանգստացավ իր այս որոշմամբ՝ չարածճի մի ժպիտ ուղարկելով դեպի երկինք և դիմելով Աստծուն. «Եթե այսօր թևիս վրա մի թիթեռնիկ ուղարկես, միայն այդ դեպքում Պոլիս կգնամ»:

Պատարագից հետո ժողովուրդը կամաց-կամաց ցրվեց, և Կոլոտը եկեղեցուց դուրս եկավ Տեր Հոր ու սարկավազների ընկերակցությամբ: Հանկարծ մեկը ետևից քաշեց նրա վերարկուի փեշը: Շրջվեց, որ տեսնի քաշողին. յոթ-ութ տարեկան սիրունիկ մի աղջնակ էր ժպտերես կանգնած իր առջև:

– Ի՞նչ ես ուզում, հրեշտակս, աղոթ՞ք:

– Ձէ՛, ես էլ եմ ուզում քեզ մի բան տալ:

Կոլոտի ապշած հայացքի առաջ աղջիկը ձեռքը տարավ մազերին, հերակալը հանեց և երկարեց վարդապետին:

– Վերցրու սա, կնքամորս նվերն է, խեղճը մեռավ: Երբ աղոթում էի, Աստված ինձ ասաց, որ քեզ տամ: Դու էլ աղոթիր կնքամորս հոգու համար, շատ լավ կին էր:

Կոլոտը սառել, մնացել էր: Աչքերը անշարժ գամվել էին հերակալին: Այն փոքրիկ թիթեռնիկի էր նման:

– Դե՛ ա՛ռ, ինչու՞ չես վերցնում: Արծաթից է ու շատ թանկարժեք:

Կոլոտն իր ափը մեկնած բացեց ու ապա բարձրացրեց զգայազուրկ վիճակով: Երբ աղջիկը հերակալը դնում էր վարդապետի ափի մեջ, այնտեղ թացություն զգաց: Վարդապետը լալիս էր: Ծունկի իջած Կոլոտը, իր խոշոր ափերի

մեջ ամուր սեղմելով մանկան ձեռքը, համբուրում էր այն ու թրջում առատահոս արցունքներով: Աղջիկը զարմացած էր ու, մյուս ձեռքով շոյելով վարդապետի գլուխը, ասաց.

– Լաց մի լինիր, եթե շատ փողի կարիք ունես, ես էլի ուրիշ բան ունեմ, սպասիր բերեմ:

Կոլոտն այս անգամ հեծկլտալով սկսեց ավելի ուժեղ լացել: Աղջիկը հետ քաշեց ձեռքն ու գնաց՝ իր փողերը բերելու: Կոլոտը, ճակատը գետնին հպած, հոնգուր–հոնգուր լալիս էր: Շուրջը եղողներն էլ այս տեսարանից զգացվեցին: Նրանց աչքերն էլ լցվեցին արտասուքով: Քահանան և սարկավազը, թևերը մտնելով, բարձրացրին այդ լացկան վարդապետին և հովվատուն տարան՝ երեսը լվալու:

Ամբողջ օրը Կոլոտը իր ձեռքում պահեց հերակալը: Երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցում մենակ մնաց, ծնրադրեց դասի մեջտեղում՝ խորանի առջև, վեր բարձրացրեց աջ ձեռքը, բացեց ափը՝ հերակալը բռնած, և արտասովախառն ուխտ արեց.

– Ո՛վ Տեր, եթե դավաճանեմ այս աղջկա հավատին ու վստահությանը, թող աջ ձեռքս չորանա:

Կոլոտը ոտքի կանգնեց: Հերակալն ամրացրեց իր արծաթյա լանջախաչի վերևի ծայրին, ուր հագիվ որևէ մեկը կնկատեր, եթե մոտիկից նայեր:

Աստված իր թիթեռնիկն էր ուղարկել ու այս հրաշքով Կոլոտի ընթացքը Տարոնից դեպի Կոստանդնուպոլիս էր փոխել, որի տված թափով ու քաջալերանքով Կոլոտը երկու օրում հասավ Պոլիս:



ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Կողոտն առաջին անգամ Ստամբուլը դիտեց Սկյուտարի ափերից՝ առաջին իսկ հայացքից հափշտակվելով նրա գեղեցկությամբ: Ծովի հետ ևս նրա առաջին հանդիպումն էր. աստվածային ընդարձակ մի տարածություն, որի անսահման մեծությունը հորիզոնն անկարող էր ընդգրկել: Այս կապույտ անհունի շուրջը դրախտային տեսարաններ էին բացվել՝ իբրև աստվածային և մարդկային հանճարի արդյունք՝ խնամված տներ և ծաղկավետ պարտեզներ:

Առաջին հայացքից սիրահարվել էր վարդապետը իր երազների քաղաքին, ու, եթե մարդկանց աչքերը անաչառ դատավոր լինեին, վճիռը ստույգ էր լինելու. այս քաղաքի դիրքը աշխարհի գեղեցկագույն վայրերից մեկն էր, թերևս առաջինը, որի համար Կոստանդիանոս Մեծ կայսրը Հռոմը լքել ու նոր մայրաքաղաք էր հիմնել այստեղ: Կոստանդնուպոլիսը՝ երկրորդ Հռոմը, առաջինի նման յոթ չքնաղ բլուրների վրա էր հիմնված:

Անշուշտ, ոչինչ նույնը չէ, երբ մոտիկից ես դիտում: Երբ սկսեց քայլել փողոցներով, կախարդանքը հետզհետե վերածվեց իրականության. նեղ փողոցների մեջ ամեն ինչ մարդկային էր՝ բազմություն, աղմուկ, առևտուր, երեսի և հագուստի աղտեղություն, տգեղ մի խճանկար: Հագուստներից կարելի էր տարբերել, թե մարդիկ ինչ ազգի էին պատկանում: Այս դիմացից եկողը մի հույն ձկնորս էր, ետևից եկողը՝ թուրք կրոնավոր, իսկ հեռվից մոտեցող կանանց հագուստը մատնում էր նրանց հայ լինելը: Մոտենա-

լով՝ նրանք ողջունեցին Կոլոտին. «Աստված օգնական, Հայր Սուրբ»: Երկու փոքրիկներ անմիջապես մոտեցան և համբուրեցին վարդապետի ձեռքը: Սկյուտարը քաղաքի ասիական մասում էր գտնվում, իսկ բուն քաղաքը՝ դիմացը, եվրոպական կողմում, դեպի ուր նավակով անցավ նա ու հասավ Գալաթիա նավահանգիստը: Կյանքում առաջին անգամ Կոլոտը, քառասուն ընդամենը թիավարությունից հետո, ոտք դրեց եվրոպական հողի վրա: Հիացավ թիավարի մեքենայական շարժումներով, որն այնքան հեշտությունաբարձրում էր նավը՝ առանց հոգնության դուլգն ինչ նշան ցույց տալու: Հանգստացնող ճամփորդություն էր, թոքերի և աչքերի համար իսկական տոնական մի խրախճանք:

Կոլոտը գրպանից հանեց հասցեների տետրակն ու իր բաղիչեցի հեռավոր ազգականներից մեկի խանութի հասցեն փնտրեց: Գալաթիան վաճառականական կենտրոն մի թաղ էր, ուր դժվար չեղավ գտնել երկաթավաճառ Արթին Էֆենդիի խանութը: Նրա տունը Սամաթիայում էր գտնվում, ուր մի քանի օր նա հյուրընկալվեց: Կոլոտի հասցեատետրում նշված էր սամաթիացի երեւելի մի անձնավորություն անունն ու հասցեն ևս:

Սեբաստիացի Մահտեսի Գասպար Դպիրն էր, որի հետ ծանոթացել էր Սուրբ Կարապետ ուխտի եկած ժամանակ: Կոլոտը մեծ հաճույքով ընկերակցել էր նրան ու ցույց տվել շրջակայքը: Ուստիև այս իմաստուն մարդու հետ երկար զրուցելու հնարավորություն էր ունեցել:

Հիսնամյա ուսումնատենչ մի անձնավորություն էր Գասպար Դպիրը, որը քաջատեղյակ էր եկեղեցական ու ազգային բոլոր խնդիրներին, նաև եկեղեցական ծեսերի ու աստվածաբանության հմուտ գիտակ էր: Կրթությունը ստացել էր Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում որպես վանական, բայց ձեռնադրությունից առաջ ընտանիքին տես-

նելու համար ամռանը քաղաք գնալով, այնտեղ սիրահարվել էր ու ամուսնացել հարուստ մի վաճառականի դստեր հետ: Հետո եկել էր Պոլիս, թղթավաճառությամբ հարստացել և դարձել ազգի երևելիներից մեկը՝ ոչ միայն իր փողով, այլև իր անմրցելի իմացությամբ, ազնիվ նկարագրով և անկեղծ բարեպաշտությամբ: Գիտեր լատիներեն ու ֆրանսերեն, քաջ տեղյակ էր արևմտյան կրոնական գրականությանը: Սամաթիայի Սուրբ Գևորգ եկեղեցու ղարապետն էր և իր շուրջը հավաքված աշակերտների ու համակիրների մի խմբակ ունեւր, որն ազդեցութիւն ունեւր թաղային և համայնքային խնդիրների վրա: Իր առևտրական գործը մեծ որդուն թողած՝ նվիրել էր իրեն ազգային և եկեղեցական կյանքին ծառայելուն: Նրա երազանքը Պոլսում մի վանք հիմնելն ու ազգի համար խոստմնալից եկեղեցականներ պատրաստելն էր: Հետևաբար դժավար չէր կռահել, թե ինչու այսքան շուտ և շատ համակրեցին իրար ու մտերմացան Կոլոտն ու Գասպար Դպիրը:

Երեք օր անց Գասպար Դպիրը Հովհաննես վարդապետի համար տեսակցութիւն էր նշանակել Պոլսո պատրիարք Սահակ Ապուչեղցի վարդապետի հետ, որը հեզաբարո մի անձնավորութիւն էր և հռչակված էր իր խաղաղասիրությամբ և հանդարտությամբ:

Ասում են, որ որոշ մարդկանց բարութիւնը երեսից է երևում. դրանցից էր Սահակ Պատրիարքը, որի դիմագծերը անմիջապես կարգաց Կոլոտն ու հասկացավ, որ կարող էր վստահել այդ մարդուն, որի շուրթերը օծված էին բարի մարդկանց ժպիտով:

Պատրիարքը ընդունեց նրան իր առանձնասենյակում կեսօրվա ճաշից հետո՝ արևելյան մի մահճակալի վրա իր գեր մարմինը հանգիստ փռած: Կոլոտին սուրճ խմելու էր հրավիրել, որը գավառացի օտար մի վարդապետին ցույց

տրված առանձնահատուկ մի շնորհ էր: Պարզ է, որ Գասպար Դպիրը հույժ գովաբանել էր Կոլոտին Պատրիարքի մոտ:

– Երկար ժամանակ է, որ Գասպար Դպիրից չեմ լսել այսպիսի գովասանքներ որևէ կրոնավորի մասին, որ արեց քո հասցեին: Գոհ եմ քեզ հետ ծանոթանալու համար, տղա՛ս: Ինչպե՞ս կարող եմ օգնել քեզ և ինչո՞վ գոհացնել:

– Պոլիս եկել եմ Սուրբ Կարապետ վանքի համար հանգանակություն հավաքելու, Պատրիարք հայր, – ասաց Կոլոտն ու, իր հանձնարարական թղթերը ներկայացնելով, շարունակեց, – վանքը բավականին դժվար օրեր է անցկացրել, և արդեն մի քանի տարի է աշխատում ենք մեր ուժերով ոտքի կանգնել, բայց անհնար է այլևս տնտեսական ինքնաբավարարություն ձեռք բերել մեր միջոցներով: Մայրաքաղաքի և Զերդ ամենապատվության օգնությունն ու նեցուկին ենք կարոտ: Դժբախտաբար մեծ երկրաշարժից հետո անկարելի եղավ ուղղել մեր տնտեսությունը:

Պատրիարքը հանկարծ տխրեց, մի կուժ սուրճ ըմպեց, դժգոհ ձայնի բացասական շեշտով ասաց.

– Անշու՛շտ, կուզեի օգտակար լինել, սակայն այսօրվա ամենադժվար գտնվող բանը դրամն է: Հենց այս շաբաթ, գիտե՞ս, թե քանի՛ վարդապետներ դիմեցին՝ իրենց վանքի համար օգնություն խնդրելով, բոլորին էլ մասամբ օգնեցի: Սակայն, բնականաբար, մեր կարողություններն անհուն ու անսահման չեն: Այլևս ամաչում եմ ամիրաներին ու ժողովրդին դրամի համար անընդհատ դիմել:

Պատրիարքը կրկին թթվեցրեց դեմքը, մի պահ կանգ առավ, մի կուժ խմեց սուրճից, հետո ձեռքը տարավ փեշի տակ և մի քսակ հանելով՝ երկարեց Հովհաննես Կոլոտին:

– Ա՛ռ սա, գիտեմ, որ քո ակնկալածից շատ հեռու է այս գումարը, սակայն քեզ դատարկաձեռն ուղարկել չեմ ու-

գում: Այս հարցում Գասպար Դպիրն էլ, անշուշտ, քեզ օգտակար կլինի:

Կոլոտի դեմքն էլ ակամա կախ էր: Նրա ակնկալածն, անշուշտ, այս մեկը չէր. ինքն իրեն վիրավորված էր զգում՝ այս վիճակի մեջ ընկնելով: Պատրիարքը հասկացավ, որ Կոլոտի հոգեվիճակը խախտվեց իր բացասական կեցվածքի պատճառով: Այնուամենայնիվ, անհնար էր իր պաշտոնի բերմամբ բոլորին գոհացնել: Նրա «պաշտոնի» անբաժանելի դառնություններից մեկն էր «ոչ» ասելը, երբ անհրաժեշտ էր:

Պատրիարքարանի տնտեսական ներկա վիճակը հարմար չէր խոշոր գումարով օգնություն հատկացնել, հետևաբար վարչական իրականությունը պարտադրում էր իրեն «ոչ» ասել: Ուզում էր գրույցի ուրիշ թեմա բանալ, որպեսզի թե՛ իր և թե՛ հյուրի տրամադրությունը փոքր-ինչ փոխվեր: Ոտքից գլուխ տնտղեց Կոլոտին: Մի հարց ծագեց Կոլոտի լանջախաչից բռնկված:

– Այդ ի՞նչ զարդ է լանջախաչիդ վերի ծայրին հաստատված: Այսպիսի բան չեմ տեսել, տարօրինակ է: Մոտեցիր նայեմ: Թիթեռնիկի է նմանվում:

Կոլոտը, վեր բարձրացնելով խաչը, ցույց տվեց Սահակ Պատրիարքին:

– Արծաթե հերակալ է սա, փոքրիկ մի աղջկա նվերը:

Կոլոտը ժպտաց: Հոգին թարմացավ կրկին փոքրիկ աղջկա հիշողությամբ ու պատմեց թիթեռնիկի մասին՝ աչքերը փայլեցնելով:

Երբ պատմությունն ավարտեց, Կոլոտը նկատեց, որ պատրիարքի աչքերը տամկացել էին ու մի գորովալից լույս էր ընկել դեմքին: Վարչական գործերի տակ կքած այս մարդու մեջ հանկարծ արթնացել էր հավատի ջերմությունը: Ոտքի կանգնեց, Կոլոտի ուսին խփեց հայրա-

բար ու ժպտաց բարի մարդկանց անամպ ու անբասիր ժպիտով:

– Սա մի հրաշք է և կյանքումս լսած ամենից գողտրիկ պատմություններից մեկը:

Պատրիարքը մտածկոտ այս ու այն կողմ քայլեց սենյակում՝ ձեռքերը ետևում միացրած:

– Աստված սիրում է քեզ, Հովհաննես՝ս վարդապետ, և հետաքրքրվում է քեզանով: Ես էլ Գասպարի նման սիրեցի քեզ, հետևաբար պետք է օգնենք քեզ, բայց ինչպե՞ս, ինչպե՞ս:

– Պատրիարք հայր, իսկապես չեմ ուզում Ձեզ նեղություն տալ կամ բեռ լինել: Վստահ եմ, որ առատաձեռնորեն կօգնեիք մեր վանքին, եթե կարելի լիներ: Եթե ինձ առիթ ընծայեիք ծանոթանալ մայրաքաղաքի երևելիների հետ, ես անձամբ վարժ եմ հանգանակություն կատարելում:

– Այս կիրակի արքունի ճարտարագետ Սարգիս Խալֆայի հոր մահվան քառասունքի հոգեհանգիստը պիտի կատարվի Մայր եկեղեցում: Նա մեր համայնքի ամենից ազդեցիկ անձանցից մեկն է: Գրեթե բոլոր ամիրաներն ու ազգային երևելիները ներկա են գտնվելու կիրակնօրյա Սուրբ Պատարագին: Այս կիրակի դու պատարագիր և քարոզիր: Տեր Տարոն ավագերեցին էլ կպատվիրեմ, որպեսզի հատուկ մի պնակ դնեն եկեղեցու մուտքի առաջ՝ Սուրբ Կարապետ վանքի համար:

Երբ Կոլոտը դուրս եկավ, դեմքը ուրախությունից կարմրել էր: Դեկտեմբերյան խստաշունչ ցուրտը արդեն զգալի իշխում էր քաղաքի վրա, ու քամին կծում էր՝ մաշկը ցավեցնելու աստիճան, բայց երբ Կոլոտը դուրս եկավ, նույնիսկ չզգաց ցուրտը, որովհետև նրա հոգում հրդեհի մի պար էր բռնկվել ու այրում էր անուշ մի ուրախությամբ և խանդավառությամբ: Խորությամբ շնչեց ցուրտ օդը թո-

Քերից ներս, լանջախաչը բռնեց ու համբուրեց երախտա-
գիտուլթյամբ: Թիթեռնիկը կրկին կենդանացավ նրա մեջ ու
սկսեց ցնծագին թռվուսլ հրդեհի շուրջը:



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս Ա Հրով մկրտվածը

Երկու ճամփորդ	9
Թիթեռնիկը ի՞նչ է ասում	16
Ուրիշ մի թիթեռնիկ ևս	20
Վանքի ճանապարհը.....	30
Տրաշքի պրուդը	38
Տուշեր Վարդան վարդապետի մասին.....	45
Եղիայի մենամարտությունը.....	55
Լեռների սիրահարը.....	67
Տարցումների հարցումը.....	73
Կյանքից Կյանք.....	84
Տիվանդ հրեշտակի պարը.....	97
Սուրբերը միշտ սո՛րբ են.....	104
Մի վերջ, որ մի սկիզբ էր.....	116

Մաս Բ Ըջմարիտ աշակերտները

Մի նոր պարտուհան.....	125
Վանական կյանք.....	135
Բնության խոսքը.....	141

<i>Երկրաչարժի փագնասյր</i>	148
<i>Նոր ուղիներ</i>	157
<i>Դեպի մայրաքաղաք</i>	162
<i>Մի ուրիշ թիթեռնիկ</i>	174
<i>Մայրաքաղաքում</i>	178

Խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան



Մահակ վարդապետ Մաշայան

(ծնվ. 1962 թ.)

Կոստանդնուպոլսի աթոռի միաբան: Իր փիլիսոփայական և աստվածաբանական բարձրագույն կրթությունը ստացել է Կ. Պոլիս, Լոնդոն, Դուբլին քաղաքներում:

Երկար տարիներ ծառայել է Երուսաղեմում և Կ. Պոլսում:

Այժմ հանդիսանում է Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի փոփոխության ինչպես նաև դասավանդում է նույն ճեմարանում և Վազգենյան դպրանոցում: